

ԴԱՎԻԹ ԲԵԿ

ԿԱՄ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՂԱՓԱՆՅՈՅ



ՂՈՒԿԱՍ ՍԵՔԱՍՏԱՅԻ

ԴԱԿԻԹ ԲԷԿ
ԿԱՄ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՂԱՓԱՆՅԻՈՅ

Բնագիրը՝ Հ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐԱՄԵԱՆԻ

9(47.925)

Մ-33

ՂՈՒԿԱՍ ՍԵՔԱՍՏԱՅԻ

ԴԱԿԻԹ ԲԷԿ
ԿԱՄ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՅԻՈՅ

Թարգմանությունը և առաջաբանը
ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆԻ

Հրատարակության և պատրաստել Ա. Գ. Մադոյանը
 հմբագիր՝ Ռ. Ս. Ղազարյան

Ղուկաս Սեբաստացի. Դավիթ-Բեկ կամ Պատմութիւն դափանցոց.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1992.—112 էջ:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Սեբաստացու պատմությունը նվիրված է 18-րդ դարի առաջին երեսնամյակի ազատագրական շարժումներին:

0503020913
 Ս 704 (02)—92

ԳՄԴ 63.3(2Հ)43

ISBN 5—8084—0186—0

ГУКАС СЕБАСТАЦИ
 ДАВИД-БЕК ИЛИ ИСТОРИЯ КАФАНЦЕВ
 Издательство Ереванского университета
 (На армянском языке)
 Ереван — 1992

© Երևանի համալսարանի հրատարակչություն, կազմելու և պատշաճանի համար, 1992

ԱՌԱՋԱԲԱՆ

Ղուկաս Ստեփանոսյան Սեբաստացին (1709—1752) մեկն էր Վենետիկի Մխիթարյաններից, որոնց կյանքն անցնում էր ամենօրյա գիտական պարապմունքներով: Նրա երկերից մասնավոր հետաքրքրություն պիտի ունենա «Համառոտ պատմություն թագաւորացն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի և Աշխարհագրական բառարան» սովորաշխատությունը, որ դեռևս անտիպ է և, դաստեղծ եղած տեղեկություններից, հանրագիտական բնույթի է: Այստեղ, իմիջիպէս, Ղուկաս Սեբաստացին մեկ անգամ ևս համառոտակի անդրադառնում է Կասպանի կամ Սյունիքի ապստամբությանը, նկատելով. «Այս ամէն տեսցես ի համառոտ պատմութեան, զոր գրեցաք»,— ակնարկելով մեզ զբաղեցնող Պատմությունը: Պակաս կարևոր չէ, որ նա 1737 թ., հավանաբար Պատմության շարադրանքը պատրաստելուց հետո, կազմել է նաև Դավիթ Բեկի մարտերի քարտեզը¹:

Ղուկաս Սեբաստացու աշխատությունը ԺԸ դարի հայ ազատագրական շարժումների ամենանշանակալի երևույթներից մեկին է նվիրված և վերաբերում է այդ հարյուրամյակի 20-ական թվականներին, երբ Հայաստանը հեծում էր օտար զավթիչների լծի տակ, նրա արևելյան հատվածը Պարսկաստանի տիրապետության ներքո էր, արևմտյանը՝ թուրքական բռնատիրության:

1720 թ. աֆղանների ապստամբությունը ցնցեց ամբողջ Իրանը, վերջ տալով Սեֆյան հարստությանը: Օգուվելով պատեհ իրավիճակից, Սյունիքի տանտերերն ու իշխան-

¹ Ղուկաս Սեբաստացու կյանքն ու գործունեությունը բավական հանգամանորեն ներկայացված են «Բազմալէսպ» հայագիտական մատենաշարի ԺԲ գրքում. «Դավիթ Բեկ կամ Պատմութիւն Ղափանցոց», Հառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանօթագրութիւններ. Աշխատասիրեց հ. Սամուէլ Արամեան, Վենետիկ—Ս. Ղազար, 1978, էջ 183—194: Քարտեզը՝ 48—49 էջերի միջև, ներդիր:

ները որոշեցին գործնական քայլերի դիմել իրենց վարենի ազատագրական ձգտումներն իրականացնելու ուղղությամբ: Սակայն նրանց դեմ մեկից ավելի թշնամիներ կային: Տեղացիներին մեծամեծ վնասներ էին պատճառում Սյունիք թափանցող թրքախոս քոչվոր ցեղերը, պարսկական կողոպտիչ խաներն ու բեկերը, ռազմականական Ակրոտումներով ժամանակ առ ժամանակ երկիրն ասպատակող թորք փաշաները: Արանք երբեմն աշակցություն էին ստանում մահմեդականությունը քննարկում ևնդացի որոշ մեծահարուստներից:

1722 թ. ամռանը ռուսական զորքերը Ասորիսանից շարժվեցին դեպի հարավ և առանց մարտերի գրավեցին Կասպից ծովի արևելյան ափերը՝ մինչև Գիլան: Դա նոր հույսեր արթնացրեց Կովկասի քրիստոնյաների, հատկապես արցախցիների շրջանում, նորովի գոտեպնդելով ու ոգևորելով՝ էլնելու օտար զավթիչների դեմ: Հետագայում Իվան Կարապետը՝ «բարոն գրաի Գավրել Իվանիչ Գոլովբիցին» հղած նամակում հիացմունքով գրում էր՝ Ակառի ունենալով Արցախի հայությունը. «Էսպես կոտարար խաղը որ էս տեղ կայ, ոչ ինչ տեղ կայ»²: Բայց հայությունն այս հարցում հիասթափություն էր սպասում:

Հաջորդ տարին արդեն նշանավորվեց Սյունիքում հայկական անկախ իշխանության հաստատումով: Հետագա պայքարը նորանոր հաջողություններ բերեց Դավիթ-Բեկին և իր զինակիցներին:

1725 թ. գարնանը օսմանյան բանակի զորամասերը մտնեցան Սիսիանի ու Կասպանի բարձունքներին և պարտություն կրեցին: Նրանք մեծ ուժերով պաշարեցին Դավթի ամրոցը՝ Հալիձորը: Այստեղ, ինչպես հայտնի է ուրիշ աղբյուրների վկայությունից, վերստին փայլել է գորավարի տաղանդը. նա դիմել է մարտավարական հնարամտության. «Ուներ Դավթի յամրոցի անդ իրում մատակ ձիս իր վաթսուն՝ փոքր ինչ անելի կամ պակաս: Չտեսա անեալ Դավթի և արանց նորս՝ արձակեցին զանխոլ ի գիշերի ի բանակ այլազգեսն. Եւ քանզի բազումք յերիվարաց անտի այլազգեսն մատու-

² Գ. Ա. Յոզ, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, с. 426.

կախանձք էին, ի դիմել մատակաց ի բանակ անդր, անհնարին խխնջինք և կատարությունք նոցին լցին շիրտութեամբ զխորանս նոցա, և բազումք յերիվարաց անտի խզեալ զբանդանաւանդս և գերասանակս իրեանց, և սաստկութեամբ յարձակեալ՝ կործանեցին զբանի մի վրանս, և կիցս արձակելով սպանին զոմանս. և յաղաղակել պահապանաց և համայն զօրացն՝ անկաւ աղմուկ ի բանակի անդ»³: Նույն տեղեկությունը ավելի ամփոփ հաղորդում է Մ. Մաղաթ-Թեոփիլյանը: Տեսնենք նաև նրա պատմածը, թեև չի բացատրում, որ նա օգտված լինի Մ. Չամչյանից. «Եւ յայնժամ Դավթի ձեռն էարկ ի նոր հնարս ազատելոյ ի նոցանէ: Ուներ առ իր զվաթսուն մատակ երիվարս. և զի գիտէր թէ այլազգեսն էին առհասարակ որձք մատակախաղք, արձակեաց զմատակս իր ի բանակ սոցա. և ի խառնիլ ձիոցն, անկաւ շիրտություն մեծ յայլազգիս. և յայնմ պահո յարձակեալ ի վերայ նոցա Դավթի, ցիրևցան արար զնոսա, և բազում արարաւ եմոս յամրոցն»⁴:

Հալիձորում յոթ օր դիմադրելուց հետո, գիշերով Դավթի թը դուրս է գալիս բերդից: Հայ բաշագունները հալածում ու դուրս են շարտում թշնամու գերագանց ուժերը: Պակաս տպավորիչ չէր և Մեղրիի անկատամարտի վախճանը:

Կասպանի մարտիկների համար մեծ աշակցություն էին, անշուշտ, Արցախի մելիքների ազատագրական կոնվները, որոնք ի վերջո հաջողությամբ պակվեցին: Արցախի ազատամարտիկները ուշի-ուշով հետևում էին Կասպանի կոնվներին, ուրախանում այդ հաջողություններով և օգնության ձեռք մեկնում հարկ եղած ժամանակ:

Անհկում, անընկճելի էին Արցախի և Կասպանի հաշտեանները: Հայ ազատագրական մտքի խոշորագույն դեմքե-

³ Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, Կ. Պ, Վենետիկ, 1784, էջ 796—797: Հմմտ. նաև՝ «Համառոտութիւն պատմութեան Հայոց սկսեալ ի նախնոցն Հայկաչ մինչև ցարուս Դուկասու սրբազան կաթողիկոսին, ցամ Տեառն 1784 և Հայոց ՌՄԴԹ, բովանդակեալ ի վեց գիրս, Աշխատասիրեալ Զմիտնացի Յովհաննու Մելիք-Սելիմեանց, յարուս Յովհաննէս սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց յամի Տեառն 1829, ի սուրբ էջմիածին. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 2888, թղ. 337ա:

⁴ Մ. Մաղաթ-Թեոփիլեան, Կենսագրութիւն երևելի արանց, Կ. Ա, Վենետիկ, 1839, էջ 185:

ինց մեկը՝ Հովսեփ Էսինը, ԺԸ դարի վերջերին խոսելով դարակարի անցողիքների մասին, իր ժամանակակիցներին ոգևորելու համար հիշեցնում էր սյունեցիների օրինակը։ «Հովսեփ Էսին. Իր կյանքն ու արկածները» գրքում նա նշում էր, թե լեռնաբնակ հայերը «ազատ էին և իրենց մանկությունեն իսկ գեներ կը գործածեին»⁵։

Արցախի և Կապանի իշխանները նախորդ դարի սկզբներին արդեն կարողանում էին պաշտպանել իրենց իրավունքները։ Եվ հաջորդ դարի երրորդ տասնամյակի նրանց մաքսաման արդյունքը եղավ այն, որ 1736 թ. Նադիր շահը հայ մելիքներին, Վրաստանի թագավորի նման, ճանաչեց կալիներ (կուսակալ, նահանգապետ)։ Մելիքը (իշխան, տեր, թագավոր) հարկատու էր անմիջորեն շահին և ինքն էր երկրամասի ժողովրդի տերն ու առաջնորդը, ինքն էր իրագործում երկրի վարչական, իրավաբարական, ինչ-որ չափով՝ նաև օրենսդրական կառավարումը։ Մելիքի իշխանությունը ժառանգական էր. հոր մահից հետո մելիք էր դառնում ավագ որդին, իսկ նրա մյուս եղբայրները կոչվում էին բեկ։ (Այս հարցերի մասին հանգամանորեն խոսում է Ռաֆֆին «Խամսայի մելիքությունները» մեծարժեք ուսումնասիրության մեջ)։

Դավիթ-Բեկի Պատմության հեղինակը միշտ չէ, որ ցանկալի խորությամբ ու մանրամասներով է ավանդում ԺԸ դարի բախտորոշ եղելությունները։ Իր երկի հենց սկզբում, օրինակ, խոսելով Արցախի ապստամբների մասին, նա գրում է. «Եւ թէ ո՞րպէս հարին վանեցին թէ զվազկին, թէ զՊարսիկն եւ թէ զՕսմանցին՝ ոչ ունիմք գրել. այլ միայն զխմբելոյն Հայոց յեթնաբերդեան գաւառին Ղափանու եղելոցն ձեռն արկանեմք պատմել»։ Ըստ երևույթին նա այդ հարցերի լուսաբանումից հրաժարվում է այն պատճառով, որ տրվելու անցողիքների մասին նա իրեն պատմել են Ստեփանոս Ծափումյանը, տեր-Ավետիսը և մյուսները, չլինելով անմիջական մասնակից կամ ակնմատես։ Այսինքն՝ Սեբաստաջանի ի տարբերություն Կապանի մարտերի, մյուս կողմերի վերաբերյալ տեղեկություններն ստացած լինելով «երկրորդ

ձեռքից», հարմար չի դառել գրի առնելու։ Այդպիսով նրան հայտնի շատ թանկագին տվյալներ մնացել են չարձանագրված և մատնվել մոռացության։ Բայց այս փաստը ցույց է տալիս Ղուկաս Սեբաստացու գգուշավորությունն ու պահանջկոտությունը, գիտական բարեխղճությունը։ Դա չի նշանակում, թե նրա երկը չունի սրբագրության կարտո տեղիներ (որոնք ըստ կարելիության պետք է ճշտել այլևայլ աղբյուրների հաղորդումների համադրությամբ և ուշադիր քննություններ)։ Սակայն ըստ երևույթին այնտեղ հիշատակված թվականների ճնշող մեծամասնությունը և դեպքերի հաջորդականությունը համապատասխանում են իրականությանը։ Մանր անճշտությունների պատճառն այն է, հավանաբար, որ Ղուկաս Սեբաստացին պատմությունը գրի է առել դեպքերից առնվազն մեկ տասնամյակ անց։ Այդ ընթացքում ինչ-որ բաներ կարող էին աղոտանալ մարդկանց հիշողության մեջ, բայց կար հիմնականը, որովհետև նրան պատմողները ապստամբության անմիջական մասնակիցներն էին, մարդիկ, որոնց դերը բնավ երկրորդական չէր և որոնց մասին խոսք եղավ վերևում (Ստեփանոս Ծափումյան, տեր-Ավետիս և ուրիշներ⁶)։ Սրանցից մեկին՝ Ստեփանոս Ծափումյանին է վերագրվում ապստամբության նախաձեռնությունը, և ըստ երևույթին այստեղ նույնպես մեծ է ճշմարտության բաժինը։

Դժբախտաբար ապստամբության ղեկավար Դավիթ-Բեկի վերաբերյալ կենսագրական տեղեկություններն առատ չեն։ Մասնավոր հետաքրքրություն ունեն նրա ծննդյան և մահվան թվականները։ Առաջինի մասին խոսք չկա Ղուկաս Սեբաստացու երկում, իսկ հերոսի վախճանը դրվում է 1728-ին։ Նույն թվականն է արձանագրել նաև Մ. Մանուկ-Թեոփիլյանը. «[Դավիթ] անկառ հիասերությամբ մահու, որով և մեռա ի Հալիճոր, շամի Տեառն 1728 ի հասակի իբր

⁶ Զ. Ս. Արամյանը ենթադրաբար վերակազմել է ակնհայտես-պատմողներից մեկի ինքնուրույնը։ Դա Հովհաննես անունով երիտասարդն է, որին հետազոտողը հակված է նույնացնելու Դավիթ գորավար երկու Հովհաննեսներից մեկին. Հիշյալ երիտասարդի վեհեթիկ զալու ժամանակը (1736 թվական) ըստ Մխիթարյան միաբանության ժամանակագրության) ևս խոսում է այդ ենթադրության օգտին. տե՛ս «Դավիթ Բեկ կամ Պատմութիւն Պափանցոց», էջ 85 և 114։

⁵ «Հովսեփ Էսին. Իր կեանքն ու արկածները»՝ «Հայրենիք», 1926, 5 ապրիլ։

54 ամաց, վարեալ զիշխանութիւն իր զամս վեց»⁷: Այս վերջին հաղորդումը մեզ հնարավորություն է տալիս ինչ-որ կերպ «ստուգելու» տվյալները. Դավիթը մահացել է Կապան գալու վեցերորդ տարում (1722+6): Եթէ վստահելի է մահվան 1728-ը, ապա Դավիթ-Բեկը ծնված պիտի լինի 1674 թ. (1728—54): Բայց հայագիտության մեջ կասկածի է առնվել մահվան թվականը: «Այն հաճախները,— գրում է, օրինակ, Աշոտ Հովհաննիսյանը,— որ 1726 թ. Մխիթար-Բեկն է ստորագրում ռուս արքունիքին հղված ուղերձը, ինքյան ապացույց է, որ այդ պահին Դավիթ-Բեկը կենդանի չէր այլևս»⁸: Այս և մյուս անանօրինակ ենթադրությունները թերևս դժվար է ապացուցել:

Դավթի և Մխիթարի միջև կարող էին լինել տարածայնություններ, ասեմք, դրսից օգնություն ակնկալելու կամ խնդրելու հարցում: Դավիթ-Բեկն ըստ երևույթին ապավինում էր սեփական ուժերին և աստծու գործությանը: Այդ դեպքում բնական է, որ նա չպիտի ստորագրեր հիշյալ ուղերձը: Եթե՞ հիշենք նաև նրանց գծողությունը, որ հարևանցի ակնարկվում է Պատմության մեջ (երկրորդ գլխի վերջում), կարելի է կուսիել, որ շարժման երկրորդ փուլում, ժողովրդական ասացվածքով՝ «նրանց ջուրը մի սովով չէր գնում»: Հնարավոր է, որ այդ պայմաններում Մխիթար սպարապետը ավելի լայն ազդեցության ոլորտ ձեռք բերեր և 1726-ին, ինչպես վկայում է Թ. Կրուշինսկին⁹, իշխան ընտրվելուց մինչև Դավթի կենդանության օրոք: Այսպիսի ենթադրության օգտին չի՞ խոսում Պատմության վերջաբանը, որ նվիրված է անմիաբանության ճշտակամանը, մինչդեռ բուն երկի մեջ ցույց չեն տրված ո՛չ լուրջ տարածայնություններ և ո՛չ, դրանց վնասակար հետևանքները:

Այսօր մեզ քիչ բան է հայտնի նաև Կապանի ու Արցախի հերոսների տոհմագրությունից: Տեր-Ավետիսի թոռնորդին՝ համաշխարհային հռչակի հասած հայագետ և բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցը, ցավով նկատել է. «Դավիթ-

⁷ Մ. Մազաբ-Փետրիկեան, *Կենսագրութիւն երեկի արանց, էջ 185*:

⁸ Ս. Հովհաննիսյան, *Դավիթ-Բեկի դիւանդորած Ղափանի ապստամբութիւնը. «Բանբեր Նրևանի Համալսարանի», 1970, թիվ 1, էջ 106*:

⁹ Ս. Հովհաննիսյան, *նշվ. աշխ., էջ 106—107*:

Բեկի զինակիցները՝ թվով քառասուն, անհայտ են մնացել իրենց ծառանգներով: Բացի մելիք-Փարսադանից, միայն Տաթևի երկու գորավարների սերունդն է ցայժմ հայտնի: Դրանք են՝ Ղիշի և Այտին (Գիշի և Այդին): Գիշունց և Այինունց»¹⁰: Կարծում ենք այս տեսակետից կարևոր է Դավթի գորավարների՝ Պատմությանն կցված ցանկը (տե՛ս), որ կազմված է Ղուկաս Սեբաստացու ձեռքով:

Դավիթ-Բեկի ապստամբությունը շատ նշանակալից երեվույթ էր հայ ժողովրդի կյանքում, ուստի բնական էր ըստպատել լայն արձագանք: Սերունդներն իսկապես անդրադարձել են դրան, աշխատել գրի առնել ու փրկել մոռացումից ապստամբության մասնակիցների, ժամանակակիցների հիշողությունները: Առանձին հետաքրքրություն ունեն այդ՝ դեպքերի արձագանքները հայության ամենալայն զանգվածների մեջ: Ժառ հաճախ հարևան կամ հեռավոր գավառների հայերը միմյանց ուրախացնում էին Այունիքից առած կցկտոր լուրերով, մերթ ցանկալին ևս ներկայացնելով իբրև իրականություն: Այդ լուրերը երբեմն կանխում էին բուն իրադարձությունները, և դրանց հաջորդում էին ապրտամբների հաջողությունները: Այդ տեղեկություններն ու գրույցները ամենից ավելի պերճախոս ցուցադրումն են ԺԸ դարի 20-ական թվականների հայության հուսավատ ու ըստստողական վիճակի, տիրող մթնոլորտի անաղմատ հայելին են:

Որոշ փաստերից երևում է, որ հայերն ուզում էին Դավթին թագավոր կարգել և օծել: Այն օրերին գրված շատ անասկներում խոսվում էր այդ մասին՝ իբրև արդեն իսկ կատարված իրողության: Հ. Ս. Արամյանն իր հրատարակության մեջ ամփոփել է ս. Ղազարի դիվանատանը պահվող բազմաթիվ վավերագրերի համապատասխան հատվածները՝ կապված 20-ական թվականների ազատագրական շարժումների հետ: Այդ նյութի մեջ են նաև Մխիթար Սեբաստացուն ուղղված շատ գրություններ (տե՛ս «Արձագանքներ Դավիթ Բեկի պատերազմներում ս. Ղազարի Մայր դիվանեն» բաժինը): Այդպիսի մի վավերագիր է Թովմաս վ. Սե-

¹⁰ «Բաճճի (Յակոբ Մելիք-Յակոբեան). *Կեանքը, գրականութիւնը, լի-շողութիւններ» (ժողովածու), Փարիզ, 1937, էջ 160*:

բաստացու 1722 թ. հոկտեմբեր 22-ի նամակը, գրված Սեբաստիայից. «Ի Սպահանու անդր Փարսկեզն շարեալ ի վերայ Շահին և այլ ուրիշ տաճկի Լեկզի անուանեցեալ շուրջ զԿէնճեյու շարեալ պատերազմաւ, տիրեալ է ի մօտ ժամանակիս, բայց յետոյ ոմն իշխանագարս յազգէն Հայոց 4.000 զօրօք կոտորեալ է Լեկզին անդէն, յետոյ Մուկոֆն մեծաբազմութեամբ եկեալ է զՓարսկեզինն նսանեալ: Չիշխանն Հայոց ի թագաւոր օծեալ է, իսկ արքայն Պարսից հանդերձ հնազանդելովք քրիստոնէայս արարեալ է, և զայլ բազում բանս լսեն, յորմէ տաճիկն ի Գարմանս ի կողմ Շահաստանու պատերազմ առնելոց»¹¹: Գրեթէ նույնը Մխիթար Սեբաստացուն հաղորդում էր Միքայել վարդապետը 1725 թ. նոյեմբեր 27-ին, Կոստանդնուպոլսից: Այս առնչությամբ հատկապէս կարևոր է Գարեգին Սրվանձտյանցի գրառումը. «Սյունաց աշխարհը և Շուշի քաղաք» հոդվածում: Այս լեռնաշխարհի բնակիչները, ասում է մեծանուն գրագետը, — «իրենց միամտության հետ ունին և վեհ սիրտ... իրենց գլուխը միշտ սեզ պահեր են: Պարսկին կատաղի և ամբարիշտ բը[n]նության ժամանակը դարձյալ Սյունիք կվայելեր ու կվարեր իշխանություն, փառք, մեծություն, և այս Սելիքություն էր: Այս աշխարհեն էր այն երևելի հաղթող քաջ զորապետն Ռուսաց Մատաթով: Այս աշխարհի Հայն էր, որ իբր հարյուր երեսուն տարի հառաջ փոքրիկ խումբ մը կազմած և իբրև թագավոր կկովեր Հայրենի ազատության վերայ: Հիշեցեք Դավիթ Սյունեցին»¹²:

Բնավ պատահական չէր, որ Դավիթ-Բեկի ապստամբությունը լայն արձագանք գտալ առհասարակ ամբողջ Հայաստանում, հաչարենակ բոլոր վայրերում: Վերոհիշյալ նամակներին համահունչ բազմաթիվ գրություններ են ստացվել Վենետիկում Պուլսից ու Կարիսից, Էնկյուրիից ու Ամասիայից, Զմյուռնիայից ու Ախալցխայից: Մխիթար անունով ոմն արեղս ԺԶ դարի մի ձեռագրի մեջ 1722 թ. կարևոր գրառում է կատարել Վանս լճի Լիմ կղզում տեղի ունեցած հանրածողովի մասին, որի մասնակիցները հավանաբար Վասպուրականի ու շրջակայքի իշխանավորներ էին: Նա վկա-

չում է, որ ոչտուցի «քաջահամբաւ և արիասիրտ» վարդապետ Ներսեսը ժողովրդին ներկայացրել է համայն հայության «դառնակակիծ» վիճակը և ցնձագին տեղեկացրել. «Այր մի [յ]երկրէն Սիւնեաց Դավիթ բէկ անուանեալ զորաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ ներիշք և կըշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելոյ արիւնաձուփ գաշխարհն Հայաստան: Արդ, ո՛վ բարեմիտ և հաչրենապաշտ ժողովականք, շրջեցէք գաւառս և կողմանս յերկրին ձերոյ, խրախուսեցէք ժողովուրդք ձեր, որ մրափեալ է ի խոթխասարի և տանջանաց, զի թոթափեցեն զլուծ անիրաւաց բռնութեանցս, և յորժամ մեր առաքեացոք զհրաւեր մարտի, քառնան ձայն ապստամբութեան ընդդէմ մարդակեր և խաչահալած թշնամեաց մերոց»¹³:

Սյունիքի ազատագրական շարժումների գրական արձագանքներից ուշագրավ է տեր-Ավետիսինն նվիրված ուսանավորը՝ «Ի Սահակէ» բանակապով: Երբ տեր Ավետիսը սասարեզից հեռացել էր, շատերը նրա հայրենի գավառից խնդրում էին հերոսին վերադառնալ և շարունակել պայքարը: Սահակ քահանայի ոտանավորը նույնպես սրա արտահայտությունն էր, ուր հիշելով տեր Ավետիսի որոշ արխանքներ և դիտելով, թե «ազգն տաճկաց» ասքսում է քաջ հոգևորականից, որովհետև հաղթել է նրանց զորքերին, հեղինակը հորդորում է վերադառնալ կովի սասարեզ:

Կան նաև ավելի ուշ շրջանում արձանագրված վկայություններ: Ժամանակի ամենակույ երախից, ինչպես տեսնում ենք, քիչ բան է փրկվել ու հասել մեզ: Եվ այդ քչի մեջ իր ծանրակշիռ բաժինն ունի Դուկաս Սեբաստացու Պատմությունը, որ Սյունիքում ծավալված իրադարձությունների վերաբերյալ գլխավոր սկզբնաղբյուրն է:

Դուկաս Սեբաստացին քաջառնեղյակ է հայ պատմագրությանը: Նրա երկն ընդհանուր առմամբ հարազատ է հայ մատենագրության ավանդներին, ավելին, երբեմն թվում է, թե նա աշխատել է առաջնորդվել դասական պատմիչների սկզբունքներով, նույնիսկ՝ դարձված-կաղապարներով: Նա սիրում է խոսքի իմաստը խոսացնել հոմանիշների կրկնակ

¹¹ «Դավիթ Բեկ կամ Պատմութիւն Ղափանցոց», էջ 95:

¹² Գ. Սրվանձտյանց, Երկեր, 4. 2, Երևան, 1982, էջ 69:

¹³ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.) 1941, թիվ 5—6, էջ 71—72: Ընդգծված տողը ձեռագրում գրված է կարմրադեղնով:

(և ավելի) գործածությամբ, ինչպես՝ կազմեցան պատրաստեցան, հանեցան հավանեցան, երդմուն երդուան, հատույց գհատուցումն և այլն: Ընթերցողը առիթներ ունենում է համարանությամբ հիշելու հատկապես Ե դարի հայ պատմագրության ինչ-ինչ դրվագներ: Հեղինակի գրչի ամենաշքեղ դրսևորումներից է Հայիծորի մարտի պատկերը, որ հեռավոր աղերս ունի թերևս Մովսես Խորենացու մի նկարագրության հետ: «Իսկ պահապանք պարսպացն, — գրում է Ղուկաս Սեբաստացին, — ի վերուստ անտի հարեալ գնոսս՝ ի մեքեմայիցն՝ ի վայր թօթայիէին, եւ բազմութիւնն գէշագէշ անկելոց նոցին, իբր վաղահասունն թոյլ հարեալ ի սաստկութենէ կարկոտի՝ գչատակս մեքեմայիցն ծածկէին»: Բերթողահայրը (Խոր., 9, 10), երբ պատմում է Արշակունի Վարազդատ թագավորի (374—378) սիրանքները, գրում է. «...ի բերդ ինչ դիմեալ, ի վերայ պատուարին եօթնասան այր նետիք հարեալ՝ վերուստ ի վայր հոսեաց միմեանց զկնի, իբր ի սաստիկ իմն մրրկէ վաղահասուն թգեմեաց (տրք. թգեմից)»:

Բայց պատմագրության (մատենագրության) հետ այսպիսի կապը կարող էր արտահայտվել նաև ենթագիտակցորեն՝ իբրև լավատեղյակության հետևանք: Նույնպիսի աղերսներ կարելի է տեսնել և բանահյուսության հետ: Ժողովրդական վեպի նման, այստեղ ևս գլխավոր հերոսներն ընկնում են ո՛չ թշնամու ձեռքով: Նրանցից մեկը մեռնում է բնական մահով (Դավիթ-Բեկ,) մյուսը՝ յուրայինների զրկակից (Մխիթար սպարապետ):

Ինչևէ: Հուսանք, որ ընթերցողը սիրով կրնաունի Մյունիքի ազատագրական շարժումների պատմությամբ նվիրված այս գողտրիկ մատչանը, նշանավոր հայագետ Էդուարդ Գևորգյանի հարյուրամյակի ամենագեղեցիկ գրական գործերից մեկը: Իրեն՝ հեղինակին գրքի առաջին հրատարակիչ Ս. Գուլամիրյանը համեմատել է Վարդանանց հերոսամարտի երգիչ Եղիշեի հետ: Անսպասելի չէ, որ ԺԹ-Ի դարերի գրականության ու արվեստի գործիչները բազմիցս անդրադարձել են Մյունիքի ու Արցախի ազատագրական պատերազմներին, և օգտվելով ամենից առաջ Ղուկաս Սեբաստացու արժեքավոր երկից, ստեղծել են այդ անմահ իրադարձության գեղարվեստական նոր մարմնավորումներ:

Հանրահայտ է Ռաֆֆու «Դավիթ-Բեկ» վեպը, որին հաջորդեցին Արմեն Տիգրանյանի համանուն օպերան, վեպեր, շարժանկարներ... Եկող սերունդները նորից ու նորից կանդորադառնան դավիթբեկյան հերոսապատմին, նորովի ու յուրովի կիսատավորեն նախնիների հայրենաշունչ սրխրանքների պատմությունը և, որ առավել կարևոր է, չեն մոռանա պատմության դասերը:

Ներկա հրատարակության համար հիմք է ծառայել Հ. Ս. Արամյանի՝ 1978-ին լույս ընծայած «Դավիթ Բեկ կամ Պատմություն Դավանցոց» գիրքը, որի մեջ զետեղված է երկու բնագիր՝ միննույն վերնագրով («Պատմություն Դավանցոց»): Դրանք ս. Դագարի Մխիթարյան մատենադարանի թիվ 620 և 2685 ձեռագրերն են, Ղուկաս Սեբաստացու ինքնագրերը: Երկրորդը փաստորեն սևագիր տարբերակն է, որտեղ կարելի է զանազանել Ստեփանոս Ծահումյանի և տե՛ր Մզնտիրա՛ն պատմածը: Հարկ համարեցինք սույն զրրքույկի հավելվածում զետեղել նաև այդ բնագիրը, որ ընթերցողին կօգնի որոշ պատկերացում կազմելու պատմության հետ կապված բանասիրական խնդիրների վերաբերյալ:

Բոլոր դեպքերում հատուկ անունները պահպանել ենք նույնությամբ, սակայն, հիմնական բնագրում կատարել ենք աննշան փոփոխություններ. միօրինակացրել ենք հատուկ անուններն ու եզրույթները (բացի Դավիթ Պեկ-ից), միացրել կամ անջատել ենք որոշ պարբերություններ: Բնականաբար այդ ամենն արված է և աշխարհաբարի մեջ:

Պահպանել ենք Հ. Ս. Արամյանի հրատարակության խորագիրը:

ԱՐՇԱԿ ՄԱԳՈՅԱՆ

Թէ ՌՐՊԷՍ ԵՒ ՎԱՍՆ ԷՐ ԵՂԵՒ ՄՈՒՏՆ ԴԱԻԹԻ ՊԷԿԻՆ Ի
ՂԱՓԱՆ, ԵՒ ԹԷ ԶՐՈՒՐԴ ԵԼԻՆ ՄԻԱՅԱՆ ԸՆԴ ՆՄԱ ԲՆԱԿԻԶԲ
ԳԱԻԱՌԻՆ ԵՒ ԸՆԴԴԷՄ ԴԱՐՁԱՆ ԹՈՒՐԲԱՅ

Ի ժամանակին՝ յորժամ զօրացան ազգն Աղուանից Թուր-
քաց, ի կողմանս Հնդկաց ի Ղանտաճար գաւառին, եւ յարձա-
կեցան յաշխարհն Պարսից ասպատակաւ աւար հարկանել,
մինչև ի գալ պաշարել նոցա եւ առնուլ զՍպահան քաղաք
եւ սատակել զՇահ Հրահին արքայն Պարսից, որ եղև յամի
Տեառն 1721, եւ ի թուին Հայոց ՌՃՀ:

Ի յայս եւ ի սոյն ժամանակի, ի հրախոյ Հայոց՝ Կակղի
Թաթարքն ի կողմանս Հայոց եւ Աղուանից արշաւեցին, եւ
ըզգիւղորէան Գանջու եւ Շամախու ասպատակեալ աւար ա-
ռին, եւ զԱզուիցին ի Մուսապէկեան տոհմէ զիշխանն Շա-
մախու ըսպանին, | եւ զամենայն զօրատր դիմակացսն սա-
տակեցին, եւ ժողովորդս երկիրն եւ զկանաչս եւ զմանկունս
գերի վարեցին, զորոց շունիմք յայսմ վայրի մի ըստ միոջէ
պատմել:

Եւ կամ թէ զի՛արդ զայսչափ շարիս տեսեալ Հայոց բնակ-
չացն Գուգարացոց եւ Ուտացոց՝ ընդդէմ ելին նոցա ի բաց
վանել, գունդ կազմեցին, զէն զգեցան, պատրաստեցան ի
պատերազմ, ճակատ կազմեցին առ Թարթար գետովն, ընդդէմ
ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկիրն իրեանց.
որք եւ զանուն առին այսու եւ կոչեցան մեծ Սղնախ մինչև
ցայսօր:

Եւ թէ ո՛րպէս հարին վանեցին թէ՛ զԿակղին, թէ՛ զՊար-
սիկն եւ թէ՛ զՕսմանցին՝ ոչ ունիմք գրել. այլ միայն զիմրե-
լոյն Հայոց յեօթնաբերդեան գաւառին Ղափանու եղելոցն ձե-
ռն արկանեմք պատմել:

Յամին հազարերորդի հարիւրորդի եօթնասներորդի ե-
զերորդի հայկազեանս թուականի, յորժամ լուան բնակիչք
եօթնաբերդեան գաւառի Ղափանու զասպատակն եւ զաւե-
րումն Գանջու եւ Շամախու, Հայք եւ Պարսիկք առ հասարակ

ԹԵ ԻՆՉՈՒԻ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԵԿԱՎ ԴԱՎԻԹ-ԲԵԿԸ ՂԱՓԱՆ, ԻՆՉՊԵՍ
ԵԼԱՆ ՄԻԱՅԱՆ ՆՐԱՆ ԳԱՎԱՌԻ ԲՈՂՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԵՎ
ԸՆԴԴԻՄԱՅԱՆ ԹՈՒՐԲԵՐԻՆ

Այն ժամանակ, երբ Հնդկաստանի կողմերում, Ղանտաճար
գավառում թուրք աֆղանների ազգը զօրացավ, և նրանք
հարձակվեցին Պարսից երկրի վրա, ասպատակելով կողոպ-
տեցին, նույնիսկ եկան, պաշարեցին և գրավեցին Սպահան
քաղաքը, սպանեցին պարսից շահ Հուսեին արքային, Տիրոջ
1721-րդ և հայոց թվականության 1170-րդ տարին էր:

Նույն այս ժամանակ լակղի թաթարները Հայաստանի
հյուսիսից արշավում են Հայաստանի ու Աղվանքի կողմերը
և Գանջալի ու Շամախիի գյուղերն ասպատակելով, կողոպ-
տում նաև Շամախիի իշխանին, որ Ազուլիսի Մուսաբեկյան
տոհմից էր, սպանում, բոլոր զինված դիմադրողներին կոտո-
րում և երկրի ժողովրդին, կանանց ու երեխաներին գերի վա-
րում. սրանց մասին շենք կարող այստեղ մանրամասն պատ-
մել:

Եվ թե ինչպես անչափ շարիք տեսած Գուգարքի և Ուտիքի
հայ բնակիչները ելան նրանց վտարելու, գունդ կազմեցին,
դենք կապեցին, պատրաստվեցին մարտի, ճակատ կազմելով
Թարթառ գետի շուրջը՝ իրենց երկիրն ասպատակողների դեմ.
[բանակատեղին] դրանից ստացավ իր անունը և մինչև օրս
կոչվում է Մեծ Սղնախ:

Եվ թե ինչպես արիացան սրանք, հարվածեցին, հեռացրին
թե՛ լակղիներին, թե՛ պարսիկներին, թե՛ օսմանցիներին. այս
ամենի մասին մտադիր շենք գրելու, այլ միայն կպատմենք
Ղափանի յոթնաբերդ գավառում կատարված դեպքերը:

Հայկազյան 1171 թվականին, երբ Ղափանի յոթնաբերդ
գավառի բնակիչները լսեցին Գանջալի և Շամախիի ասպա-
տակումն ու ավերումը, բոլոր հայերն ու պարսիկները ան-

խոռվեցան, եւ զահի հարեալ սասանեալ տաքնապէին, եւ իբրև ամիսս երկու կամ երեք երթեւեկս առ միմեանս առնել ի միմեանց կասկածէին. զի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց հանրական ընտանի խնամակալութեան | լքեալս տեսանէին. վասն այսորիկ քաղաք ի քաղաքէ, ազգ յազգէ, եւ իշխան լիշխանէ կասկածանս թշնամութեան կրեալ տազնապէին: Ահա՛ զսոյնպիսի աղէտս շարեաց եւ սոքա կրէին:

Արդ՝ ի սոյնպիսի աւուրս դանուութեան սասանութեան, ոմն Ստեփանոս անուն, ի Հայոց ազգէ, Վանքեցի, ի կողմանց ըն Կալերու, խորհուրդ ի մտի դնէր՝ անցանել ի Սիսան գաւառ, եւ գնալ հասանել յաշխարհն Վրաց, ի քաղաքն Մծխիթ, առ Շահնաւուզ իշխանաց իշխանն Վրաց, եւ խնդրել ի նմանէ զայր մի տալ Ղափանու ի գործադուխ, եւ հրաման տալ նմա զօրաժողով լինելոյ եւ զերկիրն ի թշնամեաց պահելոյ. զի զայս ոչ տք ի սոսկակամացն իւրովի առնել համարձակէր. ապա եթէ ոք առնէր, ժողովուրդն զնա իբրեւ ապստամբեալ ի տէրութենէ՛ ի բաց մերժէր: Այլ իշխանն Վրաց մեծ էր, եւ զայսպիսի զօրագլուխ կացուցանել նմա անկ էր: Իսկ Բ՝ որով մարթացի զհայցուածն իւր առաջի իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ սուտ գիրս յանուն յիսուն արանց տանուտերանց Ղափանու յօրինել, եւ ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքս քանդակել, եւ զայն գիր նոքօք կնքեալ հաստատել: Եւ օրինակ հայցուածոց հրովարտակին այս ինչ էր. | «Տուր մեզ, տէր, զայր մի՛ լինիլ մեզ զօրապետ, զի հրամանաւդ լիցի մեզ այս օրինաւոր, եւ մեք ըզզօրան հոգամբ պատրաստել, եւ նոքօք զգաւառն մեր ի թշնամեաց աներկեան առնել»:

Եւ զնաց Ստեփանոս, եւ հհաս ի Մծխիթ քաղաք, յանդիման հողե իշխանիւն Վրաց, եւ գոյժ տուեալ նմա յաղազս նախաշիշատակեալ քաղաքացն, պատմեաց նմա եւ զամենայն վտանգս եւ զխոռվութիւնս, զահ եւ զերկիւղ ժողովրդեանն Ղափանու, եւ մատոց նմա զհրովարտակն՝ զոր արարեալ էր յանուն տանուտերանցն: Հաճոյ թուեցաւ իշխանին հայցուածն, զոր յանուն նոցա հայցէր. եւ կոչեալ զԴաւիթ Պէկն Մծխիթացի, ի հայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Ղափան, զօրաժողով լինել անդ, եւ պահել զերկիրն Հայոց: Եւ նա յերեսաց իշխանին Վրաց, եւ եկն էհաս յաշխարհն Սիւնեաց յամի Տեառն

հանգստացան եւ երկյուղի մատնված տազնապում էին եւ մոտ երկու կամ երեք ամիս չէին համարձակվում միմյանց մոտ գնալ, որովհետեւ իրենք իրենց բոլոր յուրայինների հոգատարությունից զրկված էին զգում: Այս պատճառով քաղաք-քաղաքից, ազգ-ազգից, իշխան-իշխանից թշնամանքի կասկածներ ունենալով տազնապում էին: Ահա այսպիսի շար աղետների էին ենթարկվում սրանք:

Դանուության ու սասանման այս օրերին հայոց ազգից մեկը, Ստեփանոս անունով, Կալերի կողմերից, վանքեցի, նպատակադրվում է անցնել Սիսան գավառը, գնալ հասնել Վրաց աշխարհը, Մծխիթ քաղաքը՝ վրաց իշխանաց իշխան Շահնավուզի մոտ եւ խնդրել նրանից՝ Ղափանի երկրին տալ մի մարդ եւ նրան իրավունք տալ զորք հավաքելու եւ երկիրը թշնամիներից պաշտպանելու: Որովհետեւ այս բանը շարքայիններից ոչ ոք չէր համարձակվում անել, եւ եթե որևէ մեկն աներ, իբրև տերության դեմ ապստամբած՝ կմերժվեր ժողովրդից: Իսկ վրաց իշխանը ավագ էր եւ այսպիսի գորագլուխ նա կարող էր նշանակել: Եվ որպեսզի կարողանա իր խնդրածը գրլուխ բերել, [Ստեփանոսը] մտածեց Ղափանի հիսուն տանուտերերի անունից գրություն հորինել, նրանց կնիքների նմանությամբ կնիքներ պատրաստել եւ այն գիրը գրանցով կնքել-վավերացնել: Եվ հրովարտակի բովանդակությունն այս էր. «Մեզ մի մարդ տուր, որ գորապետ լինի, եւ մենք հոգ տանենք զորք հավաքելու մասին եւ դրանով մեր հողը թշնամիներից ազատենք եւ քո հրամանով օրինական լինի»:

Գնաց Ստեփանոսը, հասավ Մծխիթ քաղաքը, հանդիպեց վրաց իշխանին, գուժեց նախահիշյալ քաղաքների ավերման մասին, պատմեց եւ բոլոր փորձանքներն ու խոռվությունները, անն ու երկյուղը Ղափանի ժողովրդի, եւ նրան հանձնեց հրովարտակը, որ կազմել էր տանուտերերի անունից: Իշխանին հաճո թվաց խնդրանքը, եւ կանչելով մծխիթցի հայ Դավիթ-Բեկին, նրան իրավունք տվեց գնալու Սյունյաց աշխարհը, որ այժմ կոչվում է Ղափան, զորք հավաքելու այնտեղ եւ Հայոց հողը պաշտպանելու: Նա հրաժեշտ տվեց վրաց իշխանին, եկավ Սյունյաց աշխարհը հասավ Տիրոջ 1722, հայոց 1171

1722 եւ ի թուին Հայոց ՌՃՀԱ, եւ բանակեցաւ ի սահմանս Սիսան գաւառին, ի գեղեցիկ դաշտավայրն յայն երեքագագաթեան, որ ի յայլատեոց կոչի Ուլթէփէ:

Եւ ինքն Դաւիթ ազնուական էր, բարեպաշտ, արդարակորով, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք եւ զործովք, տեղեակ զրոց, նախանձայոյզ բարեաց ազգի, եւ վրէժխնդիր | վնասակարաց նորա, սոյնպէս եւ ամենայն հետեւող իւր. զի իբրեւ ելանէր նա յերկրէն Վրաց, առ նա ժողովէին ամենայն ազգ զօրութեանց յամենայն կողմանց գաւառին, որք լսէին զեռանէ, արք իբրեւ շորեք հարիւրք, որք նեղեալք եւ տառապեալք էին ի դառն ծառայութենէ ալլադ-գեաց, արք՝ որք զանձինս իւրեանց եղեալք էին առ ի ազատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն ալլազգեաց, արք՝ որոց մինն հալածէր զհազարս, եւ երկուքն՝ զբիւրս:

Արդ՝ զառաջինն հարկանելով էհար Դաւիթ զՂարաշուրու կոչեցեալ Թուրքն ի յՈւլթէփէն: Եւ ապա անտի եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր, եւ կոչեալ առ ինքն զառաջնորդն Տաթեու՝ պատմեաց նմա թէ յինչ բանս, յինչ խորհուրդս եկեալ է, եւ ասէ. Քնջելով շնջեցից զամենայն ալլազգիս յերկրէ աստի յայսմանէ. եւ ժողովեաց առ ինքն զարսն Շնհերու, եւ էհար ասպատակեաց զգիւղորէսն Թուրքաց եւ ժառանգեաց զստացուածս նոցա:

Իբրեւ զայն տեսանէին երեսուն եւ երկու ճիւղանչիր կոչեցեալ ցեղն Թուրքաց, ի միասին գային, ժողովէին, գունդ կազմէին, եւ զիմէին ի վերայ Դաւիթ Պէկին: Եւ նա ել ընդ առաջ նոցա ի յՈւլթէփէն, եւ ետես ի հեռուստ զզօրսն թշնամեաց զի էին իբրեւ վեշտասան հազար: Էառ ընդ իւր իբրեւ զշորեքհարիւր բնախր զօրս, | ի վերայ յարձակեցաւ, յաջ եւ ահեակ կոտորելով խրամատեաց զզօրս նոցա. բայց պատերազմն ոչ շուտով վճարեցաւ, այլ տեւեաց իբր զատուրս երկուս կամ երիս. եւ յետ երրորդ ասուր՝ ապա ի սպառ էհար եւ վանեաց զնոսս, յուսարով յողորմութիւնն Աստուծոյ, եւ էառ զամենայն ինչս նոցա՝ զզէն, զսուր, զերիվար եւ զամենայն աղխս նոցա:

Յետ այսորիկ առաքեաց նա զՄխիթար սպարապետն իւր ի շէնն որ կոչի Քուրթլար, եւ էհար զայն, եւ էառ զամենայն ստացուածս նոցա:

Արդ՝ ըւր եղև ամենայն բնակչացն Ղափանու, թէ Դաւիթ Պէկին եկեալ հասեալ է ի թիկունս Հայոց մեծաւ քաջու-

թվականին ու բանակեց Սիսան գավառի սահմաններում, գեղեցիկ դաշտավայրում, Եռագագաթ բլրի մոտ, որ օտարներն անվանում են Ուլթեփե:

Դավիթն ինքը ազնվական էր, բարեպաշտ, արդարակորով, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ, գրագետ, ազգի բարօրության նախանձախնդիր և աններող նրա թշնամիների հանդեպ: Իր նման էին և նրա բոլոր հետևորդները: Եվ երբ նա ելավ Վրաց երկրից, նրա շուրջն էին հավաքվում գավառի բոլոր կողմերից զինակիր տղամարդիկ, որ շտամ էին նրա մասին. մոտ շորս հարյուր մարդ, որոնք ճնշված ու տառապած էին օտարների դառն ծառայությունից, այրեր, որոնք իրենց նվիրել էին ազատություն՝ օտար լծից և որոնցից մեկը հարյուրների էր հալածում, երկուսը՝ հազարների:

Նախ Դավիթը Եռաբլուրում հարվածեց դարաշուրու կոչված թուրքերին, ապա զնաց բանակեց Շնհեր կոչվող ամրոցում: Եվ իր մոտ կանչելով Տաթևի առաջնորդին, պատմեց նրան, թե ինչ գործով, ինչ նպատակով է եկել, և ասում է՝ «Այս երկրից իսպառ շնջելու ենք բոլոր օտարեկրացիներին»: Եվ խմբեց շուրջը Շնհերի տղամարդկանց, զարկեց-ասպատակեց թուրքերի գյուղերը և գրավեց նրանց ոսնեցվածքը:

Այս տեսնելով, ճիվանչիր կոչված երեսուներկու թուրքական ցեղերը համախմբված գալիս, հավաքվում, դռնդ են կազմում և շարժվում Դավիթ-Քեկի վրա: Իսկ նա Եռաբլուրում նրանց ընդառաջ զնալով, հեռվից տեսավ թշնամու զորքերը, որ մոտ տասնվեց հազար էին: Հետք վերցնելով շորս հարյուրի շափ բնախր սպառազեն, հարձակվեց նրանց զորքերի վրա՝ աջ ու ձախ հերձելով ու կոտորելով: Բայց կոխվր շուտ շավարավեց, այլ տեւեց երկու-երեք օր: Երրորդ օրվանից հետո իսպառ կոտորեց կամ վտարեց նրանց՝ հուսալով Աստուծու ողորմածությունը, գրավեց նրանց ստացվածքը՝ սուր ու զենք, երիվարներ և ամբողջ կաշքը:

Անուհետև իր սպարապետ Մխիթարին ուղարկեց Քուրթլար կոչվող ավանը: Սա հարվածեց և ավար առավ նրանց ամբողջ ունեցածը:

Երբ Ղափանի բոլոր բնակիչները տեղեկացան, թե Դավիթ-Քեկը մեծ քաջությամբ եկել օգնություն է հասել հայերին,

թեամբ, եւ հասանէին առ նա յամենայն կողմանց. զառաջինս դիմէր գալ առ նա թորոս՝ սակաւ արամբ, եւ առնոյր ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան, եւ դառնայր ի Չաւնդուր՝ յերկիրն իւր, ընդ իւր առեալ նաեւ զՊայնտուր զօրավարն Դաւթի:

Յետ այսորիկ գային առ նա զօրօք իրեանց որդիքն Մաղայ մելիքին Ճիւղայու, որ եւ կոչի հին Ճիւղայ՝ ի Գողթան գաւառին, եւ որդիքն Տիլէնչի մականուանելոյն. եւ սոքա ամենեքեան գային, խառնէին եւ յաւելանային ընդ զօրսն Դաւթի՝ իբրեւ երկուս հազարս արանց զօրաւորաց:

Ընդ այսու ժամանակաւ մելիք ոմն Տաթեու էր ուրացող, որ յառաջն կոչիւր Դաւիթ, բայց յետոյ անօրինեալ ի հաւատքս իւր, ինքն եւ ամենայն տուն իւր, կոչեցաւ անուն Պաղրի, եւ որդիք նորա ամենեքեան եղեն Շահ Դուլի: Սա իբրեւ զգալն Դաւթի լսէր, զարսն Տաթեու առ ինքն ժողովէր, ամուրս կանգնէր եւ խորհէր տալ պատերազմ ընդ Դաւթի Պէկին: Հապա եւ Դաւիթ Պէկն զզօրսն ժողովէր, գունդ կազմէր, գայր հասանէր ի վերայ նորա, զամուրսն պաշարէր, եւ յետ երկուց աւուրց գայն զբռամբ ածէր, եւ զնա եւ զամենայն ինչս նորա կալեալ ածէր ի Շահեր, եւ անդ հրամայէր նմա զաւուրս երկոտասան, ի մէջ եկեղեցւոյն, յանդիման ամենեցուն ասել բարձր ձայնիւ զառածս զայս ատակաց՝ թէ «Լոյսն Լուսաւորչի հաւատոյն, վա՛յ ուրացողին»: Եւ ապա հատանէ զգլուխ նորա. եւ ինքն գայ բնակի ի Տաթեու:

Ապա հրեշտակս առաքեաց ի Հալիձոր առ տէր Աւետիսն. եւ առ մելիք Փարսազան աներ նորա, եւ ասէ. Եկայք միաբանեցարուք ընդ մեզ, զի ի բաց հանցուք զթուրք բնակիչս ի միջոյ. եւ նոքա ոչ եկին: Եւ յամին երկրորդի, յետ գալստեան Դաւթի ի Ղափան, եւ յաւուրս քառասներորդաց պահուց՝ ի տօնս սրբոյ Լուսաւորչին, ել ի վերայ Չավնդուր երկիրն կուսակայն Ղափանու, եւ Փաթալի սուլտանն, եւ ընդ նմա խանն Սեաւ լերին՝ ութ եւ տասն հազարաւ. իսկ զօրքն Հայոց, որք դարան մտեալ էին նոցա, ի տոնի Յարութեանն Քրիստոսի, զիշերայն զԱստուած յօգնութիւն ինքեանց կոչեցին, յանկարծակի զաղաղակ բարձին, ի վերայ յարձակեցան, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, եւ գայս ի փախուստ դարձուցին:

Ապա յետ այսորիկ եկին մելիք Փարսազան եւ տէր Աւե-

նրա մոտ էին շտապում բոլոր կողմերից: Առաջինը նրա մոտ է դիմում Թորոսը՝ Չավնդուր գավառից, սակավաթիվ մարդկանցով և նրանից զորապետութեան իշխանութուն ստանալով՝ վերադառնում է Չավնդուր՝ իր երկիրը, հետը տանելով նաև Դավթի Պայնտուր զորավարին: Իրանից հետո նրա մոտ եկան Գողթան գավառի Ճուղա քաղաքի (որ նաև Հին Ճուղա է կոչվում) Մաղա-մելիքի որդիներն իրենց զորքով. և Տիլենչի մականվանյալի որդիները: Սոքաք բոլորը, մոտ երկու հազար զորավոր տղամարդիկ, գալիս, գումարվում են Դավթի զորքերին:

Այս ժամանակ Տաթեու մի մելիք կար ուրացող, որ առաջ կոչվում էր Դավիթ, բայց հետո, երբ հավատը փոխեց, ինքը և ամբողջ ընտանիքը, վերակոչվեց Պաղրի, և նրա բոլոր որդիները դարձան շահ-դուլի: Սա երբ լսում է Դավթի գալը, Տաթեի տղամարդկանց հավաքում, ամբուստններ է շինում և պատրաստվում պատերազմելու Դավիթ-Բեկի դեմ: Դավիթ-Բեկը ևս զորք է հավաքում, գալիս հարձակվում է նրա վրա, պաշարում ամբուստնները և երկու օր հետո նրան բռնում, նրան ու նրա ամբողջ ինչքը առնում բերում Շահեր և հրամայում տասներկու օր եկեղեցում բոլորի ներկայությամբ բարձր ձայնով ասել առածի խոսքը. «Լո՛ւյս Լուսաւորչի հավատին, վա՛յ ուրացողին»: Այնուհետև Դավիթ-Բեկը հատում է նրա գլուխը և ինքը գալիս բնակվում Տաթեու:

Ապա սուրհանդակ է ուղարկում Հալիձոր, տեր Աւետիսի և նրա աներոջ՝ մելիք Փարսազանի մոտ, և ասում՝ «Եկեք միաբանեցեք մեզ հետ, որ բոլոր թուրքերին վտարենք երկրից»: Բայց նրանք չեկան: Դավթի Ղափան գալու երկրորդ տարին, սուրբ Լուսաւորչի տոնի քառասներորդաց պահի օրերին Չավնդուրի վրա հարձակվեց Ղափանի կուսակալը՝ Փաթալի սուլթանը, և նրա հետ՝ Սև լեռան խանը՝ տասներկ հազարով: Իսկ հայոց դարանամուտ զորքերը Քրիստոսի հարստության տոնին, գիշերով Աստուծոն օգնութեան կանչեցին, հանկարծակի աղաղակ բարձրացրին, հարձակվեցին, հարվածեցին, կոտորեցին նրանցից շատերին և մնացածներին փախստյան մատնեցին:

Այս հաջողութունից հետո մելիք Փարսազանն ու տեր Ա-

Եւ ի յամին երրորդի, յետ գալստեան իւրոյ ի Ղափան, եւ թայ պաշարէ զմեծ եւ զանառիկ բերդն Որոտնու, եւ ի տօն Սաղկազարդին, որ շորորդ օր էր պաշարման բերդին, եղև անձրեւ յոժ, ո՛վ սքանչելեացս, եւ ի սաստկութենէ անձրեւին մի կողմն պարսպին ինքնին անկաւ. սոքա իբրեւ զայն տեսին՝ ձայն ետուն, խրախոյս բարձին, ի վերայ յարձակեցան եւ մտին ի ներքս, եւ հարին կոտորեցին զամենայն այլազգիս եւ առին զբերդն:

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքել զբազմութիւն զօրաց իւրոց ի վերայ Թուրքացն Պարկուշատայ, եւ ինքեան սակաւուք մնալ ի Սիսան գաւառի: Եւ ի վերայ նորա խանն Նախիջեւանու շորեքտասան հազարաւ. իբրեւ զայն լսէր Դաւիթ՝ զօրաժողով լինէր վաղվաղակի, ի Դարպասայ եւ ի տանէն Սիսանայ գունդ կազմէր, եւ զայր հասանէր նմա ի վերայ գետոյն Նախիջեւանու. եւ անդ իբրեւ ընդ միմեանս բախեցան երկոքին ճակատքն, զօրքն ետանին փախստեայ լինէին ի սոցանէ, եւ սոքա զհետ մտանէին նոցա ի յութ եւ տասն ժամ աւուրն մինչեւ ցքսան եւ միերորդ ժամն վանէին, եւ զբազում վիրաւորս ի նոցանէ դիաթաւալ կացուցանէին: Բայց ի քսան եւ երկուերորդ ժամուն փախստեայքն ամենեքեան ի միասին հաւաքեցան եւ ի կրոննկա ընդդէմ Հայոցն դարձան. իսկ սոքա իբրեւ զայն յանդուզն յարձակումն տեսանէին՝ լքանէին կասէին եւ ի փախուստ դառնային ի նոցանէ մինչեւ ցգետափրն. եւ անդ առ ի ձեպոյն տազնապի, էր որ գետակուր լինէր, եւ էր որ սրոյ ճարակ լինէր, զի պաշարեաց զնոսս սուր թշնամեացն զկնի, եւ յորդեալ գետն առաջի, եւ ոչ գոյր այլ ելք ճանապարհի. ուստի՝ յայնմիկ վայրի ծախեցան ի սոցանէ աւելի քան զհազար այր, մինչեւ ցհասանել զիշերոյն, եւ մնացեալքն փախուցեալ թաքեան ոմն ի վէմս, ոմն ի յայր եւ ի մացառս. եւ յերկրորդ պահու զիշերոյն եկն էհաս Դաւիթ ի Սիսան, եւ փախստեայքն ամենեքեան եկին ժողովեցան առ նա:

Իր Ղափան գալու երրորդ տարին էր, Դաւիթը պաշարեց մեծ ու անառիկ Որոտնաբերդը, և ծաղկազարդի տոնին, որ ամբողջ պաշարման շորորդ օրն էր, հորդ անձրև տեղաց (ո՛վ սքանչելիք), և անձրևի սաստկությունից պարսպի մի կողմն ինքնիրեն քանդվեց: Այդ տեսնելով նրանք ձայն ավեցին, խրախոյս կարդալով հարձակվեցին, մտան ներս ու կոտորեցին բոլոր օտարեկրացիներին, գրավեցին բերդը:

Եվ գրանից հետո այնպես եղավ, որ Դաւիթն իր զորքերի մեծ մասը ուղարկեց Պարկուշատի թուրքերի վրա և ինքը քշով մնաց Սիսան գավառում: Նրա դեմ ելավ Նախիջևանի խանը՝ տասնչորս հազարով: Լսելով այդ մասին, Դաւիթը շտապ զորահավաք արեց, Դարպասից ու Սիսան տնից գունդ կազմեց և զնաց նրան հասավ Նախիջևան գետի մոտ: Այնտեղ, երբ միմյանց բախվեցին, խանի զորքերը դիմեցին փախուստի, և Դաւիթի զինվորները հետապնդում էին նրանց օրվա տասնութերորդ ժամից մինչև քսանմեկերորդ ժամը, հալածում էին և նրանցից շատերին դիաթավալ վիրավոր դարձնում: Բայց քսաներկուերորդ ժամին բոլոր փախստականները միասին հավաքվեցին և նորից շրջվեցին հայերի դեմ: Վերջիններս, տեսնելով այդ հանդուգն հարձակումը, հուսալքվում էին, կանգնում կամ փախչում գետի գետը, տազնապից շտապելով մեկը խեղդվում էր գետում, մյուսը սրի ճարակ էր դառնում, որովհետև ետևից թշնամու սուրն էր, իսկ առջևից՝ հորդացած գետը, և շկար այլ ելք ու ճանապարհ: Ուստի այդտեղ սրանցից ավելի քան հազար մարդ զոհվեց մինչև մութըն ընկնելը, և մյուսները փախչելով թաքնվեցին քարերի մեջ, անձավներում ու մացառուտներում: Եվ զիշերվան երկրորդ կեսին Դաւիթը եկավ հառավ Սիսան, և բոլոր փախուստականները հավաքվեցին նրա մոտ:

Թէ ջՈՐԳՉԱՓ ԻՆՉ ԱՐԱՐ ԹՈՐՈՍ ՉՕՐԱՊԵՏՆ, ԵՒ Թէ ՈՐՊԻՍԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՆԷ ԵՂԵՆ Ի ԿՈՂՄԱՆՍ ՉԱՎՆԴՐՈՅ ԵՒ ՄԵՂՐՈՅ:

Ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ՝ իբրև լսէր թորոս ի Խորձոր, որ է ի Չավնդուրն, թէ Դաւիթ եկեալ հասեալ է բազում զօրօք ի Սիսան գաւառ, ընդ իւր առնոյր արս իբրև երեսուն, եւ գայր հասնէր առ նա. եւ առեալ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան, վաղվաղակի դարձ առնէր, խաղայր զնայր ի Չավնդուր, եւ զարս տեղոյն առ ինքն ժողովէր կարգէր կազմէր զնոսա գունդս գունդս, եւ ի վերայ նոցա կացուցանէր հարիւրապետս եւ յիսնապետս:

Եւ դէպ եղև յաւուրսն յայնոսիկ հօտ մի ոչխարաց սուլտանին, յորում էին երկու հազար ոչխար եւ երկուսասան հովիւք, զալ արածիլ յերկիրն Չավնդոյ: Եւ զայս իբրև լսէր թորոս, զարս առաքէր՝ երթալ կոտորել զհովիւսն եւ զամենայն զհօտն ածել առ ինքն. եւ արարին այնպէս: Եւ այս ամենայն եհաս յանկանջս Փաթալի սուլտանին Պարկուշատու, եւ յականջս եղբօր նորին՝ Աղասի խանին, եւ գրեաց վաղվաղակի առ Մահնիշար օղլի Սափի Ղուլոյն օրինակ զայս.

Ազգ եղև մեզ եւ մեք ինքնին տեղեկացաք թէ զիւրդ Հալքըն Չավնդուրու ապստամբեալ են ի մէնջ, եւ զսուր վերացուցեալ ընդդէմ Տաճկաց, ուստի, յայս ինչ աւուր՝ երկուսասան հազարաւ ելանելոց եմ ի վերայ բնակչացն Չավնդուր, եւ դու եւս առցես ընդ քեզ զամենայն զօրաւորս թուրքաց, որք եմ ի Կենատուզն, եւ դու այդի, եւ ես աստի ելցուք ի վերայ Հալքոյն, եւ ջնջեսցուք զնոսա ի միջոյ: Այլ նա ոչ քառ յանձն առնել զայն:

Եւ ել Փաթալի կուսակալն ի վերայ Չավնդուր՝ երկուսասան հազարաւ: Իսկ բնակիչքն Չավնդուրու իբրև զայն լսէին՝ հարիւր յիսուն վառեալ յիշկետոյ առաքէին՝ երթալ կալնու

ԹԵ ՈՐՔԱՆ ԳՈՐԾ ԿԱՏԱՐԵՅ ԹՈՐՈՍ ՉՈՐԱՊԵՏԸ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՂԱՆ ՉԱՎՆԴՈՒՐԻ ԵՎ ՄԵՂՐԻԻ ԿՈՂՄԵՐՈՒՄ

Այդ օրերին, երբ թորոսը լսում է Չավնդուրի Խորձորում, թե Դավիթը մեծ զորքով եկել հասել է Սիսան գավառը, իր հետ վերցնում է մոտ երեսուն մարդ և գալիս հասնում նրա մոտ, և նրանից զորապետի իշխանություն ստանալով՝ անմիջապես վերադառնում է, գնում Չավնդուր և տեղի մարդկանց հավաքելով շուրջը, նրանցից գնդեր է կազմում, հարյուրապետներ ու հիսնապետներ կարգում:

Լինում է այնպես, որ սուլտանի ոչխարների մի հօտ՝ երկու հազար ոչխար, տասներկու հովիվ բերում են Չավնդուրի երկիրը՝ արածելու: Իսկ թորոսը լսում է այդ մասին, մարդիկ է ուղարկում, որ գնան կոտորեն հովիվներին և ամբողջ հօտը տանեն իր մոտ: Եվ այդպես արեցին: Համբավը Պարկուշատի Փաթալի սուլտանին ու նրա եղբայր Աղասի խանին հասավ: Եվ Փաթալին այսպես գրեց Մահնիշար-օղլի Սափի-ղուլիին.

«Մեզ հայտնի դարձավ, և մենք անձամբ տեղեկացանք, որ Չավնդուրի հայերը ապստամբել են մեզնից, սուր են բարձրացրել տաճիկների դեմ: Ուստի այսինչ օրը տասներկու հազարով ես կհարձակվեմ Չավնդուրի բնակիչների վրա: Դու ևս վերցրու քեզ հետ թուրքերի բոլոր զորքերը, որ Կենավուզում են, և դու՛ այդտեղից, ես՝ այստեղից գնանք հայերի վրա և մեղշտեղից վերացնենք»: Բայց նա հանձն չառավ այդ անել:

Եվ Փաթալի կուսակալը հարձակվեց Չավնդուրի վրա տասներկու հազարով: Իսկ Չավնդուրի բնակիչները, այս լսելով իշկետից հարյուր հիսուն զինված մարդ ուղարկեցին, որ գնան,

զանցս ճանապարհին, զի էր անտառախիտ յոյժ. եւ եկին դա-
րան մտին նոցա անդ: Արդ՝ զօրքն թուրքաց իբրեւ անդր հա-
սանէին, դարանամուտքն ստէպ ստեպ զհրացանսն ի վերայ ար-
ձակէին, եւ այլ վառեալքն Հայոց ի ճակատ անդր ժաման-
էին, եւ զբազումս ի նոցանէ առ ետեղ սատակէին, եւ զայլսն
փախստականս առնէին առաջի իրեանց մինչեւ ցկողմանս
Պարկուշատու. եւ յաւուր յայնմիկ անկանէին ի թշնամեացն
արք իբր շորս հազար:

Բայց ի հետեւեալ աւուրն Սափի Ղուլի Լեւազեան երեք
հարիւր սպառազէն արամբք նենգութեամբ գայ բնակի ի
յԱփկու վանսն, եւ գրէ անտի իշխանացն Իքաց աւանին, զի
եւ նոքա եկեացեն որպէս զի զՄանլիս եւ զամենայն զիւղո-
րայսն Հայոց, որք էին ի կողմանս յայնոսիկ, աւար առեալ ա-
ւերեսցեն. բայց Միրզա Սայիլ իշխանն ոչ կամեցաւ գայն: Եւ
զայս ամենայն իմացեալք արքն Մանլիսու առաքեցին արս ի
Չավնդուր, եւ ասեն. Ել Սափի Ղուլին, զայս ինչ եւ զայս ինչ
խորհի առնել: Իբրեւ գայն լսէր թորոս զօրապետն, նոյնժա-
մայն վառէր պատրաստէր, եւ հինգ հարիւր վառելովք գիշե-
րայն զիմէր գայր ի վերայ նորա, եւ ի յառաւօտուն յերեք-
տասաներորդ ժամուն. հասանէր ի յԱփքիս: Իսկ Սափի Ղու-
լին իբրեւ զայն տեսանէր՝ փախստեայ գնայր, եւ թորոսն զհետ
մտանէր, եւ հարկանէր ի նոցանէ արս ութսուն: Եւ ի ժամա-
նակին յայնմիկ՝ հարին կոտորեցին զերիս զիւղս թուրքաց, եւ
առին զամենայն ինչս նոցա եւ դարձան ի Մանլիս:

Արդ իբրեւ լուր լինէր բանս այս ի Քիս եւ ի Իքաց, գային
ժողովէին ի միասին ամենայն արք բնակչացն Իքացու, եւ զա-
մենայն զկին եւ զորդիս իրեանց հանէին ամրացուցանէին ի
բարձրագոյն գագաթն, որ հանդէպ աւանին էր, եւ ինքեանք
յարձակեալ գային ի վերայ Մանլիսու: Իսկ թորոս ընդառաջ
լինէր նոցա ի զիսոյ Մանլիսուն, եւ ի զիմի հարեալ՝ զբազումս
ի նոցանէ անդանօր սատակէր. եւ զայլսն ի փախուստ դար-
ձուցանէր մինչեւ ցՔիսն, եւ ինքն հրաման տայր զօրացն մի-
պնդիլ զկնի նոցա, այլ երթալ հարկանել զտունս նոցա եւ այ-
րել, եւ առնուլ զամենայն ինչս նոցա եւ դառնալ: Եւ իբրեւ
կատարեցին՝ դարձան անդրէն ի Մանլիս:

Եւ եկաց թորոս ի Մանլիս աւուրս երիս, եւ անդ կացոյց
զՊապ Կալերեցի՝ զորդին Սրապիոնի՝ զօրապետ եւ կառավար
ի վերայ երկրին Կենատուոյ, եւ ինքն դարձ արար գնաց ի Չա-

բունն ճանապարհի անցքերը, որովհետեւ շատ անտառախիտ էր
նրանք եկան այնտեղ դարան մտան: Երբ թուրքերի զօրքե-
րն այնտեղ էին հասնում, դարանամուտները ստեպ-ստեպ
հրացանները նրանց վրա էին պարպում, և հայոց մյուս զին-
յալները մարտի դաշտ էին հասնում և նրանցից շատ-շատե-
րին տեղնուտեղը կոտորում, ուրիշներին փախստական
դարձնում և հետապնդում մինչև Պարկուշատի կողմերը: Այդ
օրը թշնամիներից ընկնում է շուրջ շորս հազար մարդ:

Բայց հաջորդ օրը Լեւազյան Սափի-ղուլին երեք հարյուր
սպառազէն մարդով նենգութեամբ գալիս, բանակում է Ափ-
կու վանքում և այնտեղից գրում Իքաց ավանի իշխաններին,
որ նրանք ևս գան, որպեսզի Մանլիս և հայոց այն կողմերի
բոլոր գյուղերը կողոպտելով ավերեն: Բայց Միրզա-Սայիլ
իշխանն այդ չկամեցավ: Մանլիս այրերը, իմանալով այս ա-
մենը, մարդիկ ուղարկեցին Չավնդուր՝ ասելով. «Եկել է Սա-
փի-ղուլին և այսպիսի բաներ է ուղում անել»: Երբ այդ լսում
է թորոս զորապետը, անմիջապես զինվում-պատրաստվում
է և հինգ հարյուր զինակրով գիշերը դիմում է նրա վրա, ա-
ռավոտյան ժամը տասներեքին հասնում Ափքիս: Իսկ Սա-
փի-ղուլին այդ տեսնելով՝ փախուստի է դիմում, և թորոսը
հետապնդում է, կոտորում նրանցից ութսուն հոգու: Այն-
ժամ կոտորեցին թուրքերի երեք գյուղ և վերցնելով նրանց
ամբողջ գույքը՝ վերադարձան Մանլիս:

Երբ այս լուրը հասնում է Քիս և Իքաց, Իքացի բոլոր
տղամարդ բնակիչները գալիս, հավաքվում են իրենց կա-
նանց ու երեխաներին հանում ամրացնում են ավանի դիմա-
ցի բարձր գագաթին, իսկ իրենք հարձակվում են Մանլիս
վրա: Թորոսը նրանց ընդառաջ է գալիս Մանլիս բարձունքից
և նրանցից շատերին տեղում ոչնչացնում է, ուրիշներին հա-
լածում մինչև Քիս և հրամայում է զորքերին՝ չհետապնդել
նրանց, այլ երթալ, քանզի ու այրել նրանց տները, վերցնել
նրանց ամբողջ ունեցվածքը և վերադառնալ: Կատարելով
այդ ամենը՝ վերադառնում Մանլիս:

Թորոսը Մանլիսում մնաց երեք օր և այնտեղ թողնելով
կալերցի Պապին՝ Սրապիոնի որդուն, զօրապետ և կառավարիչ
Կենավուզի երկրի, ինքը դարձավ գնաց Չավնդուր: Այնուհե-

վրնդուր, Իսկ Պապ զօրածողով լեալ անդ՝ գայ բնակի ի Կալիբ աւանի:

Բայց Սափի Ղուլին զգիւղորայսն թուրքաց, որք էին ի Լեազու ձորն, խաղացուցանէ ի յՈւրդուար, եւ մնացին միայն շորք գիւղք թուրքաց ի կողմանս Արձաւաքարին. եւ հրամայեաց Պապ երթալ կոտորել զնոսա . եւ եկին հարին զերիս գիւղան եւ աւար առին զինչս նոցա: Եւ ի թաղամերի էր վաթսուն տուն թուրքաց. սոքա եկին, լացին, զաղաղակ բարձին առ զօրակառանս Հայոց՝ թէ մեք ըստ ամենայնի ամենայն կերպիս հպատակիմք ձեզ. եւ խնայեցին ի նոսա:

Յետ այտորիկ իբրեւ մի ամիս կամ երկու ի վերայ անցանէր, Սափի Ղուլին առնոյր ընդ իւր արս հինգ հարիւր ի յՈւրդուարայ, եւ ի գիշերի միտմ գայր հարկանէր զերկու գիւղս Հայոց ի Սալիպուն, զարսն կոտորէր, եւ զկին եւ զորդիս նոցա զերի վարէր ի յՈւրդուար:

Իսկ Դաւիթ Պէկն իբրեւ գայն լսէր, զՄխիթար սպարապետն իւր յառաջ կոչէր, եւ հրաման տայր նմա երթալ սատակել զնոյն վերոյ ասացեալ վաթսուն տունն թուրքաց ի թաղամեր. եւ նա արար այնպէս. (եւ զայսու ժամանակաւ Դաւիթ կատարէր զշինուած բերդին որ ի Հալի ձոր):

Հրաման տայր նաեւ Պապայ զօրապետին երթալ ի Լեազու ձորն, եւ եթէ գտանիցէ անդէն մնացեալ շէն ինչ թուրքաց՝ կոտորեսցէ. եւ ըստ հրամանի նորա՝ ել գնաց հազար հինգ հարիւրով Պապ ի Լեազու ձորն, եւ գոչ ոք եգիտ ի թուրքաց, զի սակաւ ոմանք մնացեալ էին, եւ նոքա եւս փախուցեալ անկան ի յՈւրդուար: Այլ Պար յուզեալ գտանէ անդէն զբազում ինչս եւ առաքէ գայն ամենայն ի Զվար սասնն, եւ զպահապանս կացուցանէ անդ. եւ ինքն շուք գնաց անտի ի կողմանս Վայրիվարա, եւ գտանէ անդէն զերիս տունս, որք տւրացեալք էին զՔրիստոս, զնոսա գամենեսեան կոտորէ եւ առնու զինչս նոցա, եւ դառնայ ի տեղի իւր՝ բազում գանձուք եւ աւարաւ. զի ոչ միայն ի Լեազու ի գիւղորէիցն թուրքաց, այլ եւ ի կողմանցն Վայրիվարայ ի Հայոց հհան զբազում ինչս: Եւ այսպէս զօրականք Դաւիթի յամենայն երկիրն Ղափանու շրջէին, յոյզ եւ խնդիր առնէին, եւ ուր ուրեք զթուրք գտանէին՝ սուր ի վերայ եղեալ սատակէին, մինչեւ բնաւին բնաշինչ առնել զթուրքն ի Ղափանու:

Ապա իբրեւ լսէր Դաւիթ, թէ զօրածողով է Ասլամազ Ղու-

տն Պապը զորք հավաքելով եկավ բանակեց Կալիբ ավանում: Բայց Սափի-ղուլին Լեազի ձորի թուրքերին գաղթեցրեց Ուրդուար: Մնացին միայն շորս թուրքական գյուղ Արձավաքարի կողմերում: Եվ Պապը հրամայեց իր զորքին՝ գնալ կոտորել գրանց: Եկան հարձակվեցին երեք գյուղի վրա և առան նրանց ինչքը: Թաղամեր ավանում վաթսուն տուն թուրք կար: Դրանք եկան, լաց-աղաղակ բարձրացրին հայոց զօրականների առաջ և ասացին. «Մենք լիովին հպատակվում ենք ձեզ», — և սրանց խնայեցին:

Դրանցից մեկ կամ երկու ամիս հետո Սափի-ղուլին Ուրդուարից վերցնելով հինգ հարյուր մարդ, մի գիշեր գալիս ավերում է երկու հայկական գյուղ Սալիպունում, տղամարդկանց կոտորում և նրանց կանանց ու երեխաներին զերեվաբում Ուրդուար:

Դավիթ-Բեկն այդ լսելով կանչում է իր սպարապետ Մխիթարին և հրաման է տալիս գնալ կոտորել թուրքերի վերոհիշյալ վաթսուն տունը թաղամերում, և հրամանը կատարվում է: Ահա այս ժամանակ Դավիթ-Բեկն ավարտում է բերդի կառուցումը Հալիձորում:

Դավիթը նաև հրամայում է Պապ զորավարին գնալ Լեազի ձորը, որպեսզի եթե այնտեղ մնացած լինեն թուրքական բնակավայրեր՝ կոտորի: Եվ նրա հրամանով Պապը հազար հինգ հարյուրով գնաց Լեազի ձորը և ոչ մի թուրք չգտավ այնտեղ, որովհետև մնացած քչերը եւս փախան Ուրդուար: Իսկ Պապը որոնում, գտնում է շատ ինչք և այդ ամենն ուղարկում է Զվար ավանը և պահապաններ կարգում այնտեղ, ինքը շարժվում է Վայրիվարի կողմերը: Այնտեղ գրտնում է երեք տուն, որոնք ուրացել էին Քրիստոսին: Դրանց բոլորին կոտորում է, վերցնում նրանց ունեցվածքը և բազում գանձ ու ավարով վերադառնում իր տեղը, քանի որ ոչ միայն Լեազի թուրքական գյուղերից, այլև Վայրիվարի կողմերի հայերից խլեց շատ բան:

Այսպես Դավիթի զօրականները շրջում էին Ղափանի ամբողջ երկրում, հարցնում, որոնում և որտեղ թուրք էին զտնում, սրի քաշելով կոտորում էին՝ մինչև բոլորին Ղափանից իսպառ բնաջնջելը:

Ապա Դավիթը լսելով, թե Ասլամազ-ղուլին Փուխուրութի

լին ի կողմանս Փոխտուրութայ, վաղվաղակի զօրահատոյց
ներ, ի վերայ հասանէր եւ զնոսա զամենեսեան սատակ
անդ, որպէս ի վեր անդր ասացաք. եւ իբրեւ գայր հասան
Դաւիթ ի Ղարաշիմէն, ընդդէմ ելանէր նմա Թորոս զօրապետ
մարտի պատերազմի, եւ միջնորդ մտեալ ի մէջ երկուց
հաշտեցուցին զնոսա: Եւ խաղաց զնաց Դաւիթ ի Հալի ձոր
եւ Թորոսն ի Չափնդուր, իսկ Պապ ի Կենաուզն:

Յամի երրորդի՝ յետ գալստեանն Դաւիթ ի Ղափան, Թ
րոս զօրապետն հանդէս արար ամենայն զօրաց իւրոց ի Չ
վընդուր, եւ ժողովեաց զամենայն այր զօրաւոր յերկրէ իւրմ
առ ի գնալ ի վերայ Ուրդուար քաղաքին: Բայց մելիք Յոան
կուլն Երցվանեկ աւանին, որ եւ ասի Կարմիր վանք, որ է
Պարկուշատ գաւառին, գրեաց առ Թորոսն այսպէս. Աղդ
ղեւ Փաթալի սուլտանին վասն քոյ, թէ զօրածողով ես առ
գնալ ի վերայ Ուրդուարոյ. սա աւասիկ եւս զօրածողով
աստ եւ սպասէ, զի յորժամ դու ելանիցես յերկրէդ, նա վաղ
վաղակի ի վերայ | հասեալ՝ սատակիցէ զերկիրն քոյ. ուստ
յոյժ բարոք արասցես, եթէ նախ եկեսցես ի վերայ Պարկու
շատու. նա եւ զի եւ ի մեզ եղեալ Հայսն Պարկուշատայ քե
թիկունս անեմք:

Այլ զայս ամենայն անօրէն մտօք, նենգաւոր խորհրդ
գրէր, զոր գրէրն, զի ի ժողակս թշնամուոյն զնա արկցէ, առ
հաւատարիմ ցուցանել զինքն սուլտանին, զի մի՛ ի բաց լին
ի տէրութենէն, (իբր թե զհետ միտեալ իցէ նա Դաւիթ եւ զօ
րականաց նորա). եւ ոչինչ փոյթ եղև նմա լինիլն անհաւա
տարիմ, նենգաւոր, թշնամի Աստուծոյ, եւ մարդկան եւ աս
գին իւրոյ եւ ժողովրդեանն մատնիչ եւ սատակիչ, որպէս
հետազայս ցուցցին առնս այսորիկ թշնամութիւն եւ շարի
Եւ հաւատաց Թորոս բանից նորա եւ ել քնաց միտամութեամ
եւ եհաս ի յՈղահորդ, ի սահմանս Պարկուշատու, ինքն եւ ս
մենայն զօրքն իւր, եւ բանակեցաւ անդ. եւ եկն առ նա Յոան
կուլն երկու հազարաւ, եւ եկաց ի մի կողմն զօրացն Թորոսի
Եւ եհաս անդր Փաթալի սուլտանն, եւ եղբայր նորա՝ Աղասի
խանն, բազում զօրօք, քորն որչափ էրն ընդ Թորոսին, կրկնա
պատիկ եւ եռապատիկ, եւ առաւել եւս, իբրու ութ եւ տաս
հազարաւ. եւ իբրեւ ճակատեցան ընդդէմ միմեանց զօր
սուլտանին եւ զօրքն Թորոսին, զօրքն սուլտանին փախը
տեալ | լինէին եւ սոքա զհետ լինէին նոցա:

կողմերում զորք է հավաքել, [ինքը եւ] զորահավաք է ա
նում, հարձակվում և նրանց բոլորին կոտորում է, ինչպես
վերևում ասացինք: Եվ երբ Դավիթը գալիս հասնում է Ղա
րաշիմեն՝ նրա դեմ պատերազմի է ելնում Թորոս զորա
պետը, և երկուսի միջև միջնորդ լինելով հաշտեցնում են
նրանց: Եվ Դավիթը ելավ գնաց Հալիձոր, Թորոսը՝ Չափնդուր,
իսկ Պապը՝ Կենավուզ:

Դավթի Ղափան գալու երրորդ տարին Թորոս զորապետն
իբր քուրք զորքերի հանդես արեց Չափնդուրում և հավաքեց
իբր երկրից բոլոր կովոդ տղամարդկանց՝ հարձակվելու հա
մար Ուրդուար քաղաքի վրա: Բայց Պարկուշատի գավառի
Երցվանեկ ավանի՝ այսինքն Կարմիր վանքի մելիք Յոանկու
լս այսպես գրեց Թորոսին. «Հայտնի է դարձել Փաթալի սուլ
տանին քո մասին, թե զորք ես հավաքում Ուրդուարի վրա
հարձակվելու համար: Սա ևս ահա այստեղ է զորք հավա
քում, որպեսզի երբ երկրիցդ ելնես՝ անմիջապես հասնելով
ավերե քո երկիրը: Ուստի շատ ճիշտ կանես, եթե նախ գաս
Պարկուշատի վրա: Որովհետև նաև Պարկուշատի հայերս քեզ
աջակից կլինենք»:

Բայց այս ամենը նա ծուռ մտքով, նենգությամբ էր
գրում, որպեսզի նրան թշնամու ծուղակը գցեր, սուլտանին
ցույց տալու համար իր հավատարմությունը, որ չզրկվի իշ
խանությունից (իբր թե նա հետապնդել է Դավթին ու նրա
զորականներին). և նրա համար փույթ չէր Աստուծոն անհա
վատարիմ, նենգավոր և թշնամի լինելը, և իր մարդկանց, իր
ազգին ու ժողովրդին մատնող և սպանող, ինչպես հետագա
յում երևում են այս մարդու թշնամությունն ու շարությունը:
Եվ Թորոսը հավատաց նրա խոսքերին ու ելավ միամտորեն
գնաց, հասավ Եղահորդ, որ Պարկուշատի մերձակայքում է,
գնաց ու բանակեց այնտեղ: Եվ եկավ Յոանկուլս նրա մոտ՝
երկու հազարով և կանգնեց Թորոսի զորքի մի կողմում: Եվ
այնտեղ հասան Փաթալի սուլտանն ու նրա եղբայր Աղասի
խանը՝ բազում զորքով, Թորոսը բանակից կրկնակի և եռա
կի շատ, առավել ևս՝ մոտ տասնութ հազար: Եվ երբ ճակա
տեցին իրար դեմ Սուլտանի և Թորոսի զորքերը, սուլտանի
զորքը փախուստի դիմեց, և Թորոսը հետապնդեց նրանց: Այդ

Իսկ անօրէն Յոանկուլն իբրև զայն տեսանէր, զարս զկնն սուլտանին հասուցանէր, եւ ասէ. Զի՞նչ գործէք. զիս՞րդ փախչիք, դարձարո՞ւք ի կրօնկս զի ես ընդ ձեզ եմ. դուք ի յառաջոյ եւ ես զկնն սոցա խորտակեսցուք զսոսա. եւ արարին այն պէս, պաշարեցին զգօրսն Թորոսին յառաջոյ եւ զկնն, եւ ըսկրսան կոտորել, եւ զԹորոսն սպանին. եւ զերծեալքն ի նոցանէ միայն հազար շորս հարիւր այր եկին ի Չավնդուր, եւ մնացեալքն ամենեքեան անկան անդ: Ահա զայսպիսի անօրէնութիւնս գործեաց Յոանկուլն, եւ ոչ այսչափ միայն, այլ եւ առ ի առաւել հաճոյանալ սուլտանին եւ ցուցանել զինքն թէ ոչ է միտեալ զկննի Դաւթի եւ զօրականացն Ղափանացուց ուրացաւ նաեւ զհաւատն:

Արդ՝ այս ամենայն իբրև այսպէս անցանէր, Փաթալի սուլտանն խորհուրդ ի մտի դնէր զալ մտանել ի Չավնդուրն եւ կոտորել կորուսանել զբնակիչս նորա: Բայց Նուպար սպարապետն, որ յաջորդեաց Թորոսի, իբրև զայն լսէր՝ վաղվա զակի հրովարտակ առաքէր առ Պապ զորապետն եւ ասէր. Դու ինքնին գիտես, զի ահա կորեան զորքն մեր, եւ արդ յարուցեալ զայ ի վերայ մեր Փաթալի սուլտանն. յոգնութիւն հասէք մեզ: Եւ նա վաղվադակի առաքեաց ի Չավնդուրն երկու հազար զօրս ի յօգնութիւն Նուպարին. իսկ Փաթալի սուլտանն իբրև գիտաց թէ օգնութիւնս արարին ի Կենսուզու Նուպարին, դարձաւ ի տեղի իւր:

Եւ ի զօրավարացն Պապայ՝ որք եկին ի Չավնդուր, երկու զօրավարք ապստամբեցան ի Պապայ՝ վասն խռովութեան ինեղելոյ ի մէջ նոցա. եւ եկեալ ի Լիջկին աւանն՝ զօրաժողով եւ զեն, եւ կամեցան ունել զՊապ, եւ նա փախեալ ի նոցանէ եւ ասեն՝ Մեր կառավարեսցուք զերկիրս: Եւ իբրև, զայս լսէ Դաւիթ Պէկն, առաքէ առ նոսա զԿորդիի զօրապետն՝ Երկիրիւր արամբ. եւ նորա եկեալ հաշտեցուցանէ զնոսա, եւ հնազանդ առնէ զնոսա Պապայ, եւ զվերոյ յիշեալ աւարն՝ զոր անին ի Լեւազու բաժանէ ի մէջն նոցա:

Յետ այսորիկ իբրև մի կամ երկու ամիս ի վերայ անցանէր, ի Ուրդուարայ առ Պապ գլուխկան հասանէր, թէ զօրաժողով է Թուրքն առ ի գալ եւ աւերել զՂափան: Յայնժամ ի յաւանքն Կենսուզու ի միասին գային, խորհուրդ խորհէին՝ հրաման տալ, ժողովել զբոլոր մարդիկ զիւզորէիցն ի յերկու գիւղս, ի Կէսն Վանք կոչեցեալ շինէն մինչև ցԿալեր, եւ

տեսնելով՝ անօրեն Յոանկուլը մարդիկ է ուղարկում սուլտանի ետեւից և ասում. «Ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք փախչում, ե՞տ դարձեք, չէ՞ որ ես ձեզ հետ եմ. դուք առաջից, ու ես ետեւից՝ կիսորտակենք սրանց»: Այդպես արեցին: Առջևից ու հետևից պաշարեցին Թորոսի զորքը, սկսեցին կոտորել և սպանեցին Թորոսին: Նրանցից փրկվածներից միայն հազար շորս հարյուր մարդ եկավ Չավնդուր, իսկ մնացած բոլորն ընկան այնտեղ: Ահա այսպիսի անօրինություններ գործեց Յոանկուլը: Բայց այսքանը քիչ էր, սուլտանին առավել հաճոյանալու և ցույց տալու համար, որ ինքը Դավթի և զափանցի զորականների համախոհը չէ, ուրացավ նաև հավատը:

Այս ամենը որ այսպես եղավ, Փաթալի սուլտանը մտադրովեց զալ մտնել Չավնդուր, կոտորել ու կորստյան մատնել նրա բնակիչներին: Բայց Նուպար սպարապետը հաջորդեց Թորոսին և երբ լսեց այս բանը, շտապ սուրհանդակ հղեց Պապ զորապետին, ասելով. «Արդեն դու ինքդ գիտես, որ կործանվեց մեր զորքը, և հիմա ելել մեզ վրա է գալիս Փաթալի սուլտանը, օգնության հասեք մեզ»: Եվ նա անմիջապես Չավնդուր ուղարկեց երկու հազար զորք՝ օգնելու Նուպարին: Իսկ Փաթալի սուլտանը, տեղեկանալով, որ Նուպարին օգնության են եկել Կենսավուզից՝ դարձավ իր տեղը:

Պապի՝ Չավնդուր եկած զօրավարներից երկուսը ապստամբեցին Պապից, իրենց միջև եղած ինչ-որ խռովության պատճառով: Եվ գալով Լիջկին ավանը, զօրաժողով արեցին և ցանկացան բռնել Պապին, իսկ նա փախավ նրանցից: Ասացին՝ «Մենք կկառավարենք երկիրը»: Նրը Դավիթ-Բեկը լսեց՝ Կորդի զօրապետին երկու հարյուր մարդկանցով ուղարկեց նրանց մոտ, որը և եկավ նրանց հաշտեցրեց ու հնազանդեցրեց Պապին և վերոհիշյալ ավարը, որ խլեցին Լեւազից՝ բաժանեց նրանց միջև:

Սրանից մեկ կամ երկու ամիս անց Ուրդուարից գլուխկան եկավ Պապին, թե Թուրքերը զորք են հավաքում՝ գալու ավերելու Ղափանը: Այնժամ Կենսավուզի իշխանավորները միասին եկան, մտածեցին հրաման տալ, գլուղերից բոլոր մարդկանց հավաքել երկու գյուղում, կես Վանք կոչվող շենից, մինչև Կալեր և Կալերից մինչև Մանլե ու Ափքիս: Խորհուրդն այս

Կարերու մինչեւ ցՄանլու եւ մինչեւ ցԱփքիս. եւ հաստատեցաւ բանս այս ի խորհրդեան եւ արարին այնպէս:

Եւ յետ ոմանց | աւուրց՝ Սափի Ղուլին Ուրդուարեցին, որդին Ղազու, եւ որդին Շահիսլամին ութն հազարաւ գային անցանէին ի յԱլանկեղայ սարոյն ի Պուղաքարն: Եւ իբրեւ այնպէս զանցանելն նոցա լսէր Պապ, առնոյր ընդ իւր երկուս հազարս եւ ընդառաջ ելանէր. բայց իբրեւ զայն բազմութիւն թշնամեացն տեսանէր, կասէր, զանգիտէր, եւ ի նոցանէ թիկունս դարձուցանէր: Ապա այնուհետեւ զօրք թշնամեացն համարձակ յառաջ խաղային: Գային հասանէին մինչև ցԻաշտուն առանն, եւ զբոլոր գիւղորէսն քանդէին: Իսկ ժողովուրդքն գիւղորէից, որք ժողովեալքն էին ի մի (որպէս ի վերոյ ասացաք), ամենեքեան անցին ի Խաչաօրու սարոյն յերկիրն Չավնդուր: Չայս ամենայն իբրեւ լսէր Դաւիթ, ի սրտմութիւն բարկութեան բրդէր ի վերայ Պապայ. առնոյր վաղվաղակի ընդ իւր երկու հազար ութն հարիւր սպառազէն, խաղայր գայր ի Դաշտուն: Իսկ Թուրքն իբրեւ զգալն Դաւիթի զգային, փախստեայ զնային ի յՈւրդուար: Եւ եմուտ Դաւիթ ի Դաշտուն, եւ սկսաւ բարկանալ յոյժ ի վերայ Պապայ (մանաւանդ զի այլք եւս չարախօս լինէին զՊապայ), եւ ասէ. Միթէ չիցէ՞ բաւական զի փախեաւ ի պատերազմէ, եւ արդ ոչ եւս կամի գալ առ իս: Եւ ել զնաց անտի ի Կալեր, եւ կալեալ | անդ զՊապ | ածէր ընդ ինքեան. եւ անցեալ ի Խաչաօրու սարոյն, իբրեւ մօտէին ի յԻշկետ, անդ գլխատէր զՊապ եւ աւար առնոյր զինչս նորս: Ապա յետ երից աւուրց՝ շուեաց զնաց ի յԻշկիտոյ ի դաշտավայրն Կեմանցու:

Արդ իբրեւ լուր եղեւ ի յՈւրդուար՝ թէ Դաւիթ անցեալ է ի Չավնդուր, ելին կազմեցան պատրաստեցան Սափի Ղուլին, որդին Ղազու, եւ որդին Շահիսլամին, եւ առեալ ընդ իւրեանս զօր բազում, իբր երկոտասան հազարաւ գային հասանէին ի կողմանս Կենաուզայ, եւ անցեալք ի յԱլանկեղայ սարոյն՝ զամենայն գիւղորէսն Կենաուզայ այրեցին: Ապա դուժկան հասանէր առ Դաւիթ վասն այսր ամենայնիւ. Եւ նա վաղվաղակի առեալ ընդ իւր արս իբրեւ շորս հազարս՝ եկն եւ բանակեցաւ ի Կալեր, եւ ի յառաւօտուն պահու եհաս ի վերայ հինիցն Թուրքաց, եւ եզիտ զնոսս բանակեալս ի Լիշկին՝ յայնկոյս Ղօզղօզ գետոյն: Իսկ նոքա անտի իբրեւ տեսին զզօրսն Դաւիթի, առ հասարակ հասին կալան զգետափն, եւ

բանը հաստատեց, և այդպես արեցին:

Մի քանի օր անց Ուրդուարցի Ղազի որդի Սափի-ղուլին և Շահիսլամի որդին ութ հազարով եկան, անցան Ալանկեղի սարից դեպի Պուղաքար: Եվ երբ Պապը լսում է նրանց անցնելը, իր հետ վերցնում է երկու հազար հողի և ընդառաջ ելնում: Բայց թշնամիների բազմութունն այդ տեսնելով ընկերկեց, վախեցաւ և նրանցից թիկունք դարձրեց: Այնուհետև թշնամյաց զորքերը համարձակ առաջ շարժվեցին, եկան հասան Դաշտուն ավանը և բոլոր գյուղերը քանդեցին: Իսկ գյուղերի բնակիչները, որ ի մի էին հավաքված (ինչպես վերևում ասացինք), բոլորը Խաչաօրի սարից անցան Չավնդուր: Այս ամենը լսելով, Դավիթը զայրացաւ Պապի դեմ և իր հետ վերցնելով երկու հազար ութ հարյուր սպառազեն մարդ, շտապ եկավ Դաշտուն: Թուրքերը լսելով Դավիթի գալը՝ փախան Ուրդուար:

Եվ Դավիթը մտավ Դաշտուն և խիստ զայրացաւ Պապի վրա (մանավանդ որ ուրիշները ևս չարախոսում էին նրանից) և ասում է. «Բավական չէ, որ փախել է պատերազմից, այժմ ևս չի կամենում գալ ինձ մոտ»: Եվ ելավ այնտեղից զնաց Կալեր և այնտեղ բռնելով Պապին՝ տարավ իր հետ: Անցնելով Խաչաօրի սարից, երբ մոտ էին Իշկետին, այնտեղ գլխատեց Պապին և ավար առավ նրա ունեցվածքը: Ապա երեք օր հետո Իշկետից ելավ զնաց Կեմանցի դաշտավայրը:

Երբ լուր հասավ Ուրդուար, թե Դավիթն անցել է Չավնդուր, ելան պատրաստվեցին Ղազի որդի Սափի-ղուլին ու Շահիսլամի որդին և բազմաթիվ զորքով, մոտ տասներկու հազար, եկան հասան Կենավուզի կողմերը և Ալանկեղի սարն անցնելով Կենավուզի բոլոր գյուղերն այրեցին: Այս ամենի մասին գուցեք հասավ Դավիթին: Նա անմիջապես վերցնելով մոտ շորս հազար հողի, գալիս բանակում է Կալերում: Առավոտյան ավազակ թուրքերի վրա է հարձակվում և նրանց գտնում է բանակած Լիշկինում՝ Ղօզղօզ գետի մյուս ափին: Իսկ նրանք երբ այնտեղից տեսան Դավիթի զորքերը, հասան

կողմանցն Ափկու եւ եկին մտին ի Մեղրի: Իսկ զօրքն Թուրքաց ի բանակէ անտի իբրեւ զբազմութիւն զօրացն Հայոց տեսանէին, ոչ հաւատային թէ յօգնութիւն իցեն նոցա հասակը յայլ ուստեքէ: Այլ ասէին՝ թէ Մեղրեցիքն կանանց իրեանց զգեցուցեալք են զզգեստ ատնացի եւ զզարդ պատե՛րազմի, եւ տուեալ զբազում սուտ դրօշակս ի ձեռս նոցա առ ի երկեցեացանել զմեզ:

Այլ սոքա մինչեւ էին հասեալք ի Մեղրի, քաջ եւ արի զօրքն Մեղրացոց գործ քաջութեան ի նմին գիշերի գործեցին. զի անցեալք յանկոյս գետոյն՝ յեղակարծումն ժամու ի մէջ բանակի թշնամեացն յարձակէին, եւ զբազումս ի նոցանէ ի սուր սուսերի սատակէին, մինչեւ եւ որդին Շահխալամին երկու հազարաւ ի յՈւրդովար քաղաք ի փախուստ արկանէին: Այլ զի սակաւք էին, ոչ կարացին ի սպառ ջնջել եւ անհետս առնել զնոսա անտի. դարձան անդրէն ի Մեղրի: Իսկ օգնականքն Հայոց իբրեւ գային եւ ի Մեծ թաղն Մեղրեայ հասանէին, Մեղրացիքն վաղվաղակի նոցա զկերակուր պատրաստէին. Յայնժամ Պայինտուրն որ էր իշխան եւ զօրազլուխ ամենայն զօրուն եկելոյ ընդ նմա, արգելու զնոսա եւ ասէ. Քա՛ւ լիցի մեզ ուտել ինչ՝ մինչեւ իցեմք ողորմութեամբն Աստուծոյ վանեալք զթշնամիսն մեր: Զի խորհուրդ եւ ջան էր նորա զգործ պատերազմին փութով վճարել, վասն զի ատուրը միով յառաջ քան զայն՝ այլազգիքն զրեալք էին յայնկոյս Երասխ գետոյն զօրականացն Թուրքաց, գալ յօգնութիւն հասանիլ նոցա. եւ նոքա ի պատրաստի էին բազում զնդաւ գալ ի թիկունս հասանել նոցա: Ուտի վաղվաղակի Պայինտուրն հանդէս առնէր ամենայն զօրուն եկելոյ ընդ նմա, եւ որք ի յամրի անդ էին, եւ կարգէր կազմէր, եւ զնոսա երիս գունդս բաժանէր, առ իւրաքանչիւր գունդ՝ ութն հարիւր վաթսուն սպառազէն վառեալ: Ապա զմի գունդն ընդ առաջ հանէր ճակատու թըշնամեացն, եւ այլ երկու գունդքն ձայն տուեալ խրախոյս բարձին, ի վերայ յարձակեցան՝ յաջմէ եւ յահեկէ զօրացն Թուրքաց, եւ ի վեշտասաներորդ ժամէ աւուրն մինչեւ քսան եւ երեք ժամն՝ ի մէջ առեալ զբազմութիւն զօրացն անօրինացն, հարին կոտորեցին ի նոցանէ աւել քան զմտասան հազար այր, եւ զայլան ի փախուստ արկին ի յՈւրդուար, եւ ձերբակալ արարին զգլխաւոր նոցա՝ զՀաճի Շափին: Եւ առին ի նոցանէ զամենայն զկահճ եւ զկարասի, զզէն, զսուր եւ զամե-

վեցին, Ափքիսի կողմերից անցնելով, եկան մտան Մեղրի: Իսկ Թուրքերի զորքերը, երբ իրենց բանակատեղից տեսան հայոց զորքերի բազմությունը, շէին հավատում, թե ուրիշ տեղից օգնություն է հասել, այլ ասում էին՝ «Մեղրեցիները իրենց կանանց տղամարդու շոր և պատերազմի զարդ են հագցրել ու նրանց ձեռքը տվել բազում սուտ դրօշակներ՝ մեզ վախեցնելու համար»:

Սրանք դեռևս Մեղրի շէին հասել, քաջ ու արի մեղրեցիների զորքերը այն գիշեր սխարանքներ գործեցին: Անցնելով գետի մյուս ափը, անսպասելի ժամի թշնամու բանակի մեջ մտան և նրանցից շատերին սուր-սուսերով խորտակեցին, իսկ Շահխալամի որդուն երկու հազարով Ուրդուար քաղաքը հալածեցին: Եվ որովհետև [իրենք] քիչ էին, շկարողացան իսպառ ջնջել և վերացնել նրանց այնտեղից, վերստին դարձան Մեղրի:

Իսկ երբ հայոց օգնականները եկան և Մեղրիի Մեծ թաղը հասան, մեղրեցիները շտապ նրանց համար կերակուր պատրաստեցին: Այնժամ Պայինտուրը, որ իշխան էր և իր հետ եկած ամբողջ զորքի հրամանատարը, արգելեց նրանց, ասելով. «Մենք ոչինչ չենք ուտի, մինչև Աստուծու ողորմածությունը մեր թշնամիներին չվճարենք»: Որովհետև նրա մտածմունքն ու ձգտումը պատերազմի գործն արագ վերջացնելն էր, քանի որ դրանից մեկ օր առաջ այլազգիները զրել էին Թուրք զորականներին, որոնք Երասխ գետի մյուս կողմում էին, որ գան հասնեն իրենց օգնության, և նրանք պատրաստ էին բազում զնդերով գալու սրանց օգնության: Ուտի Պայինտուրը շտապ զորահանդես արեց իր հետ եկած և ամբողջում եղած բոլոր զորքերի, դասդասեց և նրանց երեք գնդի բաժանեց, յուրաքանչյուրը՝ ութ հարյուր վաթսուն սպառազեն մարդով:

Ապա մի գունդն ընդառաջ ուղարկեց թշնամիների դեմ ճակատելու, իսկ մյուս երկու գնդերը ձայն տալով խրախոյս կարողացին և վրա հասան Թուրքական զորքերին աջից ու ձախից և օրվա տասնվեցերորդ ժամից մինչև քսաներեքերորդ ժամը իրենց մեջ առան անօրենների զորքերի բազմությունը և նրանցից կոտորեցին ավելի քան տասնմեկ հազար մարդ ու մյուսներին հալածեցին Ուրդուար, իսկ հաճի-Շափինն նրանց զխավորին, ձերբակալեցին: Նրանցից խլեցին ամբողջ գույքը, զենքը, սրերն ու պատերազմական մյուս գործիքն-

նայն գործիս պատերազմին, եւ զամենայն զառ եւ զաւար
նոցա. եւ եղև ուրախութիւն մեծ ամենայն բնակչացն Դափա-
նու: | Եւ ի նմին պատերազմի անկան ի սոցանէ Մուրում հա-
լանթարն Լէվազեցի, եւ որդի հօրեղբօր նորին եւ այլ բա-
զումք: Իսկ զՀաճի Շափին՝ զոր բարեւեցին, Պայինտուր գօ-
րապետն կամեցաւ տանիլ զնա առ Դափթ Պէկն, բայց իշ-
խանքն Մեղրեայ աղաչեցին զնա՝ թողուլ զՀաճին անդ առ
նոսա, եւ նա շնորհեաց նոցա: Եւ եղին զնա ի կալանս ի տան
տեառն Ներսէսի, եւ զօրականքն ամենեքեան գնային իւրա-
քանչիւրքն ի տունս իւրեանց: | Այլ եւ գիւղականքն Գուրհա-
մայ, որք վասն աճի հինիցն անցեալք էին յերկիրն Չավնդուր,
որպէս ի վեր ասացաք, դարձան գնացին եւ բնակեցան իւրա-
քանչիւրն ի տեղիս իւրեանց:

Յետ այսորիկ իբրեւ մի ամ ի վերայ անցանէր, եղբայրն
խանին Երեւանայ զբազում զօրս կուտէր, եւ երթալը յօգնու-
թիւն եղբօրն իւրոյ, զի էր պաշարեցեալ նա ի յամուրն Երե-
ւան քաղաքի, ի զօրացն Օսմանցոց: Արդ՝ սա իբրեւ բազում
զօրօք գայր, ի յՈւրդովար քաղաք հասանէր, ամենայն մահ-
մետականք քաղաքին ընդ առաջ լինէին նմա, եւ բողոք բառ-
նային զՀայոցն Մեղրեայ, եւ ասէին, Դատ արա ընդ Մեղրա-
ցիսն, զի նոքա կոտորեցին կորուսին զամենայն արս քաղա-
քիս: Եւ նա առաքեաց զժմանս ի ծառայիցն ի Մեղրի, երթալ
կոչել առ ինքն զժմանս զխաւար իշխանացն՝ առ ի գիտե-
զպատճառ այնպիսոց աղմկին:

Իսկ իշխանքն Մեղրեայ իբրեւ զայն լսէին, տագեապէին
վարանէին ի միտս իւրեանց, ի միասին ժողովէին, խորհուրդ
խորհէին, եւ ասէին. Զի՞նչ արասցուք, զի եթէ երթամք առ
նա՝ վիշտ վտանգի է մեզ, եւ եթէ ոչ ելցուք՝ մեծ վտանգ է
մեզ եւ ժողովրդեանս: Վերջապէս հաւանեցան ոմանք ի նո-
ցանէ՝ վասն օգտի հատարակութեան՝ զվտանգ մահուն յանձն
առնուլ, երթալ ընդ սպասաւորսն իսանին: Եւ իբրեւ ելին զնա-
ցին ընդ նոսա, եւ հասին ի յՈւրդովար քաղաք, քաղաքացիքն
առհասարակ դիմեցին ի վերայ նոցա՝ սպանանել զնոսա.
բայց ծառայք իսանին ոչ ետուն նոցա թողլ, մինչեւ ածին կա-
ցուցին զնոսա առաջի իսանին, եւ քաղաքացիքն զհետ երթա-
լին նոցա. եւ իբրեւ յանդիման եղեն իսանին, սկսան վերստին
քաղաքացիքն գաղաղակ բռնեալ եւ ասել. Դատ արա ընդ մեզ
եւ ընդ Մեղրացիսդ, զի կորուսին սպառեցին զմեզ: Եւ ի հար-

քը, նրանց ամբողջ ավարն ու կողոպուտը, և մեծ ուրախու-
թյուն եղավ Դափանի բոլոր բնակիչներին. Այդ պատերազ-
մում սրանցից ընկան լազցի Մուրում, հայանթարը, նրա
հօրեղբոր որդին և շատ ուրիշներ: Իսկ Հաճի-Շափին, որ
բռնեցին, Պայինտուր զորապետն ուղեց տանել Դավիթ-Բեկի
մոտ, բայց Մեղրիի իշխաններն աղաչեցին նրան, որ հաճիին
թողնի այնտեղ՝ իրենց մոտ, և նա զիջեց նրանց: Նրան կա-
լանավորեցին տեր Ներսեսի տանը, իսկ զօրականները զնա-
ցին իրենց տները: Իսկ Գուրհամի գլուղացիները, որ ավա-
զակների աճից անցել էին Չավնդուրի երկիրը, ինչպես վե-
րևում ասացինք, դարձան գնացին ու բնակվեցին յուրաքան-
չյուրն իր տեղում:

Մոտ մեկ տարի անց Երևանի խանի եղբայրը բազում
զորք հավաքելով գնաց իր եղբորն օգնության, որովհետև նա
պաշարված էր օսմանցիների զորքերի կողմից՝ Երևան քա-
ղաքի ամրոցում: Եվ երբ սա մեծաթիվ զորքով եկավ հասավ
Ուրդուար քաղաքը, տեղի բոլոր մահմեդականները նրան ընդ-
առաջ ելան և բողոքելով Մեղրիի հայերից, ասացին. «Դա-
տասցուք տես մեղրեցիներին, որովհետև նրանք կոտորեցին,
ոչնչացրին քաղաքիս բոլոր տղամարդկանց»: Եվ նա ծառա-
ներից մի քանիսին ուղարկեց Մեղրի, իր մոտ կանչելու զը-
խավոր իշխաններից ոմանց, իմանալու համար այդպիսի աղ-
մուկի պատճառը:

Իսկ Մեղրիի իշխանները լսելով այդ անհանգստացան,
երկմտեցին, հավաքվեցին միատեղ, խորհրդակցեցին և ա-
սում էին. «Ի՞նչ անենք. քանի որ եթե գնանք նրա մոտ՝ մեծ
վտանգ է մեզ, չգնանք՝ նույնպես մեծ դժբախտություն է մեզ
և ամբողջ ժողովրդին»: Վերջապէս, նրանցից ոմանք որոշե-
ցին հասարակության շահի համար մահվան վտանգը հանձն
առնել ու գնալ խանի սպասավորների հետ: Եվ երբ ելան
գնացին նրանց հետ և հասան Ուրդուար քաղաքը, բոլոր քա-
ղաքացիները հարձակվեցին, որ սպանեն նրանց: Բայց խա-
նի ծառաները նրանց թույլ չտվին, մինչև տարան հասցրին
իրենց խանի մոտ, և քաղաքացիները գնացին նրանց հետ:
Երբ խանին ներկայացան, քաղաքացիները նորից սկսեցին
աղաղակել և ասել. «Դատ արա մեր և այդ մեղրեցիների մի-
ջև, որովհետև կործանեցին, սպառեցին մեզ»: Եվ խանի հար-

ցանելն համին զՄեղրացիսն, պատասխանի առնէին նմա՝ թէ մեք ոչ ումեք դոցա մեղաք, եւ զոչ ոք ի դոցանէ ի զուր տարապարտուց սպանաք. այլ որքա զբազում զօրս կուտեցին, եւ էլին ի վերայ մեր, զբազում գիւղորէս մեր կոտորեցին կործանեցին եւ ի գերի վարեցին, ապա ի զուր տարապարտուց եկին պաշարեցին զմեզ, եւ կամեցան բնաջինջ առնել զմեզ. եւ մեք առ ի պաշտպանել զմեզ ընդդէմ ելաք դոցա, եւ ի բաց վանեցաք:

Յայնժամ ասէ համն ցլորդովարեցիսն. Ո՞վ հրամայեաց ձեզ ելանել ի վերայ նոցա՝ առ ի կողոպտել եւ կորուսանել զնոսա: Եւ նոքա ափիբերան եղեն | եւ ոչ կարացին տալ պատասխանի առ այն: Ապա ասէ ցնոսա Խանն. Ո՞վ եղեւ ձեզ առիթ եւ առաջնորդ ելանելոյ ի վերայ նոցա: Եւ նոքա ասեն. Սափի Ղուլի Լեւազեցի, որդի Մանիշարի եւ որդին Ղազու Ուրդովարեցի, եւ որդի Շահիսլամին: Եւ կալեալ Խանին զՍափի Ղուլին՝ խրատեաց զնա խստագոյն գանիւք, եւ էառ ի նմանէ գտուզանս: Եւ զՄեղրացիսն արձակեաց խաղաղութեամբ ի տեղիս իրեանց, եւ ինքն չուեաց անտի:

Ապա այնուհետեւ սկսան Ուրդովարեցիքն առնել զհաշտութիւն ընդ Մեղրացիսն, եւ խնդրեցին արձակել նոցա զՀաճի Շափին. եւ սոքա եւս խնդրեցին ի նոցանէ արձակել զգերիսըն՝ զօրս գերեցին ի գիւղորէիցն, եւ յանձն առին արձակել զնոսա. յայնժամ Մեղրացիքն գրեցին առ զօրագլուխս Ազուլեցուց, որպէս զի ընկալցին ի յՈւրդովարեցուց զեօթանասուն անձինս Հայոց՝ գերեալս ի նոցանէ, եւ ազդ արասցեն ինքեանց՝ թէ ընկալան զնոսա, որպէս զի եւ ինքեանք արձակեսցեն զՀաճի Շափին: Եւ արարին այնպէս. եւ սոքա արձակեցին զՇափին, եւ այնուհետեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ նոցա:

Արդ այս ամենայն իբրեւ այսպէս անցանէր, ապա Դաւիթ Պէկն զգօրակաւեսն իւր ի լեառն Ղազանկուլու՝ ի վերայ Թուրքմանացն առաքէր. | որոց հասեալ անդ՝ գիշերայն անկան ի վերայ բնակչաց լիւրին, եւ հարին կոտորեցին զնոսա, եւ առին զամենայն ստացուածս նոցա եւ դարձան. վեց հազար երեք հարիւր ոչխար, եւ շորս հազար հարիւր երեսուն զայլ անասունս նոցա: Եւ մինչ զեռ զհետ մտանէին սոքա փախստէիցն՝ պատահեցաւ Մխիթար սպարապետն միայնակ առաջի թշնամեացն, առ որ քարածիգ լեալ՝ կալան. եւ նա

ցումին մեղրեցիները պատասխան տվին. «Մենք դրանց ոչ մեկի դեմ մեղավոր չենք և դրանցից ոչ մեկին իդուր չենք սպանել, այլ դրանք բազում զորք հավաքեցին և հարձակվեցին մեզ վրա, մեր բազմաթիվ զյուղերը կործանեցին ու կոտորեցին, գերի տարան, ապա իզուր, առանց պատճառի, եկան և մեզ պաշարեցին, ուղեցին բնաջնջել մեզ: Եվ մենք մեզ պաշտպանելու համար ելանք դրանց դեմ և հետու վանեցինք»:

Այնժամ խանն ասում է ուրդուարցիներին. «Ո՞վ հրամայեց ձեզ հարձակվել նրանց վրա՝ կողոպտելու և կոտորելու համար»: Եվ նրանք պապանձվեցին ու շկարեցան պատասխանել: Ապա խանը նրանց ասում է. «Ո՞վ եղավ ձեզ առիթ ու առաջնորդ՝ նրանց վրա հարձակվելու»: Եվ նրանք ասում են՝ «Լեւազի Սափի-ղուլին, Մանիշարի որդին և ուրդուարցի Ղազի որդին և Շահիսլամի որդին»: Եվ խանը, բռնելով Սափի-ղուլիին, խստագոյն գանահարութեամբ խրատեց և տուգանք վերցրեց նրանից: Իսկ մեղրեցիներին խաղաղութեամբ թողեց իրենց տեղերը, և ինքը հեռացավ այնտեղից:

Այնուհետեւ ուրդուարցիք հաշտութեան կնքեցին մեղրեցիների հետ և խնդրեցին արձակել հաճի-Շափիին: Սրանք ևս խնդրեցին արձակել գերիներին, որոնց վարել էին գյուղերից, և հանձն առան արձակել նրանց: Այն ժամանակ մեղրեցիները գրեցին ազուլեցուց զորագլուխներին, որպեսզի ուրդուարցիներից ստանան հայոց յոթանասուն հոգին, որ գերվել էին նրանցից, և իրենց հայտնեն, որ ստացել են, որպեսզի իրենք ևս արձակեն հաճի-Շափիին: Եվ այդպես արեցին և սրանք արձակեցին Շափիին, և այնուհետեւ խաղաղութեան եղավ նրանց միջև:

Այս ամենը երբ այսպես եղավ Դաւիթ-բեկն իր զորականներին ուղարկեց Ղազանկուլ լեռը՝ Թուրքմանների դեմ: Նրանք այնտեղ հասան, գիշերով հարձակվեցին լեռնաբնակների վրա, խփեցին, կոտորեցին նրանց և խլեցին նրանց ամբողջ ստացվածքը՝ վեց հազար երեք հարյուր ոչխար, շորս հազար հարյուր երեսուն այլ կենդանիներ և վերադարձան: Ու մինչ զեռ հետապնդում էին սրանք փախչողներին, Մխիթար սպարապետը միայնակ հանդիպեց թշնամիներին, և նրան քարկոծելով բռնեցին: Իսկ նա աղաղակեց և ասում է. «Հասե՛ք

աղաղակեաց եւ ասէ. Հափք ինձ, զի մատնեցայ ի ձեռք
Թուրքաց. եւ առժամայն աճապարեալ տէր Աւետիսն՝ թա-
փեաց զնա ի ձեռաց նոցա: Եւ առեալ զամենայն զոռ եւ զա-
ւարն՝ դարձան Հայի ձոր առ Դաւիթ. որոյ տեսեալ զայն ա-
մենայն՝ ուրախ լինէր: Եւ յետ տասն աւուր դարձեալ առաք-
էր զնոսա ի լեռան Կասպելու՝ ի վերայ Թուրքմանաց. եւ զը-
նացին հասին անդ, եւ հարին զնոսա, եւ առին զինչս՝ նոցա,
եւ զանասունս ինն հարիւր, եւ դարձան:

Դարձեալ ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ ցնդ ինչ Թուրքացի
Պարկուշատայ գային ի լեռնակողմանս Ղափանու վրանօր
բնակէին վասն խստութեան տօթոյ երկրի իրեանց, տրպէս
եւ յայլ ամենայն ժամանակս ամաբայեռն ասնէին: Արդ՝ իր-
բեւ զայն լսէր Դաւիթ Պէկն, վաղվադակի զՄխիթար սպարա-
պետն իւր հազար ութ հարիւր վառելովք | ի վերայ նոցա ա-
ռաքէր. եւ նա երթայր յուղէր եւ հետամուտ լեալ գտանէր զը-
նոսա ի վերին կողմանս Կարմիր վանք կոչեցեալ ասանին, եւ
ի վերայ հասանէր նոցա յառաւօտու պահուն, հարկանէր եւ ա-
ռեալ զամենայն ինչս նոցա եւ զանասունս՝ դարձաւ: Բայց
Խանն Պարկուշատայ բազում զօրօք աճապարէր ընդ առաջ ե-
լանել ի կողմանս Խոտանանու. իբրեւ զայն տեսին զօրական-
քրն Հայոց, սաստկացուցին ի վերայ նոցա պատերազմն
մինչեւ յետս նահանջեցին զնոսա անտի, եւ սկսան հարկանել
զվիրաւորս ի նոցանէ: Այլ Մխիթար սպարապետն, վասն զի
էր խոռովեալ ընդ տեառն իւրոյ Դաւիթ, ուստի իբրեւ սկսան
սորա հարկանել զթշնամիսն եւ վտանել, հրամայեաց Մխի-
թարն զօրավարացն յետս կալ ի պատերազմէն, եւ արարին
այնպէս. բայց որք յառաջագոյն զօրքն էին, իբրեւ տեսին թէ
զիկի եղեալքն դարձան յետս, համարեցան թի ի փախուստ
դարձան ի պատերազմէն, եւ սկսան իւրաքանչիւրքն խոյս տալ
ելանել ի պատերազմէ: Իսկ զօրք թշնամեացն իբրեւ զայն
շփոթ տեսանէին, ընդդէմ դառնային սոցա, ի վերայ յարձակ-
էին, հասանէին հարկանէին ի սոցանէ երեք կամ շորեքհա-
րիւր այր, եւ զոմանս ի նոցանէ կենդանի կալեալ մեծաւ տան-
ջանօք ի Պարկուշատ ածէին. ընդ որս էր եւ Ստեփանոս
Շահումանեան (sic): Եւ իբրեւ զայն լսէր Դաւիթ, ի սրբո-
ւորութիւն բարկութեան բողէր ի վերայ Մխիթարայ, եւ հրա-
ման տայր զկառափն հարկանելոյ. բայց միջնորդ լեալ մե-
ծամեծացն՝ հազիւ դարձուցին զվճիռ մահու նորա, եւ սուգ

ինձ, որովհետեւ մատնվել եմ թուրքերի ձեռքը»: Եվ փութա-
լով, տեր Ավետիսն անմիջապես աղատեց նրան թշնամիներին
ձեռքից և վերցնելով ամբողջ առն ու ավարը, դարձան Հա-
լիձոր, Դավթի մոտ, որը տեսնելով այդ ամենը, ուրախացավ,
եվ տասն օր անց նրանց նորից ուղարկեց Կասպել սարը՝
թուրքմանների վրա: Եվ զնացին հասան այնտեղ և խփեցին
նրանց, առան նրանց դույքը և ինն հարյուր անասուն ու
վերադարձան:

Դարձյալ այդ օրերին Պարկուշատի թուրքերի մի ցեղ
գալիս, վրաններով բնակվում է Ղափանի լեռնակողմերում,
ինչպես անում էին միշտ ուրիշ ժամանակներ՝ ամռանը, ի-
րենց բնակավայրի տոթի խստության պատճառով: Երբ Դա-
վիթ-Բեկն այդ լսեց, անմիջապես իր սպարապետ Մխիթարին
հազար ութ հարյուր զինյալներով նրանց վրա ուղարկեց, և
նա զնալով փնտրեց ու գտավ նրանց Կարմիր վանք կոչված
ավանի վերին կողմերում և հարձակվեց նրանց վրա առա-
վոտյան, խփեց և առնելով նրանց ամբողջ ինչքը և անասու-
նը՝ վերադարձավ: Բայց Պարկուշատի խանը բազում զոր-
քով շտապ ընդառաջ է գալիս Խոտանանի կողմերում: Հայոց
զորականները, երբ այդ տեսան, սաստկացրին նրանց դեմ
կռիվը, մինչև ստիպեցին նրանց նահանջել, և սկսեցին նրանց
վիրավորներին խփել:

Բայց քանի որ Մխիթար սպարապետը նեղացած էր իր
տեր Դավթից, ուստի, երբ սրանք սկսեցին կոտորել թշնա-
միներին և վտարել, Մխիթարը հրամայեց զօրավարներին
հետ գալ պատերազմից, և այդպես արեցին: Սակայն առա-
ջամարտիկները, տեսնելով, որ ետևում եղած զորքը հետ
դարձավ, մտածեցին, թի նրանք փախչում են պատերազմից,
և սկսեցին բոլորք խույս տալ մարտից: Այդ իրարանցումը
տեսնելով՝ թշնամիների զորքը դարձավ սրանց դեմ. հար-
ձակվեցին, հասան սպանեցին սրանցից երեք կամ չորս հարյուր
մարդ, իսկ նրանցից ոմանց կենդանի բռնելով՝ մեծ տանջանք
[պատճառելով] Պարկուշատ հասցրին, որոնց մեջ էր և Ստե-
փանոս Շահումայանը: Երբ Դավիթն այս լսեց, սաստիկ բար-
կացավ Մխիթարի վրա և հրամայեց գլուխը կտրել: Բայց մե-
ծամեծները միջնորդեցին և ղօվարությամբ փոխեցին մահ-

էառ Դաւիթ ի վերայ քաջին Ստեփաննոսի, եւ այնքան զօրու-
ցըն ի զուր տարապարտուց կորուսելոյ:

Իսկ Ստեփաննոս իբրեւ ածեալ եղեւ ի Պարկուշատ, զտա-
անդ ի տան Խանին բարեւէր ոմն Թուրք, որ գթացեալ ի նա-
փախոյց. եւ իբրեւ ազդ եղեւ Դաւիթի գերծումն նորա՝ մխի-
թարեցաւ ի սգոյն:

Ըր ընդ կոտորեալսն նաեւ Պալի զորավարն՝ որդին մելիք
Փարսազանի, որոյ զզուխն հատեալ, ընկեցեալ էին ի բացի-
զնա մերձ ի Խոտանան, բայց ոչ զբոլոր պարանոցն, այլ մին-
չեւ ցկէս ուլանն, ուստի յետ սակաւուց, իբրեւ ուշն ի վերայ
զայր՝ կալեալ զզուխն ի վերայ իւր, երթայր մտանէր ի մա-
ցառս վայրեացն մինչ ցմութ գիշերոյն, եւ ի գիշերի յուղի-
անկեալ զայր, եւ յետ երկց աւուրց ի Հալի ձոր հասանէր: Եւ
եղեւ սքանչացումն յոյժ ամենայն տեսողաց՝ զի ոչ մեռաւ,
այլ կենդանի է մինչեւ ցայսօր, եւ է մելիք ի Հալի ձոր:

վան վճիռը: Եվ սուգ արեց Դաւիթը քաջ Ստեփաննոսի և իզուր
կորսված այնքան զորքի համար:

Իսկ Ստեփանոսը, երբ տարվեց Պարկուշատ, այնտեղ խա-
նի տանը հանդիպեց մի բարեսեր Թուրքի, որ գթալով նրան՝
փախցրեց: Եվ երբ Դաւիթը տեղեկացավ նրա ազատվելու
մասին, մխիթարվեց սգից:

Սպանվածների մեջ էր նաև Պալի զորավարը՝ մելիք Փար-
սազանի որդին, որի պարանոցը կիսով շափ կտրել, [իրեն]
գցել էին մի բաց տեղ, Խոտանանի մոտ: Բայց [կտրել էին]
ոչ թե ամբողջ պարանոցը, այլ ողի կեսը միայն: Ուստի քիչ
անց ուշքի գալով, ձեռքով զուխն իր վրա բռնած՝ զնաց մը-
տավ վայրի մացառների մեջ, մինչև օրվա մթնելը և գիշերը
ճանապարհ ընկնելով եկավ ու երեք օր հետո հասավ Հալի-
ձոր: Եվ բոլոր տեսնողները շատ զարմացան, որ չէր մահա-
ցել, և կենդանի է մինչև օրս և մելիք է Հալիձորում:

Թէ ԶՐԱՐԳ ՕՍՄԱՆՅԻՆ ԵԿՆ ԵՒ ԵՄՈՒՏ Ի ՂԱՓԱՆ, ԵՒ Թէ
 ԶՈՐՔԱՆ ՄԱՐՏՍ ՊԱՏԵՐԱԶՄԱՅ ԵՏՈՒՆ ԸՆԴ ՆՈՍԱ
 ԴԱԻԻԹ ԵՒ ՔԱԶ ԶՕՐԱԿԱՆՔ ՆՈՐԱ. ԵՒ Թէ ԶՈՐՔԱՆ
 ՄԵՏԱՄԵՍ ԶԱՂԹՈՒԹԻԿԱ ԱՐԱՐԻՆ Ի ՆՈՍԱ:

Յամի Տեառն 1724ին, եւ ի թուին՝ Հայոց ՌՃՀԳին, Սուլ-
 տան Ահմէտն Օսմանցոց, որ բռնակալիցալ ունէր ի պարսկա-
 կան ծոցոյն ովկիանու մինչեւ ցԵգիպոսս եւ ցԼիբիայ, եւ ան-
 տի մինչեւ ցԼիւրիկէ, եւ մինչեւ ցբոլոր ծովն Պոնտոսի, եւ
 զմեծ մասն Հայոց, եւ զայլ բազում ազգս եւ զթագաւորու-
 թիւնս եւ զիշխանութիւնս եւ զաշխարհս նոցա, իբրեւ լսէր
 զվտարումն Պարսից արքային ի հայրենի աթոռոյն, խորհե-
 ցաւ զիարդ եւ իցէ պատճառանօք յինքն գրաւել զտէրութիւնն
 զայն: Ուստի հրաման տայր իշխանի զօրուն ելանել, զօրա-
 ժողով լինիլ յամենայն աշխարհաց, եւ երթալ հասանիլ ի վե-
 րայ Պարսից, եւ ունիլ զբաղաքս նոցա. եւ ել նա ըստ հրա-
 մանի արքային՝ անթիւ անհամար զօրօք ի կողմանս մեծին
 Հայոց, որ ի վիճակին Պարսից, եւ ուր ուրեք հասանէին՝ ի
 սուր սուսերի սատակէին զամենայն դիմակացս իւրեանց, եւ
 զօրքն ամենայն դառնային բազում | աւարաւ ամ յամէ, մինչ
 յղփացան փարթամացան եւ լցին զամենայն բաղաքս եւ
 զգիւղս իւրեանց ի բազմութենէ աւարաց եւ գերեաց՝ ի Հայոց
 ՝ եւ ի Պարսից. բայց ո՞ կարէ պատմել զաղէտս մարդ եւ տղա-
 յոց ի ձեռաց անօրէն գերչացն, եւ զնոցին հարց եւ եղբարց
 անողորմ կոտորած:

Արդ սոքա իբրեւ այսպէս զօրացան ի կողմանս յայնոսիկ,
 եւ զմայրաքաղաքն Երեւանու յետ բազում ժամանակաց պա-
 շարմանն առին, եւ զամենայն բնակիչս ի սուր սուսերի մա-
 շեցին: Ապա յամի Տեառն 1726ին, եւ ի թուին Հայոց հազար
 հարիւր հօթանասուն եւ հինգերորդին, անթիւ անհամար զօ-

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՕՍՄԱՆՅԻՔ ԵԿԱՆ ԵՎ ՄՏԱՆ ՂԱՓԱՆ, ԻՆՉՔԱՆ
 ՄԱՐՏԵՐ ՄՂԵՅԻՆ ՆՐԱՆՅ ԴԵՄ ԴԱՎԻԹՆ ՈՒ ԻՐ ՔԱԶ
 ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ, ԵՎ ԹԵ ՈՐՔԱՆ ՄԵՏԱՄԵՍ
 ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱՆ ՆՐԱՆՅ ԴԵՄ

Տիրոջ 1724 և հայոց 1173 թվականին օսմանցիւնքի սուլ-
 տան Ահմէտը, որ բռնությամբ տիրում էր Պարսից ծոցից
 մինչև Եգիպոսս և Լիբիա, և այնտեղից մինչև Լյուրիկե ու
 մինչև Պոնտոսի ամբողջ ծովը և Հայաստանի մեծ մասը և
 այլ բազում ազգերի, թագավորութիւններ և իշխանութիւն-
 ներ ու նրանց երկրները, երբ լսեց պարսից արքայի վտարվե-
 լը հայրենի գահից, մտածեց ինչ հնարով լինի յուրացնել այդ
 տերութիւնը: Ուստի հրամայեց զօրապետին ելնել, զօրա-
 ժողով անել բոլոր աշխարհներից և գնալ հարձակվել Պարս-
 կաստանի վրա, զավթել նրանց բաղաքները: Արքայի հրա-
 մանով նա անթիվ ու անհամար զորքով հասավ Մեծ Հայաս-
 տանի [այն] կողմերը, որ Պարսկաստանի ձեռքին էր: Եվ
 որտեղ պատահեին՝ սրով ու սուսերով կոտորում էին իրենց
 դիմադրողներին, և բոլոր զորքերը վերադառնում էին հա-
 բուստ ավարով տարեցտարի, մինչև հղփացան, հարստա-
 ցան և իրենց ամբողջ բաղաքներն ու դնուկներ լցրին ավար-
 ներով ու բազմաթիվ գերիներով՝ հայերից ու պարսիկնե-
 րից: Բայց ո՞վ կարող է պատմել մայրերի ու զավակների՝
 անօրեն զավթիչներից կրած աղետները և նրանց հայրերի ու
 եղբայրների անողորմ կոտորածը:

Սրանք որ այսպես զորացան այն կողմերում և Երեւանի
 մայրաքաղաքը երկարատև պաշարումից հետո գրավեցին,
 ամբողջ բնակչութիւնը սրի մատնեցին: Ապա Տիրոջ 1726 և
 հայոց 1175 թվականին անթիվ-անհամար զորքով Սյունյաց

բօք մխեցան յաշխարհն Սիւնեաց, եւ հասին պատեցին ի շո-
րից կողմանց գերկիրն Դաւթի, զեօթնաբերդ գաւառն Դափա-
նու: Յայնժամ ամենայն բնակիչք գաւառին առհասարակ խո-
վեցան սասանեցան, թողին լքին զԴաւթի, եւ գնացին մտին
ընդ լծովն Օսմանցոց: Եւ մնաց Դաւթի միայն եօթնետասն
սպառազէն արամք ի յանապատն Հալի ձորոյ, ուր կանգ-
նեալ էր զանառիկ բերդն. ընդ նմա էին նաեւ երեք եպիս-
կոպոսունք եւ երեքտասան քահանայք, զհետ գնացին նաեւ
Տէր Աւետիսն եւ Մելիք Փարսաղան՝ սակաւ ռամբք, զի զօր-
քն ամենեքեան թօթափեցան ի նոցանէ: Բայց Դաւթի յայսմ
ամենայնի տլ լքաւ, ոչ կասեցաւ ի խորհրդոցն, ոչ զանգիտեաց
ի բաղմութենէ՝ բարբարոսացն, ոչ դադարեցաւ ի քաջագոր-
ծութեանցն եւ ոչ յուսահատեցաւ յողորմութենէ Աստուծոյ: Այլ
արիաբար զբերդն ամրացուցանէր, զհամբարս բերդին առ-
նէր, զզօրականս առ ինքն ժողովէր եւ բաղմացուցանէր, եւ
զամենակարն զԱստուած յօգնութիւն ինքեան կոչէր:

Արդ՝ յամսեանն իններորդի յետ գալստեան Օսմանցոց ի
Դափան, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի, ե-
կին հասին ի Դափան ի Սուլտան Ահմէտէն՝ Պէքիր փաշայն,
եւ Արապ Ալի փաշայն՝ բազում զօրօք, ընդ ինքեանս առեալք
նաեւ զՓաթալի Խանն Պարկուշատու. յետ այսորիկ հրաման
տային ի տեղեաց տեղեաց աշխարհին ամենայն զօրաւորաց
Հայոց եւ Թուրքաց զալ ժողովիլ անդր. եւ եկին հասին առ
նոսա յամենայն կողմանց զօրքն Թուրքաց՝ ընդ ինքեանս
առեալք նաեւ զզօրսն Հայոց ի Գողթան գաւառէն, ի յԱզուլիս
քաղաքէն, ի յՈւրդուարայ, ի Փիսիանայ, ի Պարկուշատայ, ի
Դափանու, ի Մեղրեայ, ի Չանդրու, նաեւ զԹուրքսն Դարա-
չօրու, եւ զնոսա որք բնակեալք էին ի Սեաւ լերինս: Եւ զի
մի՛ այլապէս թեոսցի բանս այս, զսակաւս ի բազմաց ասաս-
ցուք, | եղեն իբրու վաթսուն կամ եօթանասուն հազար, եւ
առաւել եւս բազում յոյժ, մինչեւ ընդ բազմութիւն հեծելոց
եւ հետեւակաց նոցա զդաշտս եւ զլերինս: Եւ հանդէս արա-
րեալ ամենայն զօրացն, կարդեցան պատրաստեցան դիմե-
ցին զալ ի վերայ Դաւթի Պէկին, եւ եկին բանակեցան յայն-
կոյս գետոյն Հալի ձորոյ, ի յերեքտասներորդում արուր քա-
ռասնորդաց պահօցն: Իսկ որք ընդ Դաւթի էին զօրք, զայն ա-
հագին բազմութիւնն յորժամ տեսանէին՝ զարհուրէին, եւ բա-
զումք ի նոցանէ երթային առ փաշայն եւ անձնատուր լին-

աշխարհը մտան և հասան, բոլոր կողմերից շրջապատեցին
Դավթի երկիրը՝ Դափանի յոթնաբերդ գավառը: Այնժամ գա-
վառի բոլոր բնակիչները խառնվեցին, խուճապի մատնվեցին,
լքեցին Դավթին և գնացին օսմանցիների լծի տակ մտան: Եվ
Դավթը մնաց միայն տասնյոթ սպառազեն այրերով՝ Հա-
լիձորի մենաստանում, ուր կառուցել էր անառիկ ամրոցը:
Նրա հետ էին նաև երեք եպիսկոպոս, տասներեք քահանա,
ինչպեսև տեր Ավետիսն ու մելիք Փարսաղանը՝ սակավա-
թիվ մարդկանցով, որովհետև ամբողջ զորքը հեռացավ նրան-
ցից: Սակայն Դավթին այս պայմաններում չհուսալքվեց, չը-
հրաժարվեց իր ծրագրերից, չվախեցավ բարբարոսների բազ-
մությունից, չզաղարեց սիրանքներ գործելուց և Աստու-
ղորմածության հույսը չկտրեց, այլ արիաբար շարունակեց
ամրացնել բերդը, պատրաստել պահեստները, զորականնե-
րին հավաքել շուրջը, սովորացնել [բանակը] և ամենակալ
Աստուծուն իրեն օգնության կանչել:

Օսմանցիների Դափան գալու իններորդ ամսին, որ Դավ-
թի գալստյան հինգերորդ տարին էր, սուլտան Ահմետի կող-
մից եկան Դափան հասան Պէքիր և Արապ-Ալի փաշաները,
բազմաթիվ զորքով, իրենց հետ առած նաև Պարկուշատի Փա-
թալի խանին: Սրանից հետո նրանք հրաման արձակեցին, որ
երկրի տարբեր կողմերից հավաքվեն հայոց և թուրքերի բո-
լոր զինակիրները: Եվ եկան հասան նրանց մոտ բոլոր կող-
մերից թուրքական զորքերը, իրենց հետ բերելով նաև հայ-
կական զորքեր Գողթան գավառից, Ազուլիս քաղաքից, Ուր-
դուարից, Փիսիանից, Պարկուշատից, Դափանից, Մեղրից,
Չանդուրից, այլև զարաչորու թուրքերը և նրանք, որ բնա-
կություն էին հաստատել Սև սարում: Եվ որպեսզի այս խոսքը
ուրիշ կերպ չընկալվի, շատերից քիչը կասեմք. եղան մոտ
վաթսուն կամ յոթանասուն հազար և առավել ևս շատ, այն-
քան, որ նրանց հեծյալներն ու հետևակները լցրին դաշտերն
ու լեռները: Եվ բոլոր զորքերի ստուգատես անելով՝ դաս-
դասվեցին ու պատրաստվեցին Դավթի-Բեկի վրա գրոհելու:
Եվ եկան բանակեցին Հալիձորի գետի մյուս կողմում, քա-
ռասնորդաց պահօթ տասներեքերորդ օրը: Իսկ երբ Դավթը
հետ եղած զորականները տեսան այդ ահագին բազմությու-
նը՝ զարհուրեցին, նրանցից շատերը գնացին փաշայի մոտ և

էին. բայց որք քաջք եւ արիք էին՝ խիզախէին, եւ ի մարտ պատերազմի պատրաստէին:

Եւ էջ բանակեցաւ սակաւուք Դաւիթ ի յամրոցէն ի շէննոր էր յայսկոյս գետոյն, հանդէպ բանակի նոցա. եւ առաջնայ ընդ առաջ նոցա գունդ մի ի գօրայ հարիւր վաթսնից կալնուլ զանցս գետոյն: Եւ եկին կալան եւ ոչ թոյլ տային նոցա անցանել զգետն՝ զաւուրս երկուս. բայց յաւուրն երրորդի՝ թուփանքաւորքն Հայոց, որք ընդ գօրս Օսմանցոցն էին, անցին զգետն յայլ ուստեքէ, եւ եկին մտին կալան զմի կողմն շինին. եւ հատին զգօրսն Դաւթի: Իսկ Դաւիթ եւ գօրականքն իւր՝ երեք հարիւր յիսուն արամբ մտին ամրացան ի յամուրն անապատին: Եւ էանց յայս կոյս ամենայն բանակըն Օսմանցոց, եւ մատուցեալ շուրջ պահ արկին զբերդուն եւ կանգնեցին զնովաւ պատնէշ, եւ անտի զգնտակս թօփից եւ թուփանկաց ի ներքս հոսէին: Եւ սոքա ի ներքուստ առ արտաքս զնոյն ի նստին առնէին, եւ դատում վեց մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. եւ ի կողմանցն հակառակաց յաւուրն հարիւր, կամ երկու հարիւր, եւ երբեմն երեք կամ չորս հարիւր անկանէին. եւ ի սոցանէ հազիւ մի ոք կամ երկու վասն ամրութեան տեղոյն:

Բայց յաւուրն եօթներորդի ընդ այգ ընդ առաւօտն, որք պաշարեալ պահէին զամուրն, կազմեցան, պատրաստեցան, եւ դիմեալ մօտեցան ի պարիսպ անդր, այլ ոչ որպէս յերեկն եւ յեռանդն, զի զահագին մեծամեծ մեքենայս (ըստ կերպի մեծամեծ սանդղոց, թուով քսան եւ վեց) ընդ ինքեանց բարձեալ բերէին, զային մերձենային, եւ ի պարիսպ անդր յեցուցանէին, եւ բազմութիւնն խուժանին յերիս խումբս բաժանէին, եւ յերից կողմանց զրոհ տուեալ, ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին: Իսկ պահապանք պարսպացն ի վերուստ անտի հարեալ զնոսա՝ ի մեքենայիցն ի վայր թօթափէին, եւ բազմութիւնն գէշագէշ անկերոց նոցին, իբր վաղահասուկն թզոյ հարեալ ի սաստկութենէ կարկտի՝ զյատակըս մեքենայիցն ծածկէին. եւ զայն ամենայն ուղին համարեալ՝ յառաւօտէ մինչեւ ցութերորդ ժամ աւուրն մեծաւ գոշմամբ եւ տաքնապաւ ի վերայ պարսպացն դիմէին:

Անդ էր տեսանել զայն ասեղ տեսիլ կատաղեալ զօրացն ազմուկ աղաղակին. զի իբր զմեքենայսն կանգնեցին, հարիւրաւոր եւ հազարաւոր դրօշակիրքն յառաջ խաղացին, ապա

անձնատուր եղան: Բայց ովքեր որ քաջ ու արի էին՝ խիզախում էին և պատրաստվում մարտի:

Եվ Դավիթն իջավ բերդից ու ամրացավ գլուղում, որ գետի այս կողմն էր՝ նրանց բանակի հանդեպ, և թշնամուն ընդառաջ ուղարկեց մի զորագունդ, հարյուր վաթսուն հոգուց, գետանցները փակելու համար: Եվ եկան փակեցին և երկու օր նրանց թույլ չէին տալիս գետն անցնել: Բայց երրորդ օրը հայ հրացանակիրները, որ օսմանցիների զորքերի հետ էին, գետն անցան այլ տեղից և եկան մտան, գրավեցին գլուղի մի կողմը և մեկուսացրին Դավթի զորքերը: Դավիթն ու իր զորականները՝ երեք հարյուր հիսուն հոգի, մտան և ամրացան մենաստանի բերդում: Օսմանցիների ամբողջ բանակը գետն անցավ: Ստեփանյով բերդի շուրջը պահպանութուն կարգեցին և պատնէշ կանգնեցրին: Այնտեղից թնդանութների ու հրացանների գնդակներ էին ներս թափում: Եվ սրանք ներսից դուրս նույնը նրանց էին անում, վեց օր միմյանց դեմ կռվում էին. հակառակորդի կողմից օրական հարյուր կամ երկու հարյուր, երբեմն երեք կամ չորս հարյուր զոհ էր լինում, իսկ սրանցից՝ դիրքի ամրութեան շնորհիվ, հազիվ մեկ կամ երկու հոգի:

Բայց յոթերորդ օրը, լուսադեմին, ամրոցը պաշարողները փութով պատրաստվեցին ու մոտեցան պարսպին, ոչ թե երեկվա ու նախորդ օրվա նման, այլ իրենց ուսերին բարձած ահագին մեծ մեքենաներ՝ հսկայական սանդղոցների նման, թվով քսանվեց, բերում էին, զալիս մոտենում, հենում պարսպին, և խուժանի բազմութունը երեք խմբի բաժանած երեք կողմից զրոհելով, մեքենաների վրայով բարձրանում էին պարիսպները: Իսկ պարիսպների պահապանները վերեկից նրանց խփելով ներքև էին զորում մեքենաներից, և նրանց ղեկակների բազմութունը կարկտի սաստկութունից թափվող վաղահասուկ թզի նման ծածկում էր գետինը՝ մեքենաների տակ, և այդ բոլորը արհամարհելով, առավուտից մինչև օրվա ութերորդ ժամը մեծաձայն գոչուններով ու իրարանցումով դեպի պարիսպներն էին դիմում:

Պետք էր դիտել կատաղի զորքի ազմուկ-աղաղակի այդ ահավոր տեսարանը, որովհետև երբ մեքենաները դրեցին, հարյուրավոր ու հազարավոր դրօշակակիրներն առաջ շարժ-

գօրքն ամենայն զկնի հեղանէին, իբր յորձանս յորդախա-
ղաց զետոց ահագին զոյձամբ, եւ կամ իբրու ամեհիկ աքի-
ծովու յուզեալ ի բռնութենէ հողմոց՝ դարիւ եւ դարիւ գային,
մի զմիով անցանէին, եւ ի մեքենայից անտի ի վերայ պա-
րբսպացն դիմէին եւ առ հասարակ յերկոցունց կողմանցն
ձայն փողոյ, ձայն գօսերաց, գոչին գօրաց, շառաչուն հրա-
լից գնդակաց, ձայթմունք հրացանից զականջս խրացուցան-
էին:

Իսկ որք ի ներքս էին, իբրեւ զայն ահեղ տեսիլ ի յամրոցի
անտի տեսանէին զգնդաց զնոցաց այլասեռոցն՝ դրօշու դրօշու
պատրաստութիւն, զնշանացն փողփողել եւ զճառագայթս զի-
նուցն զինուորաց, զզանգական հնչեցուցանէին, զնշխարս ձե-
ռաց սրբոյն Մինայի ի բազմոցի դնէին, եւ ամենեքեան ան-
կեալ առաջի սրբոյ տեղանոյն՝ առ Աստուած գոչէին, եպիս-
կոպոսունք, քահանայք, ամենայն ժողովրդականք եւ կուսանք
(զի անդ էր նաեւ մենաստան ինչ կուսանաց, ուր բնակէին
քառասուն կամ յիսուն կուսանք), զի ամենեքեան զմահն ա-
ռաջի աչաց ունէին:

Եւ յութերորդ ժամու աւուրն՝ իբրեւ տեսին զի բառնիր
այնուհետեւ յոյս փրկութեան, Մխիթար սպարապետն եւ Տէր
Աւետիսն խրախոյս բարձին, ի զէն յարձակեցան, ապա զօր-
քն ամենայն առ նոսա ժողովեցան, բացի պահապանաց պա-
րբսպացն, վառեցան պատրաստեցան, զէն զգեցան, ի բար-
կութիւն բորբոքեցան ամենեքեան ի վերայ թշնամեացն:

Զի խոսիլ սկսան ընդ նոսա Մխիթարն եւ Տէր Աւետիսն եւ
ասեն: Քաջացարուք, մի՛ երկնչիք, ելէք զհետ մեր. եթէ հա-
սեալ իցէ վախճան մեր՝ քաջութեամբ մեռցուք: զի լաւ իցէ
մեզ արութեամբ արտաքոյ պարսպացն մեռանիլ՝ քան աստ-
էն առաջի աչաց մերոց տեսանել զմահ ընտանեաց եւ բարե-
կամաց մերոց եւ զայլ զժնդրակութիւնս: Զբանսն ասացին եւ
ինքեանք յառաջագոյն աճապարեցին ելին արտաքս ընդ
գաղտնի դուռն պարսպին, եւ երեք հարիւր վառեալք զկնի
նոցա:

Ո՛վ սքանչելեացս, ո՛վ մեծի ողորմութեանցն Աստուծոյ,
երեք հարիւր վառեալք ի յութերորդ ժամու աւուրն ձայն ե-
տուն, խրախոյս բարձին, յարձակեցան միանգամայն ի վե-
րայ եօթանասուն հազարաց. զառաջինն յարձակեցան ի վե-

վեցին, ապա ամբողջ զորքը հորդահոս գետի հորձանքի նման
ահագին զոչումով թափվում էր, կամ հողմերի ուժգնությու-
նից փոթորկված ծովի ամեհի ալիքների պես հորձանքով գա-
լիս, իրարից առաջ էին անցնում, և այն մեքենաներից զե-
պի պարիսպներն էին դիմում: Եվ առհասարակ երկու կող-
մից փողի ու թմբուկի ձայները, զորքերի գնչլունները, հրա-
լից գնդակների շաչլունը, հրազենների ճայթլունը ականջ
էին խլացնում:

Իսկ ներսում եղածները, երբ ամրոցից տեսնում էին այդ
ահեղ տեսարանը, թշնամական բազմաթիվ գնդերի ու դրո-
շակների պատրաստությունը, նշանների փողփողելը և մար-
տիկների զենքերի շողլունը՝ հնչեցնում էին զանգակները,
սուրբ Մինասի ձեռաց նշխարները բազմոցին էին դնում և
բոլորը ծունկի գալով սրբի սեղանի առաջ, դիմում էին Աստ-
ծուն՝ եպիսկոպոսները, քահանաները, ժողովուրդը, կուսա-
կրոնները (որովհետև այնտեղ կար նաև կույսերի մենաս-
տան, ուր բնակվում էին քառասուն-հիսուն մենակյաց), քա-
նի որ բոլորը մահն աչքն էին առել: Եվ օրվա ութերորդ ժա-
մին, երբ տեսան, որ այնուհետև ապրելու հույս չի մնում,
Մխիթար սպարապետն ու տեր Ավետիսը խրախոյս կար-
դացին և զենքի դիմեցին: Այնժամ զորքերը նրանց շուրջը
խմբվեցին (բացի պարիսպների պահապաններից), զինվե-
ցին, պատրաստվեցին, զենք կապեցին, բոլորը զայրույթով
վառվեցին թշնամու դեմ: Խոսել սկսեցին Մխիթարն ու տեր
Ավետիսը և ասացին. «Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցեք
մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որով-
հետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից
դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր
ընտանիքների ու բարեկամների մահը և այլ զժնդրակություն-
ներ»: Այս խոսքերն ասացին և իրենք ամենից առաջ շտապ
դուրս եկան պարսպի գաղտնի դռնով, և երեք հարյուր զին-
վածներ հետևեցին նրանց:

Ո՛վ սքանչելիք և Աստծու մեծ ողորմածություն, երեք
հարյուր զինյալներ օրվա ութերորդ ժամին ձայնեցին, հոր-
դոր կարդացին, արագ հարձակվեցին յոթանասուն հազարի
վրա: Նախ գրոհեցին աջակողմյան գնդին՝ աջ ու ձախ կո-
տորելով:

րայ յաջակողմեան գնդի նոցա՝ յաջ եւ յահակ կոտորելով
Իսկ նոքա յանկարծակի իբրեւ տեսին զայն անհղ յարձա-
կեամբ եւ կոտորած ի վերայ ինքեանց հասեալ, առ հասարակ
խոռվեալք եւ խուճապեալք՝ դիմեցին յերկրորդ եւ յերրորդ
խումբսն, զաղաղակ բարձեալ թէ հասին կոտորեցին սպառե-
ցին զմեզ քրիստոնեայքն: Եւ զայն իբրեւ լուան ամենեքեան
հիացան ամբողջան տկարացան ի խորհուրդս իրեանց, լքան
լուծան եւ անկաւ ահ ի Տեառնէ ի վերայ նոցա. զի մինչ դեռ
ակն ունէին մեծի յաղթութեան՝ զբռամբ ամելոյ զամուրն
յանկարծակի եհաս նոցա այն անողորմ կոտորած: Ուստի առ-
հասարակ զարհուրեալք եւ սասանեալք՝ ասէին այր ցընկեր
Որ ոք կամի զանձն իւր ապրեցուցանել՝ փախստեան ուշ դի-
ցէ: Զի բազումք ի նոցանէ բազում անգամ զփորձ անեալք
էին քաջութեանցն Դավթի եւ արանց նորա. եւ զի ահն աղա-
ղակն եւ անհնարին կոտորումն բանակի նոցա երթալով՝ եր-
թայր եւ զօրանայր, այնուհետեւ ոչ ոք համարձակէր յետ
ընդդէմ սոցա դառնալ, այլ ամենեքեան խոռվեալք եւ խու-
ճապեալք՝ փախստեայ լինէին:

Իսկ սոքա եւ որք մնացեալք էին ի բերդ անդր՝ համար-
ձակ ի վերայ յարձակէին, հասանէին հարկանէին, զբազումս
առ ետեղ սատակէին, եւ զայլս խոցս եւ վիրաւորն հալածա-
կանս աննէին անտի, մինչեւ ոչ թողուլ ի նոցանէ՝ երկու ի
միասին. եւ ի նմին աւուր անկան անդ ի բանակէ Օսմանցոց
երեքտասան հազար այր պատերազմող, եւ ի սոցանէ յոյժ
սակաւ ումանք, զի այ ամենակարողին հովանի եւ պաշտպան
էր նոցա յամենայն պատերազմունս նոցա՝ առ ի փրկել եւ ի
կեցուցանել, եւ զԹշնամիսն առաջի նոցա խորտակել, որպէս
յայտնապէս տեսանի աստանօր եւ յայլ բազում տեղիս: Եւ ա-
ռին ի նոցանէ յաւուրն յայնմիկ հարիւր քառասուն եւ ութն
դրօշակ, եւ զայլ ամենայն կապուտ կողոպուտ բանակի նո-
ցա:

Արդ իբրեւ ետես Դավթ թէ Աստուած օգնական է ին-
քեան յամենայնի, խնդրէր այնուհետեւ տալ պատերազմ ընդ
Օսմանցոցն, եւ հանել զնոսս ի Ղափանու. եւ կամեցաւ ելա-
նել նախ ի վերայ Մեղրեայ ամուր ւանին, բայց իբրեւ զի-
տաց թէ բազում զօրօք է անդ փաշայն | Օսմանցոց, ոչ հա-
մարձակեցաւ. եւ ի նմին ժամանակի յատուր քառասնորդա-
ցըն պահոց առաքեաց նա զՄխիթար սպարապետն եւ զտէր
Աւետիսն՝ վաթսուն եւ վեց վառելովք առ Խանն Դուղայի եւ

Իսկ Թշնամիները, երբ հանկարծ տեսան իրենց վրա հա-
սած այդ անհղ հարձակումը, զլուխները կորցրած, խուճա-
պահար դիմեցին երկրորդ եւ երրորդ խմբերի մոտ, աղաղա-
կելով, թե՛ Հարձակվեցին, կոտորեցին մեզ քրիստոնյաները:
Եվ լսելով բոլորը զարմացան, ապշեցին, տկարացան, հու-
սալքվեցին, կազմալուծվեցին, և ահ ընկավ նրանց վրա Տի-
րօջից, որովհետև մինչդեռ մեծ հաղթանակի՝ ամբողջ իրենց
ձեռքը զցելու հույս ունեին, հանկարծակի վրա հասավ մի
անողորմ կոտորած:

Ուստի բոլորը զարհուրած և սասանած ասում էին մեկը
մյուսին՝ Ով ուզում է կյանքը փրկել՝ թող փախչի: Որովհե-
տև նրանցից շատերը բազմիցս տեսել էին Դավթի ու նրա
մարդկանց քաջությունները, և քանի որ սարսափը, աղաղա-
կը, նրանց բանակի անասելի կոտորածը գնալով սաստկա-
նում էին, ուստի այնուհետև ոչ ոք չէր համարձակվում շըր-
ջվել Դավթի դեմ, այլ բոլորը շփոթված ու խուճապահար
փախչում էին:

Իսկ սրանք և բերդում մնացածները համարձակ վրա հա-
սան, խփեցին, շատերին տեղնուտեղը սպանեցին, ուրիշնե-
րին խոցելով ու վիրավորելով հալածեցին, մինչև որ նրան-
ցից շժողին երկու հոգի իրար մոտ: Եվ այն օրը օսմանցիներ
ի բանակից ընկավ տասներեք հազար զինվոր, իսկ սրան-
ցից՝ շատ քչերը, որովհետև ամենակարողի աջը հովանի և
պաշտպան էր նրանց բոլոր պատերազմներում՝ փրկելու և
ապրեցնելու և նրանց առջև Թշնամիներին խորտակելու, ինչ-
պես ակնհայտ երևում է այստեղ և շատ այլ տեղերում: Եվ
նրանցից այն օրը խլեցին հարյուր քառասունութ դրոշակ և
նրանց բանակի ամբողջ կապուտ-կողոպուտը:

Տեսնելով, որ Աստված ամեն ինչում զորավիգ է իրեն,
Դավթը ցանկանում էր այնուհետև ճակատամարտ տալ օս-
մանցիներին և վտարել Ղափանից: Եվ ուզեց նախ գրոհել
Մեղրի ամուր ավանը, բայց իմանալով, որ օսմանցիների փա-
շան մեծաթիվ զորք ունի այնտեղ, չհամարձակվեց և նույն
քառասնորդաց պահքի ժամանակ Մխիթար սպարապետին ու
տեր Ավետիսին վաթսունվեց զինված տղամարդկանց հետ
ուղարկեց Դուղալի խանի և նրա եղբայր Լեքազի խանի մոտ

առ եղբայր նորա Լեքազի Խանն, եւ ասէ ցնոսա. Եկայք միաբանեալ տացուք պատերազմ ընդ Օսմանցւոց, եւ եկին գտին զնոսա ի շէնն Քուրդաշեան՝ ի կողմանս Ուրդուարայ, առ Երասխաւ. զի յաւուրսն յայնտիկ շահ Քամազն էր ի Թարեզո, եւ իշխան զօրուն՝ որ էր Դուզալի Խանն, բազում զօրօք ի կողմանս Երասխայ՝ ընդդէմ Օսմանցւոցն. եւ իբրեւ պատմեցին Դուզալի Խանին զբանսն Դավթի՝ երկեալ անել զայն Բայց եղբայր նորա Լեքազի Խանն շանայր հաւանեցուցանելու եւ մինչդեռ ընդ այս վիճէին՝ զօրք Օսմանցւոցն ելին ի յՈւրդուարայ քսան դրօշուք, եւ եկին լցին զդաշտն Կրճիվանու. եւ ասեն Մխիթարն՝ եւ տէր Աւետիսն ցնանն. Հա՛պա դիմեցուք ի վերայ դոցա՝ Եւ նա երկեալու եւ ոչ կամեցաւ գալ: Յայնժամ ելին շուեցին անտի երկուքեանքն՝ վաթսուն եւ վեց արամբ, եւ սակաւ ինչ պատահեալ զօրացն Օսմանցւոց՝ անցին գնացին ի նոցանէ. եւ զօրքն Օսմանցւոց գնացին մտին ի Մեղրի, եւ յաւելեալք ընդ զօրս Մեղրեայ՝ փաշային, եղեն քսան եւ երկու հազար զօրք:

Եւ իբրեւ ընդ երեկս լինէր, Մխիթար սպարապետն եւ տէր Աւետիսն՝ Դուզալի Խանին ազդ առնէին, թէ ի գիշեր յայսմիկ հարկանելոց եմք զՄեղրի, յօգնութիւն հասէք. եւ նա առաքեաց յիսուն վառեալ, եւ սկսան զօրան կարգել կազմել, եւ պատուէր տալ նոցա եւ ասել՝ զի ընդ այգն ընդ առաւօտն հասանիցեն ի վերայ Մեղրեայ, եւ ինքեանք երկու ոմամբք գան հասանին ի յայգեստանս Մեղրեայ. եւ անդէն առ ինքեանրս զամենայն փախըստեայսն Մեղրացւոց (որք միանգամ նեղեալք եւ շարշարեալք ի դառն ծառայութենէ Օսմանցւոց՝ թափառականք աստ եւ անդ ի յերինս շրջէին) զամենեկան զնոսա ժողովէին, կարգէին կազմէին, եւ ի գլուխն Մեղրեայ ի դարանի դնէին, եւ ինքեանք սակաւ ոմամբ գաղտնաբար գիշերայն ի Մեղրի մտանեն ծածուկ զինեալք: Եւ իբրեւ առաւօտ լինէր զօրքն իրեանց ոչ հասանէին. Բայց զօրացն Օսմանցւոց իբրեւ ազգ լինէր՝ թէ զօրածողով են Հայք արտաքոյ պարսպացն ի բացի, զէն զգեցան, ձի հեծան եւ պատրաստեցան ի պատերազմ: Յայնժամ Մխիթար սպարապետն, եւ տէր Աւետիսն եւ որք ընդ նոսա էին, սուսերամերկք լինէին, ի մէջ բերդին յարձակէին, զհարկահանն Օսմանցւոց սատակէին, ապա որում եւ պատահէին զօրացն Օսմանցւոց՝ անդանօր սատակէին, եւ զայս շտապ տագնապաւ առաջի

և ասում է. «Եկեք միաբանելով պատերազմ տանք օսմանցիներին»: Եվ եկան գտան պարսիկ խաներին Քուրդաշյան աւանում, որ Երասխի մյուս ափին է, Ուրդուարի կողմերում: Որովհետև այն օրերին շահ Քահանազը Թավրիզում էր, իսկ զորքի հրամանատարը, որ Դուզալի խանն էր, բազում զորքով Երասխի կողմերում էր, օսմանցիների հանդիման: Եվ երբ հազորդեցին Դուզալի խանին Դավթի խոսքերը, նա վախեցավ այդ անել: Բայց նրա եղբայր Լեքազի խանը աշխատում էր համոզել նրան [միաբանելու Դավթի հետ]: Ու մինչդեռ վիճում էին սրա շուրջը, Ուրդուարից օսմանյան զորքեր էլան քսան դրոշով և գնացին լցվեցին Կրճիվանի դաշտը: Եվ Մխիթարն ու տեր Ավետիսը ասացին խանին՝ «Հասեք նրանց վրա»: Իսկ նա վախեցավ և շուգեց հարձակվել: Այնժամ ելան գնացին այնտեղից երկուսը՝ վաթսունվեց մարդով, օսմանցիների սակավ զորքերի պատահելով անցան գնացին նրանց մոտով, և օսմանցոց զորքերը մտան Մեղրի ու միացան Մեղրիի փաշայի զորքերին, դարձան քսաներկու հազարանոց զորք:

Իրիկանժամին Մխիթար սպարապետն ու տեր Ավետիսը Դուզալի խանին լուր ուղարկեցին՝ «Այս գիշեր հարվածելու ենք Մեղրիին, մեզ օգնութեան եկեք»: Եվ նա ուղարկեց հիսուն զինվոր, և սկսեցին զորքը դասավորել և հրահանգ տալ ու ասել, որ առավոտյան այգաբացին հարձակվեն Մեղրիի վրա: Իրենք երկուսով եկան հասան Մեղրիի այգեստանները և այնտեղ իրենց շուրջը հավաքեցին բոլոր փախած մեղրեցիներին, որոնք օսմանցոց դառն ծառայությունից նեղված այստեղ լեռներում, շրջում էին թափառական: Նրանց բոլորին հավաքեցին, կազմակերպեցին ու Մեղրիի վերևում դարան մտան: Իսկ իրենք քիչ մարդկանցով զինված այնտեղից գիշերը գաղտնաբար մտան Մեղրի: Երբ լուսանում էր, նրանց զորքը շեր հասել: Բայց օսմանցիների զորքերի մեջ լուր տարածվեց: Թե հայերը պարիսպներից դուրս հավաքում են իրենց զորքը. զենք վերցրին, ձի հեծնեցին և պատրաստվեցին պատերազմի: Այդ ժամանակ Մխիթար սպարապետը, տեր Ավետիսը և նրանց զինակիցները մերկացրին սուսերները, մտան ամրոցը, սպանեցին օսմանցիների հարկահանին, ում հանդիպեցին նրանցից՝ կոտորեցին, մյուսներին խուճապա-

տանէին, մինչեւ ի Փոքր թաղն հասուցանէին զՓաշայն, եւ անդ ի վերայ հասին նաև դարանամուտքն ի պիտոյն Մեղրեայ. եւ սկսան փախուստ առնուլ զօրքն Օսմանցուց:

Յայնժամ Մխիթարն, տէր Աւետիսն եւ որք ընդ նոսա՝ իբրեւ տեսին թէ հասին դարանամուտքն ի վերայ Օսմանցուցն, թողին զնոսա եւ աճապարեցին՝ հասին կալան ինքեանք ըզկիրճս ճանապարհի նոցա, որ առ Երասխան էր, որ այժմ յայլազգեաց կոչի Ուզուն պէնտ. եւ էր կիրճն այն երկայն՝ ձգեալ իբրու գնացս միոյ ժամու կամ երկուց, որոյ մի կողմ էր քարածայուն մեծ, եւ ի միւս կողմն՝ Երասխն յորդահոս. անդ իբրեւ մտին փախստեայքն Օսմանցուց ի կիրճն, սոքա ելին ընդ առաջ նոցա ի պատերազմ. եւ իբրեւ զայն տեսին, նեղեցան յոյժ՝ զի պաշարեալ մնացին յամենայն կողմանց, եւ ստիպեցան անցանել զգետն Երասխ. այլ սոքա ի վերայ հասին նոցա, զբազումս առ ետեղ սատակեցին եւ զայլ բազումս ի գետն հեղձուցին: Եւ անտի դարձ արարին, եկին հասին ի Մեղրի, եւ անդ գտին զանբաւ կառափունս Թուրքաց, զանհամար ձիս եւ զչորիս նոցա, զանթիւ զանշափ գոյս նոցա, իբր շորեք հարիւր տաղանդոյ ինչս. զբեռն հարկահանին բացին | եւ անդ երեսուն եւ երկու հազար թուղթս հարկաց գտին, եւ զայն ամենայն ի հուր այրեցին: Եւ զԴաշեաց Նորվէլն գտին, եւ զի ուրացեալ էր զՔրիստոս՝ զզլուխն հասին:

Ապա յետ այսորիկ իբրեւ սակաւ ինչ ժամանակ ի վերայ անցանէր, ասպատակիչ փաշայն Օսմանցուց բազում զօրօք դիմէր գայր, եւ բնակէր ի Բեխ կոչեցեալ շէնն, իբր զաւուրս միոյ շաբաթու. զբազում հնարս խորհէր ի վերայ Դաւթի եւ զօրաց նորա, եւ ամենեհին զոչինչ կարաց առնել. այլ զօրականքն Դաւթի ի գիշերի միում ի վերայ հասին նոցա, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, եւ զփաշայն հալածականս արարին:

Յետ այսորիկ գունդ մի զօրաց ութն հարիւրոց ի Պարկուշատ եկին, զի գնացեն անտի ի Տաթև. եւ սոքա իբրեւ զայն զգացին, զգիշերայն ի Օքուզեարաթ կոչեցեալ լեռն ելանէին եւ զանցս ճանապարհին ըմբռնէին: Իսկ նոքա ընդ այզն ընդ առաւօտն իբրեւ եկին անդր հասին, սոքա ի վերայ յարձակեցան, հարին կոտորեցին ի նոցանէ երեսուն եւ վեց այր, զեօթն այր եւս զերեցին, եւ առին զամենայն ինչս նոցա եւ

հար հալածեցին: Փաշային մինչև Փոքր թաղ հասցրին: Այդտեղ վրա հասան նաև դարանամուտները Մեղրիի վերևից, և օսմանցոց զորքերն սկսեցին փախչիլ:

Այնուհետև Մխիթարը, տեր Ավետիսը և մյուսները, տեսնելով, որ օսմանցիների վրա հարձակվեցին նաև դարանամուտները, թողին նրանց և շտապեցին հասնել, զրավել նրանց ճանապարհի կիրճը, որ Երասխի երկայնքով էր [ձգվում], որն այժմ այլազգիներն անվանում են Ուզուն-պենտ: Երկարածիք էր կիրճը, տր մեկ-երկու ժամվա ճանապարհ էր, մի կողմը մեծ քարածայու էր, մյուսը՝ հորդահոս Երասխը: Երբ օսմանցի փախստականները մտան կիրճը, սրանք նրանց ընդառաջ եկան պատերազմելու: Այդ տեսնելով [վերջինները]՝ նեղվեցին, որովհետև շրջապատված էին բոլոր կողմերից և ստիպված էին անցնել Երասխ գետը: Իսկ հայերը հարձակվեցին, շատերին տեղնուտեղը սպանեցին, մյուսներին խեղդեցին գետում: Եվ դարձան, եկան հասան Մեղրի ու այնտեղ տեսան թուրքերի անթիվ գլուխներ, նրանց անհամար ձիերն ու շորիները, անշափ դույք, շուրջ շորս հարյուր տաղանդի ապրանք, հարկահանի բեռը բացին ու այնտեղ՝ երեսուներկու հազար մուրճակ, և այդ բոլորն այրեցին: Եվ գտնելով Դաշյաց նորվելին, որ ուրացել էր Քրիստոսին՝ զըլխատեցին:

Սրանից հետո որոշ ժամանակ անցավ, օսմանցիները ասպատակիչ փաշան բազում զորքով եկավ ու բանակեց Բեխ գյուղում և մոտ մի շաբաթ ամբողջ օրը փնտրում էր զանազան հնարներ՝ Դաւթին ու նրա զորականներին նենգությամբ որսալու, և ոչինչ չկարողացավ անել: Իսկ Դաւթի զինվորները մի գիշեր հարձակվեցին նրանց վրա, կոտորեցին նրանցից շատերին և փաշային հալածական դարձրին:

Սրանից հետո ութհարյուրանոց մի զորագունդ Պարկուշատ եկավ, որպեսզի այնտեղից գնա Տաթև: Եվ սրանք զգալով ազդ, գիշերով Օքուզեարաթ կոչվող լեռը բարձրացան և բռնեցին ճանապարհի անցքերը: Իսկ նրանք առավոտյան այգաբացին, երբ եկան հասան այնտեղ, հայերը վրա հասան, խփեցին կոտորեցին երեսունվեց հոգու և յոթ մարդու զերեցին, հարվածեցին, առան նրանց ամբողջ գույքն ու

դարձան ի Հալի ձոր:

Ապա այլ եւս զօրք Օսմանցոց եկին բանակեցան ի գիւղ մի Թուրքաց՝ մերձ ի Մանլեւ, զնոսա եւ՝ ի գիշերի ի վերայ հասին՝ կոտորեցին եւ միայն զերկուս ի նոցանէ կենդանի ածին ի Հալի ձոր:

Արդ՝ յամի Տեառն 1727ին, որ այն հինգերորդ ամ էր գալլատեանն Դաւթի ի Ղափան, իբրեւ տեսանէր Դաւիթ Պէկն՝ ուղորմութեամբն Աստուծոյ՝ յամենայն ուրեք զթշնամիսն առաջի իւր վանեալս եւ խորտակեալս, առաքեաց Շահթամազ արքային Պարսից զչորս բեռինս՝ գլխովք սպանկոց ի բազմութենէ կոտորածին, զորս հասուցին Օսմանցոց. եւ նա իբրեւ դայն տեսանէր՝ ուրախ լինէր յոյժ ի վերայ թշնամեացն իւրոց, եւ զարմանայր յոյժ ի վերայ քաջութեանցն Դաւթի եւ զօրավարաց նորա, զընծայս պարգեւէր, հրովարտակս գրէր առ նա՝ ըստ բանիցս ըստ այսոցիկ.

«Շահթամազ արքայ Պարսից՝ առ քաջդ Դաւիթ Պէկ, եւ առ քաջ զօրավարսդ Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն: Ի բազմաց բազում անգամ ազդ եղև մեզ զքաջութեանց քոց. բայց արդ իբր ականատես իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թշնամեացն մերոց: Ահա՛ արդ կացուցի զքեզ իշխան եւ գլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ. եւ երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի. բայց դու ելցես եւ ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս եւ զխանս ի կողմանդ յայդոսիկ, եւ ի բաց հանցես զՕսմանցին ի սահմանաց քոց»:

Եւ ետ բերել նմա զմի խաչվառ եւ զմի պատուական նրժոյզ ձի, նաեւ զիշխանութիւն կարող լինելոյ դրամ հատանել, եւ իւրաքանչիւր զօրապետաց նորա զմի մի պատմուճան առաքեաց: Եւ եկին հնազանդեցան նմա ամենայն իշխանք եւ գաւառապետքն Թուրքաց:

Եւ ել զնաց Դաւիթ ի Հալիձորոց ի Մեղրի, եւ բանակեցաւ անդ. եւ ժողովեալ առ ինքն զամենայն զօրսն Մեղրեայ եւ Չաւրնդրու, անտի խաղաց զնաց եւ բանակեցաւ ի Կրճէվան աւանն, եւ հանդէս արարեալ անդ ամենայն զօրացն՝ առաքեաց զնոսա ի ձեռն քաջ զօրապետացն ի վերայ Ուրդուար քաղաքի: Եւ զնացին հասին անդ, եւ ի ժամ գիշերոյ՝ ի մէջ քաղաքին յարձակեցան, հարին կոտորեցին յՕսմանցոցն երեք հարիւր այր, եւ մնացեալքն ելին փախեան ի քաղաքէն

վերադարձան Հալիձոր:

Ապա օսմանցիների եւ մի զորք եկավ բանակեց Մանլեւ մերձակա մի Թուրքական գյուղում: Գիշերով հարձակվեց նաև դրանց վրա և նրանցից միայն երկուսին կենդանի տարան Հալիձոր:

Արդ, Քրիստոսի 1727 թվականին, որ Դավթի Ղափան գալու հինգերորդ տարին էր, երբ Դավիթ-Բեկը տեսավ, որ Աստուծու ողորմությամբ իր թշնամիներն ամենուրեք խորտակված են ու վտարված, պարսից շահ թահմազին ուղարկեց սպանված օսմանցիների շորս բեռ գլուխ: Այդ տեսնելով շահը շատ ուրախացավ իր թշնամիների մահով և շատ զարմացավ Դավթի ու նրա զինվորների քաջագործությունների վրա, ընծայեց սովեց և հրովարտակ գրեց նրան այսպիսի խոսքերով.

«Շահ թահմազ պարսից արքայից քաջ Դավիթ-Բեկիդ և հայոց քաջ զօրավարներին, որ քեզ հետ են՝ ողջոյն: Շատերից բազմիցս իմացել ենք քո սիրանքների մասին, բայց հիմա կարծես նաև ականատես եղանք ձեր մեծամեծ քաջագործություններին, որ մեր թշնամիների դեմ գործեցիք:

Եվ ահա այսօր քեզ կարգեցի իշխան և գլուխ մեր բոլոր իշխանների, որ այդ կողմերում են, և Ղափանի երկիրը, որ վերցրիր քաջությամբ՝ քեզ լինի: Բայց դու պիտի ելնես ու քո շուրջը համախմբես բոլոր զորքերը և այդ կողմերի խաներին, դուրս վանես օսմանցիներին քո սահմաններից»:

Եվ նրան ուղարկեց մի խաչվառ և մի պատվական նժույզ, նաև դրամ հատելու իրավունք, իսկ նրա զօրապետներից յուրաքանչյուրին՝ մեկական պատմուճան: Եվ եկան Դավթին հնազանդեցին բոլոր իշխաններն ու Թուրքերի գավառապետները:

Դավիթը եկավ Հալիձորից, զնաց Մեղրի ու բանակեց այնտեղ: Ժողովելով իր մոտ Մեղրիի, Չավնդուրի ամբողջ զորքերը, շարժվեց զնաց բանակեց Կրճիվան ավանում, այնտեղ դասավորեց բոլոր զորքերը, քաջ զօրավարների գլխավորությամբ ուղարկեց Ուրդուար քաղաքի վրա:

Եվ զնացին այնտեղ հասան գիշերով, քաղաքի վրա հարձակվեցին և կոտորեցին օսմանցիներից երեք հարյուր տղամարդ, մնացածները փախան և զնացին քաղաքից դուրս մի

եւ գնացին ի դիպուկ ինչ տեղի՝ արտաքոյ քաղաքին՝ բանակ առեալ բանակեցան: Եւ սոցա առեալ զաւարն՝ արկին սեղանըս, զի կերցեն եւ արբեն. յայնժամ գայ ի վերայ հասանի նոցա Դաւիթ Պէկն մինչդեռ բազմեալ էին զօրավարքն ի սեղան, եւ ցասուցեալ ի վերայ նոցա՝ ասէ. Թշնամիքն ձեր արտաքոյ քաղաքիս բանակ առեալ քանակին, եւ դուք նստեալ աստ ոտէք եւ ըմպէք: Եւ առժամայն թողեալ զուտելն՝ հեծան կազմեցան եւ յարձակեցան ի վերայ | բանակի Օսմանցոցն. իսկ նոքա իբրեւ տեսին՝ գիտացին թէ զօրն Պարսից է, եւ ելին ընդառաջ՝ ի մարտ պատերազմի. բայց իբրեւ զփորձ առին եւ գիտացին թէ այն է զօր Դաւիթ Պէկին, ի փախուստ դարձան եւ գնացին. եւ սոքա առին զնոցանէ զբազում ջոկս ձիոց եւ ջորեաց, եւ առաքեցին զայն ամենայն առ Դաւիթ. եւ ինքեանք դիմեն զան ի Դէշտ կոչեցեալ աւան: Իսկ արքաւանին ի հեռուստ իբրեւ զգալ զօրացն տեսին, համարեցան թէ զօր այլազգեաց է այն, եւ փախան ի յԱգուլիս:

Եւ անտի շուեն զան Մխիթար սպարապետն եւ տէր Աւետիսն հանդերձ զօրուն ի յԱգուլիս քաղաք. իսկ պահապանք մեծ դրան քաղաքին, ընդ տեսանելն զսոսա՝ փախչին. եւ սոցա համարձակ մտեալ ի քաղաքն, երթան ի վաճառատեղն՝ առ ի յոյզ եւ խնդիր առնել զՕսմանցիսն, եւ գտանեն անտի փախուցեալ զհարկահանան Օսմանցոց, եւ ինքեանք երթան բանակին ի վանս սրբոյն Թովմաչի առաքելոյն. եւ մինչ դեռ անդ էին նոքա՝ լուան արտաքոյ աղմուկ շփոթի, եւ երկու ոմանք ի սոցանէ ձի կալան եւ ելին արտաքս եւ գնացին, զի ոմն ի Թուրքաց յափշտակեալ զմի ոմն գերի վարէր, եւ պնդեցան զհետ նորա, | եւ նորա թողեալ զգերին՝ փախեալ:

Արդ՝ սակաւ ինչ կացեալ անդ, տեսին ի դիտանոցէն՝ զի Դաւիթ Պէկն եւս գայր մտանէր ի քաղաքն, եւ ելին ընդ առաջ նորա. եւ զգեցոյց նա իւր զօրականացն զմի մի պատմուճան, եւ դարձան վերստին բանակեցան ի սուրբն Թովմաչ. եւ արքաղաքին՝ ըստ սովորութեան իրեանց՝ ամենեքեան գային եւ զձեռնս Դաւիթ Պէկին համբուրէին: Եւ Մելիք Մուսին, որ նա ինքն քաղաքապետն էր, իբրեւ գայր յանդիման լինէր՝ Դաւիթ հրաման տայր իւրոցն եւ ասէր. Ի զիշերիս յայսմիկ հատէք զգլուխն Մուսեայ. զի այր նենգաւոր էր նա եւ խարդախ. բայց մելիք Փարսադայն յառաջ մատուցեալ՝ բարեխօս լինէր վասն նորա, եւ զվճիռ մահուն դարձուցանէր:

հարմար տեղ կուտակվեցին: Եվ սրանք վերցնելով ավարը, սեղան բացին, որ ուտեն և ըմպեն: Այն ժամանակ, երբ բազմել էին զօրավարները սեղանի շուրջը, եկավ Դաւիթ-Բեկը, գայրանալով նրանց վրա, ասում է. «Ձեր թշնամիները քաղաքից դուրս հավաքված բանակել են, իսկ դուք այստեղ նստած խրախճանում եք»: Անմիջապես թողնելով ուտելը, ձի նստեցին, հարձակվեցին օսմանցոց բանակի վրա: Իսկ նրանք այդ տեսնելով՝ կարծեցին, թե պարսից զորքն է, և ընդառաջ ելան պատերազմելու, բայց երբ ստուգեցին իմացան, որ Դաւիթ-Բեկի զորքն է, փախուստի դիմեցին: Եվ սրանք ձիերի ու ջորիների բազմաթիվ ջոկեր խլեցին նրանցից, այդ ամենը Դաւիթին ուղարկեցին, և իրենք դիմեցին Դաշտ կոչված ավանը: Իսկ ավանի մարդիկ, երբ հեռվից տեսան զորքերի գալը, կարծեցին, թե այլազգի զորք է, փախան Ագուլիս:

Այնտեղից շարժվելով Մխիթար սպարապետն ու տեր Ավետիսը զորքով դիմեցին դեպի Ագուլիս: Եվ երբ եկան քաղաքի մեծ դարպասին հասան, պահապանները սրանց տեսնելուն պես փախան: Իսկ սրանք անարգել մտան քաղաք, գնացին վաճառատեղի՝ փնտրելու և գտնելու օսմանցիներին և այնտեղ գտան փախած օսմանցի հարկահաններին, և իրենք գնացին բանակեցին սուրբ Թովմա առաքյալի վանքում: Ու մինչդեռ նրանք այդտեղ էին՝ դրսից աղմուկ-աղաղակ լսեցին, և նրանցից երկու հոգի ձի առան, դուրս ելան ու տեսան, որ մի թուրք մեկին առևանգած գերի էր տանում. հետապնդեցին նրան, և նա գերուն թողնելով՝ փախավ:

Այստեղ մի քիչ մնալով, դիտանոցից տեսան, որ Դաւիթ-Բեկը նույնպես գալիս մտնում է քաղաք, նրան ընդառաջ գնացին: Եվ նա իր զինվորներից յուրաքանչյուրին մեկական պատմուճան հագցրեց, և դարձան վերստին բանակեցին սուրբ Թովմաչում: Իսկ քաղաքի տղամարդիկ, իրենց սովորութեան համաձայն, բոլորը գալիս և համբուրում էին Դաւիթ-Բեկի ձեռքը: Մելիք Մուսին, որ քաղաքապետն էր, երբ գալիս ներկայանում է, Դաւիթը յուրաչիններին հրամայում է՝ «Այս գիշեր հատեցեք Մուսիի գլուխը», որովհետև նա նենգավոր ու խարդախ մարդ էր: Բայց մելիք Փարսադանը առաջ է գալիս և բարեխոսում նրա համար և մահվան վճիռը փոխել տալիս:

Եվ սրանք տասն օր այդ քաղաքում մնացին, երեք ան-

Եւ մնացեալ սոցա ի քաղաքի անդ, ի միջոցի տասն աւուրց՝ երիցս անգամ յարձակեցան ի վերայ նոցա զօրքն Օսմանցուց, եւ երիցս խորտակեցան ի քաջամարտիկ զօրացն Դաւթի:

Յետ այսորիկ արքայն Պարսից հասոյց ի թիկունս Դաւթի զերիս խանս, և ի վերստին դիմեաց Օսմանցին, եւ միւս անգամ խորտակեցաւ եւ ի փախուստ դարձաւ: Եւ այս ամենայն պատահէր նոցա յայն սակս, զի իշխանքն Ազուլիցսոց ծածկապէս դաշնադիրք էին ընդ Օսմանցուց, եւ սոքա ոչ դիտէին:

Ապա յետ երկուց ատուրց եկին հասին բազմութիւնս զօրացն Օսմանցուց, եւ լցին զդաշտն Մարաղու, եւ անդ բաժանեցան յերիս առաջս. իսկ ողջ ընդ Դաւթի էին՝ նոքա եւս յերիս առաջ բաժանեցան. խանքն Պարսից ի մի կողմն, եւ զօրքն Հայոց ի միւս կողմն: իսկ տէր Աւետիսն՝ հանդերձ զօրուն՝ դիպեցաւ ի կողմն Երասխու: Արդ՝ իբրեւ խմբեցան ի պատերազմ, խանքն Պարսից ի փախուստ դարձան յերեւոյց Օսմանցուց, բայց զօրք՝ Հայոց պինդ կացին, հարին սաստակեցին զբազումս ի Օսմանցուց, եւ զայլսն ի փախուստ դարձուցին: Ապա զարձան, զկնի խանիցն պնդեցան, հասին նոցա, (մինչդեռ փախստեալ երթալին ետքա ի Թավրէզ), եւ զամենայն զօրս նոցա ի յԱզուլիս դարձուցին, բայց խանուն փախեան, եւ սոքա զնացին՝ աւար առին զտունս նոցա, եւ զտիկնայս նոցա՝ հանդերձ ութնուտասան աղախնեօք եւ շորս ներքինեօք՝ գերի վարեցին ի Հալի ձոր:

Արդ՝ յետ այսոսիկ իբրեւ երկու ատուրք ի վերայ անցին, արքն Ազուլիսի եւ մելիք Մուսին զթշնամութիւնս եւ զբաւանս իրեանց յայտ արարին, զի ի մէջ քաղաքին՝ գրոհ տուեալ՝ ի վերայ զօրացն Դաւթի դիմեցին, մինչդեռ ի վանս սրբոյն Թովմայի էին նոքա՝ արտաքոյ քաղաքին, եւ ի քաղաքէ անտի սկսան զհրացանս արձակել ի վերայ նոցուն. ալ սոքա խնայեցին ի նոսա, վասն գորոյն համագային, եւ զի ոչ կամէին մտանել յարիւն այնքան քրիստոնէից. վասն զի ի քաղաքի անդ էին աւելի քան զտասն հազար տուն Հայոց. ուստի ել արտաքս մելիք Փարսադան, եւ ասէ ցարսն քաղաքին. Արք եղբարք, հանդարտ լերուք, մի՛ եւս արձակէք հրացանս, թոյլ տուք զի ելցէ տէրն մեր արտաքս եւ զնասցուք աստի, եւ ձեզ ոչինչ մեղիցուք: Այլ նոքա առաւել եւս վատթար

զամ օսմանցու զորքերը նրանց վրա հարձակվեցին և երեք անգամ խորտակվեցին Դաւթի քաջամարտիկ զորքերից:

Դրանից հետո պարսից արքան Դաւթին օգնութեան է ուղարկում երեք խաների, և օսմանցիները վերստին հարձակվելով՝ զարձալ խորտակվեցին ու փախուստի դիմեցին: Այս ամենը այն պատճառով էր տեղի ունենում, որ ազուլեցոց իշխանները զազանապես դաշնակից էին օսմանցիների հետ, իսկ սրանք չգիտեին:

Երկու օր անց եկավ հասավ օսմանցիների զորքի բազմութունը և լցրեց Մարաղու դաշտը: Այնտեղ բաժանվեցին երեք մասին: Իսկ ողջեր Դաւթի հետ էին՝ նույնպես երեք մասի բաժանվեցին. պարսից խաները մի կողմը, հայոց զորքը մյուս կողմը, իսկ տէր Ավետիսը իր զորքով զնաց Երասխի կողմը: Երբ խմբվեցին պատերազմելու, պարսից խաները փախան օսմանցիներից, բայց հայոց զորքերը հաստատ մնացին, խփեցին, սատակեցին օսմանցիներից շատերին, իսկ ուրիշներին փախուստի մատնեցին: Ապա զարձան հետապնդեցին խաներին, հասան նրանց (մինչ նրանք Թավրիզ էին փախում) և նրանց ամբողջ զորքը Ազուլիս վերադարձրին: Բայց խաները փախան, իսկ սրանք զնացին ավար առան նրանց տները, նրանց տիկնանց՝ տասնութ աղախնով ու շորս ներքինիներով, գերեվարեցին Հալիձոր:

Արանից հետո մոտ երկու օր եւս անցավ Ազուլիսի տաճարդիկ և մելիք Մուսին ի հայտ բերին իրենց թշնամանքն ու դավաճանութունը, քանի որ քաղաքի մեջ գրոհ տալով հարձակվեցին Դաւթի զորքերի վրա: Մինչդեռ նրանք սուրբ Թովմայի վանքում էին, քաղաքից դուրս, [դավադիրներն] սկսեցին քաղաքից հրազենով զնդակոծել նրանց: Բայց իրենք խնայեցին նրանց՝ համազգի լինելու պատճառով և, քանի որ չէին ցանկանում այնքան քրիստոնյաների արյուն հեղել, որովհետև այն քաղաքում կար ավելի քան տասը հազար տուն հայ, ուստի մելիք Փարսադանը դուրս եկավ և ասաց քաղաքի մարդկանց. «Երբայրնե՛ր, հանգիստ եղեք, հրացան մի կրակեք, թույլ տվեք, որ մեր տերը դուրս գա, զնանք այստեղից և ձեր դեմ մեղք չգործենք»: Բայց ազուլեցիք առավել

գուրով, հարին եւ անդէն զմիջնորդն խաղաղութեան մինչդեռ խաղաղութեան բանս բարբառէր՝ սպանին զնա, որ եւ զտէրն նոցա զմելիք Մուսին ի մահուանէ ապրեցոյց: Այլ որք ընդ Դավթի էին, իբրեւ զայն տեսին, գիտացին զի վճարեալ էր այնուհետեւ շարութիւն նոցա. քակեցին զմի կողմն պարսպի վանացն եւ անտի շտեցին գնացին եւ ի գիւղ մի Թուրքաց հասին, եւ գտին անդ զբազում ինչս Ագուլեցոց՝ զձիս, զորիս եւ զհազար երեք հարիւր ոչխարս սպանդանոցի, եւ զայլ ինչս նոցա անտի առին եւ գնացին ի Մեղրի:

Եւ յետ երկուց ամսոց՝ զօրականքն Դավթի միւսանգամ ի յԱգուլիս արշաւեցին եւ եկին՝ որ ինչ էր նոցա արտաքոյ քաղաքին՝ զամենայն առին, եւ մօտեալք ի քաղաքն՝ յերկուց կողմանց հուր արկին, զի թերեւս ելցեն արտաքս առ ի մարտընչիլ, զի ոչ կարէին հանդուրժել շարեացն եւ դատեն՝ զոր նոքա արարին: Եւ իբրեւ ոչ ելին արտաքս առ նոսա, առին զաւարն եւ գնացին ի Մեղրի, եւ անտի դարձան ի Հալի ձոր եւ անդ օթեւանս կալան:

Եւ յաւուրսն յայնոսիկ՝ Դավթ Պէկն առաքէ զտէր Աւետիսն առ զօրականսն որք էին ի Չավնդուր, եւ նոքա մերժեն զԴավթ եւ ոչ ընդունին զբանս նորա: Եւ նա դառնայ գայ ան Դավթ եւ զապստամբութիւն նոցա յայտ առնէ նմա, եւ թէ որպէս կացուցեալք են ի վերայ ինքեանց գոստիկանս Օսմանցոց: Յայնժամ հրաման տայ Դավթ շորքտասան զօրապետաց իւրոց երթալ կալնուլ եւ զնոսա կապեալս ան ինքն ածել. եւ ելին կազմեցան պատրաստեցան, ձի հեծան եւ գնացին հասին, հարին զնոսա, եւ կալան կապեցին զզօրավարսն եւ զՕսմանցի ոստիկան նոցա, եւ ածին կացուցին զնոսա ի Հալի ձոր առաջի Դավթի: Եւ իբրեւ յանդիման եղեն նոքա, յառաջ մատուցեալ աղաչէին, երգմունս եւ դաշինս գնէին եւ ասէին. Այսուհետեւ քեզ հնազանդիմք մինչեւ ցմահ: Եւ հատուցեալ Դավթի՝ արձակեաց զնոսա ի կապանաց, եւ գերկու զօրավարս առ ինքն թող, եւ զայլանս ետ ի ձեռս տէր Աւետիսին, զի լինիցին ի ներքոյ հրամանաց նորա: Եւ նորա առեալ զնոսա ի Չավնդուր, եւ արձակէ զիւրաքանչիւրն ի տունս իւրեանց:

Եւ յետ այսորիկ Բաթալի խանն եւ զօրքն Օսմանցոց, ի գիշերի միում գան եւ հարկանեն գերիս զիւզս Հայոց, եւ կալեալ գերիս զօրապետս՝ ածեն ի Պարկուշատ: Եւ իբրեւ զայն

վատթար լինելով, խփեցին նաև խաղաղութեան միջնորդին՝ մինչդեռ հաշտութեան խոսքեր էր ասում, սպանեցին նրան, որ իրենց տիրոջը՝ մելիք Մուսինին մահից փրկել էր: Իսկ ովքեր Դավթի հետ էին, երբ այդ տեսան, հասկացան, որ այլևս վերջացել էր նրանց շարութունը, քանդեցին վանքի պարսպի մի կողմը և այնտեղից դուրս ելան, գնացին և հասան թուրքերի մի գյուղ և այնտեղ գտան ագուլեցոց գույքը՝ ձի, ջորի, հազար երեք հարյուր սպանդանոցի ոչխար և այլ բաներ, վերջըրին այնտեղից ու գնացին Մեղրի:

Երկու օր հետո Դավթի զորականները կրկին Ագուլիս արշավեցին և եկան, մոտեցան քաղաքին, երկու կողմից կրակ տվին, որ գուցե երևեն մարտնչելու, որովհետև չէին կարող հանդուրժել դավն ու շարիքը, որ գործեցին նրանք: Եվ երբ դուրս չեկան, վերջրին ավարը և գնացին Մեղրի, ապա դարձան Հալիձոր ու այնտեղ օթեւանեցին:

Եվ այն օրերին Դավիթ-Բեկը տեր Ավետիսին ուղարկում է Չավնդուրում գտնվող զորականների մոտ, իսկ նրանք մերժում են Դավթին և չեն ընդունում նրա առաջարկը: Եվ նա վերադառնում է Դավթի մոտ ու նրանց անհնազանդությունը հայտնում, և [պատմում], թե ինչպես իրենց վրա օսմանցի ոստիկան են կարգել: Այնժամ Դավթին իր տասնչորս զօրավարներին հրամայում է գնալ բռնել նրանց և կապկալած իր մոտ բերել: Եվ ելան պատրաստվեցին, ձի հեծնեցին ու գնացին հասան, հարվածեցին նրանց և բռնեցին, կապեցին նրանց զօրավարներին ու օսմանցի զօրականին և բերին հասցրին նրանց Դավթի մոտ՝ Հալիձոր: Եվ երբ գերվածները ներկայացվեցին՝ առաջ գալով աղաչում, երգվում ու խոստանում էին, ասելով. «Այսուհետև քեզ կհնազանդվենք մինչև մահ»: Եվ Դավթիցը հավատաց, արձակեց նրանց կապանքները, և երկու զօրավարի իր մոտ թողեց, իսկ մյուսներին տվեց տեր Ավետիսի ձեռքը, որ լինեն նրա հրամանի ներքո: Եվ նա տանելով նրանց Չավնդուր, յուրաքանչյուրին արձակեց իր տունը:

Մրանից հետո Բաթալի խանն ու օսմանցոց զորքերը մի գիշեր գալիս և հարվածում են հայոց երեք գյուղեր, բռնում երեք զօրավարի, տանում Պարկուշատ: Եվ երբ այդ լսեց տեր

լսէր տէր Աւետիսն՝ վաղվաղակի զգօրսն ժողովէր, եւ յետ երկուց աւուրց յերկիրն Պարկուշատայ արշաւէր, եւ գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր զհարուածս մեծամեծս, եւ գերկու թուրք զօրապետս ձերբակալ առնէր, եւ զամենայն ինչս եւ զստացուածս նոցա յաւարածէր ի Քափնգուր:

Եւ եղև ի ժամանակի յայնմիկ հիւանդանալ Դավթի եւ մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իրում՝ ի Հալի ձոր, յամի Տեառն 1728ին, եւ ի թոսին Հայոց Իճձէ, կեցեալ ամս վեց յիշխանութեան իրում ի Դափան:

Արդ՝ իբրև վախճանեցաւ Դաւթ Պէկն, զօրականքն մշաբանեալք՝ կացուցին ինքեանց իշխան եւ գլուխ զՄխիթար ըսպարապետն Դաւթի: Բայց զի յետոյ եղև անմիաբանք եւ տարաձայն յիրերաց (որ է քակտիչ եւ ապականիչ ամենայն հասարակութեանց), ուստի զօրացան ի վերայ նոցա Օսմանցիքն. եւ զկնի միոյ ամի՝ հատին պաշարեցին զբերդն Դաւթի բաղում զօրօք: Եւ անկաւ խոռովութիւն մեծ ի մէջ զօրականացն որք ընդ Մխիթարայ էին՝ ի բերդ անդըր, եւ առաքեցին երկու ոմամք զտէր Աւետիսն առ փաշայն Օսմանցուց, խօսիլ զխաղաղութիւն ընդ նոսա: Եւ իբրև գնացին առ նոսա, նոքա հաճեցան հաւանեցան, զերդմունս երդուան՝ ամենեւին ոչինչ մեղանշել նոցա, եւ պահեցին առ ինքեանս զտէր Աւետիսն: Եւ սոքա եւս յանձն առին ի վաղիւ անդր բանալ նոցա զբերդին դուռն, եւ ի նմին գիշերի փախեալ Մխիթարն ի պարսպէ բերդին: Եւ յորժամ այգ Եղև բացին նոցա զդուռն: Այլ անօրէն զօրքն Օսմանցուց իբրև ի ներքս մտին, մերժեցին անարգեցին զերդմունս եւ ըզգաշինս փաշայիցն, եւ զամենայն այր զօրաւոր կոտորեցին եւ զկանայս եւ մանկունս գերի վարեցին, ի մենարանս կուսանացն մտին եւ զամենեսեան գերեցին. ապա զպարսպս բերդին քանդեցին կործանեցին, հարթ եւ յատակ արարին, եւ առին զկին եւ զորդիսն Մխիթարայ եւ զամենայն որ ինչ էր անդ, եւ թողին գնացին:

Բայց զտէր Աւետիսն փաշայն եթող ի Հալի ձոր: Եւ իբրև նոքա շուեցին անտի, այլ զօրք Օսմանցուց անդր հասին որք իբրև կամեցան ունիլ եւ սպանանել զնա, նա փախուցեալ ի նոցանէ՝ անկաւ առ փաշայն, որոյ հրամանան առեալ զրտանիւս իւր՝ գնաց բնակեցաւ ի Գաղատիայ: Եւ էառ զնորումն ի սրբազան Հայրապետէն Հոսմայ:

Ավետիսը, շտապ զորք հավաքեց և երկու օր հետո արշավեց Պարկուշատի երկիրը և գիշերով հարձակվեց, մեծամեծ հարվածներ հասցրեց և երկու թուրք զորապետի ձերբակալեց և նրանց ամբողջ ինչքն ու ստացվածքը ավար տարավ Չավընգուր:

Եվ պատահեց այն ժամանակ, որ Դավիթը հիվանդացավ և մահացավ իր տանը՝ Հալիձորում, խաղաղ պայմաններում, Տիրոջ 1728 և հայոց 1177 թվականին, Ղափանում իշխելով վեց տարի:

Արդ, Դավիթ-Յեկի վախճանվելուց հետո զորականները միաբանեցին, իշխանաց իշխան և զլիսավոր կարգեցին Դավթի սպարապետ Մխիթարին: Բայց քանի որ հետո անմիաբան և տարաձայն եղան (որ ամեն մի հասարակության քակտիչ ու ապականող է), ուստի օսմանցիներն ուժեղացան նրանցից և մեկ տարի անց մեծաթիվ զորքով հասան պաշարեցին Դավթի բերդը: Եվ մեծ խոռովություն ընկավ [այն] զօրականների մեջ, որ Մխիթարի հետ էին՝ ամբողջում, և տեղ Ավետիսին ևս երկու հոգու հետ ուղարկեցին օսմանցոց փաշայի մոտ՝ նրանց հետ խաղաղության բանակցություններ վարելու: Եվ երբ գնացին նրանց մոտ՝ նրանք հաճեցին հավանեցին, երզվեցին բնավ չմեղանշել նրանց դեմ, և իրենց մոտ պահեցին տեղ Ավետիսին: Սրանք նույնպես պարտավորվեցին հաջորդ օրը նրանց առջև բանալ բերդի դուռը, և այն փրշեր Մխիթարը փախավ բերդի պարսպից՝ Երբ լուսացավ դուռը բացին նրանց առջև: Բայց օսմանցոց անօրեն զորքերը երբ ներս մտան՝ մերժելով անարգեցին փաշաների երդումներն ու գաշինքը և բոլոր զորավոր մարդկանց կոտորեցին, իսկ կանանց ու մանուկներին գերեվարեցին, մտան կուսակրոնների մենարանները և բոլորին գերեցին: Ապա բերդի պարսպները քանդեցին-ավերեցին, դարձրին հողին հավասար և առան Մխիթարի կնոջն ու որդիներին և ամեն ինչ, որ կար այնտեղ, և թողին հեռացան:

Բայց փաշան տեղ Ավետիսին թողեց Հալիձորում: Եվ երբ նրանք գնացին այնտեղից, օսմանցոց ուրիշ զորքեր հասան այնտեղ, որոնք երբ կամեցան բռնել և սպանել նրան՝ նա փախավ նրանցից, գնաց փաշայի մոտ, որի հրամանով վերցնելով իր ընտանիքը՝ գնաց բնակվեց Գաղատիայում: Եվ Հոսմի սրբազան հայրապետից ներումն ստացավ:

Այլ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ՝ երթայր վերստին
գորածողով լինէր ի Հալոց եւ ի Թուրքաց, զգորսն Օսմանց-
ւոցն խորտակէր եւ առնոյր զվրէժ ի նոցանէ. զբազում ա-
մուրս եւ զքաղաքս ի նոցանէ թափէր, եւ երթայր զՈւրդուար
քաղաք պաշարէր, եւ իբրեւ զբռամբ ածէր զայն ի նոցանէ՝
զամենեսեան ի սուր սուսերի սատակէր, եւ զաւար բազում
առնոյր ի նոցանէ, եւ զհարիւր վաթսուն բեռինս ուղտուց: Եւ
անտի դարձ առնէր եւ երթայր ժամանակ ինչ ի մեծ բերքն
Խնձորէսք բնակէր, եւ անդ յիւրոցն հարեալ թօփով՝ մեռանէր
յամի Տեառն 1730, յետ երկուց ամաց իշխելոյն: Զի նա յորմէ
հետէ ի Խնձորէսք բնակէր. ասէին ցնա հայ բնակիչքն. Ե՛լ գնա
աստի ի յամուրն քո. եւ նա ոչ լսէր նոցա: Ուստի յաւուր միում
հարին զնա ի պարսպէն եւ սպանին, եւ հատեալ զգլուխ նո-
րա՝ առին զնացին ի Թավրէզ, առ փաշայն Օսմանցուց: Իսկ
նա իբրեւ ետես զայն՝ զարմացաւ յոյժ, եւ ի սրտմտութիւն
բարկութեան բրդեցաւ ի վերայ այնպիսոյ անզգամութեան
նոցա, եւ ասէ. Ո՛վ անօրէնք եւ ամբարիշտք, զիս՞րդ իշխեցիր
ի զուր տարապարտուց սպանանել զտէրն ձեր եւ զայդպիսի
քաջ այր: Եւ հրամայեաց հատանել զգլուխս ամենեցուն նո-
ցա՝ որք տարան զայն, եւ ըստ արժանեացն՝ հատոց զհա-
տուցումն նոցա:

Արդ նոքա զայսպիսի մեծ անօրէնութիւնս գործեցին, թե-
րեւ վասն այսորիկ՝ զի մի՛ զկիրս Հալի ձորոյ կրեցցին ի յՕս-
մանցուցն, որպէս եւ նոքայն կրեցին վասն արգել լինելոյ անդ
Մխիթարայ: Իսկ զօրքն ամենեքեան ցրուեցան զնացին, ո-
մանք ի նոցանէ՝ առ իշխանն Գուգարացուց, եւ այլք՝ յայլուր:

Իսկ Մխիթարը փախչելով նրանցից, զնաց վերստին գորք
հավաքեց հայերից ու թուրքերից, օսմանցոց գորքերը խոր-
տակեց և նրանցից վրեժ լուծեց, բազում ամրոցներ ու քա-
ղաքներ նրանցից ազատեց և զնաց Ուրդուար քաղաքը պա-
շարեց, և ում որ նրանցից բռնում էր՝ բոլորին սուր ու սուսե-
րով սատակում էր և նրանցից առնում շատ ավար՝ հարչուր
վաթսուն ուղտաբեռ: Այնտեղից դարձավ զնաց որոշ ժամա-
նակ բնակվեց Խնձորեսքում, և այնտեղ յուրայինները խփե-
ցին թնդանոթով, և մեռավ Տիրոջ 1730 թվականին, երկու
տարի իշխելուց հետո: Որովհետև որ օրվանից որ Խնձորես-
քում էր բնակվում, հայ բնակիչները նրան ասում էին. «Այս-
տեղից էլ զնա քո ամրոցը», — և նա չէր լսում նրանց: Ուստի
մի օր խփեցին նրան պարսպից ու սպանեցին և, կտրելով
նրա գլուխը՝ վերցրին զնացին Թավրիզ՝ օսմանցոց փաշայի
մոտ: Իսկ նա այդ տեմնելով շատ զարմացավ և խիստ զայ-
րացավ նրանց այդպիսի անզգամության պատճառով և ա-
պաց. «Ո՛վ անօրեններ ու ամբարիշտներ, ինչպե՞ս համար-
ձակվեցիք բոլորովին անտեղի սպանել ձեր տիրոջը և այդ-
պիսի քաջ մարդուն»: Եվ հրամայեց կտրել բոլոր նրանց
գլուխները, ովքեր տարել էին գլուխը, և ըստ արժանավույն
նրանց հատուցեց:

Արդ, նրանք այսպիսի մեծ շարիք գործեցին, թերևս այն
բանի համար, որ օսմանցիներից Հալիձորին եկած պատու-
հասն իրենք ևս չկրեն Մխիթարի՝ այնտեղ հանգրվանելու
պատճառով: Իսկ բոլոր զորականները ցրվելով զնացին,
նրանցից ոմանք՝ գուգարացոց իշխանի մոտ, մյուսներն այ-
լուր:

Եւ ի յաւարտ բանիս, ասեմք թէ չա՛ր է արդարեւ եւ դժընդակ՝ անմիաբանութիւնն ընկերաց ի մէջ հասարակութեան, եւ նախադասելն զբարին՝ եւ զօգուտն իւրոյ անձին՝ բարույ հասարակութեան իւրոյ: Են՝ յորում հասարակութեան եւ դուսնիցի շարս այս, նոյնժամայն եղծէ եւ ապականէ եւ ընդունայնացուցանէ զնոյն | հասարակութիւնն, թէ՛ տուն իցէ, թէ՛ քաղաք, թէ՛ ազգ իցէ, եւ թէ՛ անպարտելի մեծ թագաւորութիւն: Զի՞նչ մեծագոյն քան զկայսերութիւն Մակեդոնացոց եւ Հոռմայեցոց, եւ ընդէ՞ր ի սպառ կործանեալ բարձան ի միջոյ. վասն զի պակասեցաւ ի նոցանէ միաբանութիւնն եւ սէրն հասարակութեան, որով զօրացեալ իսկ էին:

Ընդէ՞ր եղեւ եւ կործանումն ազգին մերոյ, երկրին մերոյ եւ թագաւորութեան. վասն զի բարձաւ միաբանութիւնն յիշխանաց եւ ի նախարարաց մերոց: Զի որպէս միաբանութիւնն հողի է՝ եւ կեանք՝ ամենայն հասարակութեան, նոյնպէս եւ հակառակն սորին, այսինքն անմիաբանութիւնն՝ եղծիչ է եւ սատակիչ ամենայն հասարակութեան: Արդ՝ ողորմեցաւ արդարեւ Աստուած ամենայն տանն Սիսակայ որդւոյն Գեղամայ, յարուցանել նոցա զԴաւիթ եւ զայլ ամենայն որդիս զօրութեանց, որք քաջացան եւ ի բաց վանեցին զամենայն ապականիչ երկրի իրեանց: Ո՞վ թէ ո՞րպէս զօրացան, ընդդէմելին մեծամեծ թագաւորաց եւ ապրեցան եւ անպարտելի մնացին ի նոցանէ՞ զթութեամբ վերին խնամոցն, մինչդեռ էին միաբանք ի միասին: Բայց իբրեւ եհաս առ նոսա ապականիչ ախտս այս անմիաբանութեան, իսկոյն եղծան լուծան բաժանեցան եւ եղեն իբր զչեղեալս: Զի մեռաւ Դաւիթ ի քաջութենէ որոյ սարսէին ամենայն բռնակալք յուսացեալքն

Եվ խոսքիս ավարտին ասենք, որ արդարեւ չար է ու դըժընդակ՝ հասարակութեան մեջ ընկերների անմիաբանութեանը և սեփական անձին օգտակարն ու բարին հանրութեան բարուց վեր դասելը: Ո՞ր հասարակութեան մեջ ևս լինի այս շարիքը՝ իսկույն եղծում ու ապականում է և անխմաստ վ դարձնում տվյալ հասարակութեանը՝ լինի ընտանիք թե քաղաք, ազգ լինի թե անպարտելի մեծ թագաւորութեանը: Ինչն էր ավելի մեծ քան Մակեդոնացոց և Հոռմայեցոց կայսրութեանները, և ինչո՞ւ իսպառ կործանվելով վերացան. որովհետև նրանց մեջ նվազեցին հասարակաց միաբանութեանն ու սերը, որոնցով հենց զորացած էին:

Ինչո՞ւ եղավ նաև մեր ազգի, մեր երկրի և թագաւորութեան կործանումը. որովհետև մեր իշխանների ու նախարարների միջից վերացավ միաբանութեանը: Քանի որ ինչպես միաբանութեանը ամբողջ հասարակութեան հողին ու կյանքն է, նույնպես և սրա հակառակը՝ այսինքն անմիաբանութեանը, ամբողջ հասարակութեան քայքայիչ և կործանող է: Արդ՝ Աստուած իսկապես ողորմեց Գեղամի որդի Սիսակի ամբողջ տանը՝ տալով նրանց Դավթին ու մյուս բոլոր զորականներին, որոնք հերոսացան և վտարեցին իրենց երկրի բոլոր ապականիչներին: Օ՞, ի՞նչպես զորացան, ընդդէմացան մեծամեծ թագաւորներին և փրկեցին ու շարտվեցին նրանցից՝ աստվածային խնամոց զթութեամբ, քանի դեռ միաբան էին: Բայց երբ նրանց հասավ անմիաբանութեան կործանարար այս ախտը՝ իսկույն քայքայվեցին, լուծվեցին, մասնատվեցին և դարձան շեղածի նման: Որովհետև մահացավ Դավիթը, որի քաջութեանից ողորմ էին իրենց ուժին ապավինած բոլոր բռնակալները: Եվ հաջորդեց Միսիթարը, որ առ-

ի գօրութիւնս իւրեանց: Եւ յաջորդեաց Մխիթարն, որ իբր կորիւն առիւծու գոշեաց ի լերանց Սիւնեաց, եւ ի նմանէ սարսեցան ամենայն գազանք ի մորիս իւրեանց, եւ էջ եւ յափըշտակեաց զյափշտակութիւն ի միջոյ գազանաց, եհար խորտակեաց զեղջիւրս հպարտաց, հատոյց զհատուցումն եօթնապատիկ ի զլուսս թշնամեաց, եւ յամօթ արար զմեծամեծս հեթանոսաց, եւ յասար էառ զփառս Խոցա: Այլ գտան անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժանտախտիւս անմիաբանութեան, ուստի իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց, եւ մերժել ի հասարակութենէ իւրեանց զողորմութիւնն Աստուծոյ:

յուծի կորչունի նման գոշեց Սյունյաց լեռներից, և բոլոր գազաններն իրենց որջերում սարսեցին նրանից, և իջավ ու գազանների միջից հափշտակեց (նրանց) զավթած ավարը, խրփեց խորտակեց բարձրամիտների գոռոզությունը, յոթնապատիկ հատուցմամբ թշնամիների զլուխներ կտրեց ու ամոթահար թողեց հեթանոսների մեծամեծներին, և ավար առավ նրանց փառքը: Բայց ժողովրդի մեջ զանվեցին անօրեններ (շարագործներ), որ նաև վարակված էին անմիաբանության այս զարգելի ախտով, ուստի հանդգնեցին սպանել իրենց առաջնորդին և հեռացնել իրենց հասարակությունից Աստծու ողորմածությունը:

Այսոքիկ էին զօրավարք եւ զօրապետքն Դաւիթ Պէկին, մին էրն ի Շնհէր. Մխիթարն, մեծ Կորեկին, վրացի Յօհաննէսն, Բանդուր Զաքարիա իշխանն, Փոքր Կորեկին, Աւդանտել իշխանն, Պայինդուր իշխանն Վրացի (արդ սոքա Վրացի ապին, ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ եթէ էին ի Վրաց ազգէն, վասն զի Դաւիթ եւ ամենայն զօրավարք եւ զօրքն իւր էին ի յազգէ Հայոց), դարձեալ Սատուրն, Ղարակէօզն, Թադէոսն, Եղիազարն, Յարութիւնն եւ այլն, այսքան զօրօք...

Որք ի Շնհեր բանկէին քաջ զօրավարին Դավթի՝ էին այսոքիկ. Պուան զօրապետն, Պակի զօրապետն, Մինասն, Ստեփաննոսն, եւ ընդ նոսա 550 զօր:

Որք ի Տաթեւ՝ էին այսոքիկ. Ղիշին, Այտին, Եսային, Տիրացուն, Սիմէօնն, Աբկարն, եւ ընդ նոսա 400 զօր:

Որք ի Զանդուր գաւառին՝ էին այսոքիկ. Թորոսն, Վարդանն, Մարսաթան, Նուպարն, Թովմասն, Թուրինջն, Յօհաննէսն, եւ ընդ նոսա 2000 զօր:

Եւ ի Կալեր էր Պապ զօրագլուխն, եւ ընդ նմա 700 զօր: Իսկ Ստեփաննոս Վարդանէսեան, որ ի տանէն Շահումեան, էր սպարապետն եւ տեղեկան Պապայ, եւ էր սիրելի յաշտ Դաւթի, վասն իւրոյ քաջութեան եւ ազնուականութեանն. ուստի ետ նմա յետոյ նաեւ զիշխանութիւն եւ զկալուածս երից Մելիքաց:

Եւ ի Մեղրի էին այսոքիկ զօրավարք, այսինքն՝ Կոստանդին, Յօհաննէսն, Սարին, Առաքելն, եւ ընդ նոսա 400 զօր: Սոքա զղէմ կալան ութուտասան հազար զօրացն ի յամուր աւանն Մեղրեայ, եւ ի գիշերի միում սակաւօք ի վերայ յարձակեցան ութուտասան հազարացն, եւ ետուն նոցա զմեծամեծ հարուածս:

Յետ այսորիկ որդիքն Մաղաջուղին եւ Տիլէնչի մականուանելոյն էին, չորեք հարիւր արամբք:

Զօրավարն Սիսանայ՝ հինգ հարիւրով:

Մէլիք Ղուչուն՝ երկու հարիւրով:

Աւշար Երէցն, որ եւ կոչի տէր Դասպար, երկերիւր յիսնաւ: Ատում զօրավարն Պաղաբերդու՝ հարիւր յիսնաւ:

Ղազար զօրավարն Կուլքերդին՝ հարիւր տասամբ:

Սարգիս զօրավարն Շիվանու ձորոյն՝ երկերիւր յիսնաւ:

Մելիք Փարսաղան ի Հալի ձոր՝ երկրին՝ երկերիւր յիսնաւ:

Սրանք էին Դավիթ-Բեկի զօրավարներն ու զօրապետները, երբ Շենհեր ամրոցում էր. Մխիթարը, մեծ Գորգին, վրացի Հովհաննէսը, Բանդուր Զաքարիա իշխանը, Պայինդուր վրացի իշխանը (սրանք վրացի են կոչվում, որովհետեւ Վրաց երկրից էին, ոչ թե նրանց ազգից. քանի որ Դավիթն ու իր բոլոր զօրավարները հայոց ազգից էին, լուսավորչական), դարձյալ Սատուրը, Ղարակոզը, Թադևոսը, Եղիազարը, Հարությունը և այլք, այսքան զորքով:

Դավթի՝ Շենհերում բնակվող քաջ զօրավարները սրանք էին. Պուան զորապետը, Պակի զօրապետը, Մինասը, Ստեփանոսը, և նրանց հետ 550 զորք:

Ովքեր Տաթևում էին՝ Ղիշին, Այտինը, Եսային, Տիրացուն, Սիմեոնը, Աբգարը, նրանց հետ 400 զորք:

Եվ մելիք Փարսաղանը Հալիձոր երկրում էր 250 մարդով: Զավնդուր գավառում էին այս զօրավարները. Թորոսը, Նոսթարը, Վարդանը, Մարսաթանը, Թովմասը, Թուրինջը, Հովհաննէսը և նրանց հետ 2000 զորք:

Կալերում էր Պապ զօրագլուխը և նրա հետ 700 զորք:

Իսկ Ստեփանոս Վարդանէսյանը, որ Շահումյան տնից էր, Պապի տեղակալն ու սպարապետը և սիրելի էր Դավթի աշքում՝ իր քաջության ու ազնվականության պատճառով, ուստի և Դավիթը նրան սովեց իշխանություն ու երեք մելիքների կալվածները:

Եվ Մեղրիում էին այս զօրավարները. այսինքն, Կոստանդինը, Հովհաննէսը, Սարին, Առաքելը և նրանց հետ 400 զորք: Սրանք դիմագրավեցին տամուկ հազարանոց զորքին Մեղրի բերդավանտում և մի գիշեր քվորով հարձակվեցին տասնուկ հազարի վրա ու նրանց զորեղ հարվածներ հասցրին:

Սրանց հետ՝ Մաղաջուղի և Տիլենչի մականվանյալի որդիները 400 հոգով էին:

Սիսական զօրավարը 500 հոգով էր:

Մելիք-Ղուչուն՝ 200-ով:

Ավշար էրեցը, որ կոչվում է նաև տեր Դասպար, 250 մարդով:

Իսղաբերդի Աբամ զօրավարը 150 մարդով էր:

Կուլքերդի Ղազար զօրավարը 110 մարդով էր:

Շիվանիձորի Սարգիս զօրավարը՝ 250 մարդով:

Մելիք Փարսաղանը Հալիձոր երկրի՝ 250-ով:

Եւ տէր Աւետիան ի նոյն Հալիձոր՝ շորեք հարիւր վաթսուն եւ ութն արամբ:

Այս տէր Աւետիա արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս եւ ի պատմութեանս իսկ տեսանի, զի էր կարի քաջ եւ արիասիրտ եւ զօրատր յոյժ՝ բանիւք եւ գործովք. եւ վասն այսորիկ նա յորմէ հետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդրխտեղաւ ի Գաղատիայ, զազումք յորդորէին զնա ի հայրենի նորին գաւառէ՝ անդրէն դառնալ առ նոսա եւ պաշտպանել զերկիրն զայն. բայց նա հրաժարէր յազապս պատուոյ իւրոյ քահանայական կարգին:

Եւ տեր Ավետիար նույն Հալիձորում՝ 468 մարդով:

Այս տեր Ավետիար բազում մեծ սխրանքներ գործեց, ինչպէս Պատմութեան մեջ ևս երևում է. շատ քաջ էր ու արիասիրտ, և խոսքով հույժ գորավոր, և գործով, և սրա համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Գաղատիայում, շատերը նրա հայրենի գավառից հորդորում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՑ

Մ Ա Մ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն
(Պատում Ստեփան Շահումեանի)

Թէ ՈՐՊԷՍ Ի ՎՏԱՐԻԼ ՔԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ
ՀԱՅՔՆ ԽԱՓԱՆՈՒ Ի ԿՈՒԻ ԵԼԻՆ

Զկնի խմբելոյն Աղուանից ի վերայ Պարսից շահ Հուսէյնին եւ սատակելոյ զնա, եւ զաթոռ թագաւորութեանն յափրշտակելոյ, որ եղև 1170 թուականին Հայոց [=1721], ի ժամանակի յորժամ Լակզի թաթարքն ի յերկիրն Պարսից ի կողմանս Հայոց եւ Աղուանից արշաւեցին եւ զգիւղորէսն Գանջու եւ Շամախու ասպատակեալ յաւար առին, որք եւ զԱղուեցիին ի Մասուբէկեան տոհմէ զիշխանն Շամախու սպանին, եւ զամենայն զօրաւոր դիմակեացսն սատակեցին, եւ զժողովորդրս երկրին եւ զկանայս եւ զմանկունս գերի վարեցին: Զորոց մի ըստ միտջէ այժմ յայսմիկ վայրի շունիմք պատմել: Եւ կամ թէ զիւրդ զայսչափ շարիս տեսեալ Հայոց Գուղարի գառառի, ընդդէմ ելին նոցա ի բաց վանել, գունդ կազմեցին զզէն զզեցան, պատրաստեցան ի պատերազմ, ճակատեցան առ թարթար գետովն՝ ընդդէմ ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկրին իրեանց. այսինքն՝ թէ՛ Լէկզի թաթարին եւ թէ՛ Պարսից: Զայստսիկ զամենեսեան յայսմ վայրի ոչ ոնիմք գրել. այլ միայն զխմբելոյն Հայոց յեօթնաբերդ գաւառին Խափանու եղելոց ձեռն արկանեմք պատմել:

Յամին 1171 հայկազեանս թուականի [=1722], յորժամ լուան բնակիչք եօթնաբերդեան գաւառին Խափանու զասպատակն եւ զաւերումն Գանջու եւ Շամախու, Հայք եւ Պարսիկ առ հասարակ խոռովեցան եւ զահի հարեալ սասանեալ | տագնապէին, եւ իբրեւ ամիսս երկուս եւ երիս առ միմեանս երթ-

եւեկս առնել ի միմեանց կասկածէին: Քանզի զանձինս իրեանց առ հասարակ ի խնամոց ընդհանրական ընտանի խնամակալութեան բոլորովիմք լքեալս եւ լուծեալս տեսանէին, եւ վասն այսորիկ քաղաք ի քաղաքէ, ազգ յազգէ՝ եւ իշխան յիշխանէ զկասկածանս թշնամութեան կրեալ տագնապէին, որպէս եւ գրեալ է՝ թէ «Յաւուրսն յայնտսիկ ոչ գոյր թագաւոր Իսրայելի, եւ այր իւրաքանչիւր զհաճոյս աշաց իւրոց անոնք»: Սոյնպիսի աղէտս շարեաց եւ սոքա կրէին:

Ի սոյն աւուրս դառնութեան սասանութեան, Ստեփանոս անուամբ ոմն ի կողմանցն Կալերու վանքեցի, ի Հայոց ազգէ, խորհուրդ ի մտի դնէր անցանել ի Սիւնեաց գաւառն եւ զնալ հասանիլ յաշխարհն Վրաց ի Մցխիթ քաղաք, առ Շահնաւուզ իշխանն Վրաց, եւ խնդրել ի նմանէ զայր մի տալ Խափանու ի զօրագլուխ, եւ հրաման տալ նմա զօրաժողով լինելոյ, եւ զերկիրն ի թշնամեաց պահպանելոյ. զի զայս ոչ ոք ի սոսկականացն իւրովի առնել համարձակէր. եւ եթէ առնիցէր ոք, իբրեւ ասպտամբեալ ի տէրութենէ՝ ի բաց մերժիր ի ժողովրդեանէն: Այլ իշխանն Վրաց մեծ էր, եւ զայսպիսի զօրագլուխ յայնմ գազառի կացուցանել նմա անկ էր: Իսկ արդ՝ թէ որով մարթացի զհայցուածն իւր առաջի իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ սուտ գիրս յանուն յիսուն արանց տանուտերանց Խափանու յօրինել եւ ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքսն քանդակել, եւ զայն գիրն նոքօք կնքեալ հաստատել: Եւ զօրութիւն բանից հայցուածոց հրովարտակին | այսպիսի ինչ էր. Տո՛ւր մեզ զայր մի՝ լինիլ զօրագլուխ, որպէս զի քոյին հրամանաւ լիցի մեզ այս օրինաւոր, եւ մեր զգօրսն հոգամք պատրաստել, եւ նոքօք ըզգաւառն մեր ի թշնամեաց աներկեան առնել: Ել զնաց Ստեփանոս եւ Եհաս ի Մցխիթ քաղաք, յանդիման եղև իշխանին Վրաց, եւ գոյժ տուեալ նմա յաղազս նախաշիշատակեալ քաղաքացն՝ պատմեաց նմա զամենայն վտանգս եւ զխոռովութիւնս, եւ զահն եւ զերկիւղ ժողովրդեանն Խափանու, եւ մատոյց նմա զհրովարտակն զոր արարեալ էր յանուն տանուտերանցն: Հաճոյ թուեցաւ իշխանին հայցուածն իւր, զոր յանուն նոցա հայցէր:

Եւ ետ զԻսաուր Պէկն, որ ի յազգէն Հայոց, երկու հազար արամբ, եւ զիշխանութիւն ետ նմա զզօրս գումարել եւ պահել զերկիրն Խափանու:

Եւ ել նա յերեսաց իշխանին Վրաց եւ զնաց ժողովեաց ի զօրս երկու հազար սպառազինաց եւ զքսան հարիւրապետս (որոց անուանքն են այսորքիկ, Ավթանդիկ, Կեօրկի, Կեօրկի փոքր կոչեցեալ, Ծատուր, Դարակեօզ, Թաթոս, Եղիազար Յարութիւն, եւ այլն, եւ Ստեփանոս ընդ նոսա), եւ եկն Եմուտ նոքօք ի գաւառն Սիւնեաց: Աղբ եղի գաւառապետին նախ ջեւանո՞ւ եթէ Դաւութ Պէկն երթայ ի Խափան, զօրածողով ի նիլ անդ: Ել նա երկոտասան հազարաւ ի վերայ Դաւութ Պէկին: Իսկ նա իբրև լուաւ զայս, հրաման ետ զօրս ժողովել տանէն Սիսանայ, եւ ժողովեալ խմբեցին զչորս հազարս արանց, եւ զառաջին երկու հազարսն յաւելեալ ի նոսա՝ եղին վեց հազար վառեալք ի պատերազմ, եւ նոքօք հանդերձ ճակատեցաւ ի վերայ Նախիջեւանո՞ւ գետոյն՝ ընդդէմ Խանին Արդ՝ իբրև բախեցան ընդ միմեանս, զօրքն Խանին ի փախուստ դարձան, եւ սոքա զկնի նոցա պնդեալ փախստեալ տանէին ի 18 ժամէ աւուրն մինչև ց21 ժամն վանեցին: Եւ ի 22 ժամուն փախստեալքն ամենեքեան ի միասին հաւաքեցան ի կրունկս ընդդէմ Հայոցն դարձան: Իսկ Հայքն փախստեալք եղին ի նոցանէ մինչև ի գետափն. 2200 մարդ գետակուր եղին. իսկ Դաւիթ Պէկն, Ավթանտէլն, եւ երկոքեան Կօրկիքն ամբացան ի վէմ մի յափն գետոյն, եւ անտի մինչև ց2 ժամ գիշերոյն հասին ի Սիսան, եւ ամենայն զերծեալքն ի փախստէից ժողովեցան ի վերայ Դաւութ Պէկին: Եւ անտի եկին յերկիրն Տաթեւ, եւ զզօրսն ժողովեալ առ ինքն՝ նստաւ ի Վանս:

Եւ իբրև լուան բնակիչքն Չանդրու զգայն Դաւիթ Պէկին՝ դիմեցին առ նա, եւ զառաջինն դիմեաց Թորոսն, որ բնակէր ի Խորձոր, զալ եւ առնուլ ի նմանէ գիշխանութիւն զօրապետութեան. եւ զնացեալ ի Չանդրու՝ ժողովեաց զարսն տեղւոյն առ ինքն. մնաց անդ:

Յետ այսորիկ աւուրքն աւուրք գարնանային, եւ եկն հօտ մի ոչխարաց Սուլտանին, յորում էին 2000 ոչխար եւ 12 հովիւ, արածիլ ի յարտորայս նոցա. եւ զայս իբրև լուաւ Թորոս հարիւրապետն՝ վաղվաղակի առաքեաց զարս, եւ կոտորեցին զհօվիսն եւ առին զամենայն հօտն: Արդ՝ զայս իբրև

¹ Այս եւ յաջորդ հինգ տողերը աւելի ուշ գրուած, տարբեր գրով, յետոյ առանձին թողթով փակցուած են բնագրին մէջ: Այդ պատճառով թերեւ գրուած է Դաւիթ եւ ոչ թէ Ծաւութ, կամ Դորոս՝ փոխան Թորոսի:

լուա Պարկուշատու Փաթալի Սուլտանն եւ իւր եղբայրն Արաւի Սուլտանն, թէ Հայքն Չանդրուրեան ապստամբեալ են ի Թուրքաց եւ կոտորեալք են զնոսա, գրեաց վաղվաղակի ի լեւազ Մանաճիք օղբի Սափի Դուլոյն այսպէս, թե այսինչ օր երկոտասան հազարու ելանեմ ես ի վերայ Հայոց, դու ես առ ընդ քեզ զամենայն զօրս Տաճկաց որք են ի Կենսուզն, եւ դու այդի եւ ես աստի ելցուք ի վերայ Հայոց եւ ջնջեցուք զնոսա ի միջոյ: Այլ Սափի Դուլին ոչ էառ յանձն. եւ ել Փաթալի Խանն երկոտասան հազարաւ ի վերայ Չանդրուրին. իսկ նոքա առաքեցին յառաջագոյն ի Կամնադրոյ ի յիշկերոյ 150 սպառազէն, կարնուլ զկիրճս ճանապարհին, զի էր անտառախիտ յոյժ, եւ դարան մտին նոցա անդ: Արդ՝ զօրքն Թուրքաց իբրև հասին անդր, զօրքն Հայոց արձակեցին ի վերայ նոցա զհրացանս՝ մինչև ի դարձուցանել զնոսա ի կրունկս. եւ իբրև դարձան նոքա, սոքա պնդեցան զկնի եւ կոտորեցին ի նոցանէ շորս հազար այր, եւ մնացեալքն փախեան ի Պարկուշատ: Բայց հետեւեալ աւուրն, ել լեվազ Սափի Դուլին 300 սպառազէն արամբ, եւ եկն նենգութեամբ ի յԱփկու վանքն, եւ գրեաց Իքաց իշխանացն՝ զի եւ նոքա եկեցեան, որպէս զի Վանլեւ եւ զամենայն գիւղորայս Հայոց, որք են անդ, աւերեցեան. եւ ոչ կամեցաւ Միրզասային: Այլ զայս ամենայն իմացեալ արքն Մանլեու, առաքեցին արս ի Չաւոնդուրն եւ ասեան՝ թէ ել Սափի Դուլին եւ զայս ինչ եւ զայս ինչ խորհեցաւ առնել:

Յայնժամ ել անտի Թորոս Պէկն՝ հինգ հարիւր արամբ՝ ի գիշերի, եւ ի յառաւօտուն պահու յերեքտասաներորդ ժամու եհաս ի յԱփկիս. եւ զայն տեսեալ Սափի Դուլոյն՝ փախեաւ ի նմանէ, եւ նա պնդեցաւ զկնի նոցա եւ եհար ի նոցանէ 80 այր. եւ ի ժամանակին յայնմիկ սոքա հարին կոտորեցին զերես գիւղս Թուրքաց եւ առին զամենայն ինչս նոցա եւ դարձան ի Մանլեւ: Արդ՝ իբրև լուր եղի բանս այս ի Քիս, ժողովեցան ամենայն արք տեղւոյն այնորիկ ի միասին եւ եկին արտաքս. եւ էջ առ նոսա Թորոսն ի գլխոյ Մանլեւին, եւ հարեալ ի դիմի՝ կոտորեաց ի նոցանէ զբազումս, եւ այլքն փախեան ի Քիս. եւ նոքա զամենայն զկին եւ զորդիս իւրեանց հաւաքեալ էին ի վերայ բարձրագոյն ինչ զագաթան մերձ ի շէնն. հրամայեաց Թորոս զօրացն ոչ պնդիլ զկնի նոցա, այլ երթալ հարկանել զքաղաքս նոցա, եւ առնուլ յաւարի զամենայն

ստացուածս նոցա, եւ դստնս նոցա այրել, եւ իբրեւ կատարեցին՝ դարձան անդրէն ի Մանչեւ, եւ երեք օր հանգեալ անդ: Եւ կոչեալ առ ինքն զՊապ Կալիքեցի՝ զորդին Սրապիտնի, կացոյց զնա վառավար ի վերայ երկրին Կենայտեղոյ, եւ ինքն դարձաւ ի Չափանդորն: Իսկ Պապայ զնացեալ անդ՝ դորժողով եղև, եւ եկն ի Կալերս: Բայց վերոյ ասացեալ Սափի Ղուպին ի Լեւազու ձորն, որքան Թուրքի գիւղորայք գոյին, առեալ փախեաւ ի յՈւրդուվար, եւ մնաց միայն շորս գիւղ Թուրքաց. եւ գերիս դիւզսն՝ այսինքն Դամալի, Շրդի եւ Պիրենայ, ի յԵրձաւաքարէն, հրամանաւ Պապայ զօրաստիսին: Ըստ արեցին ի Կալերն, եւ զնոսա ի մեծէն մինչև ի փոքր կոտորեցին, եւ զբոլոր ինչս նոցա ստին՝ եւ մնաց մի միայն թաղ յորում էր 60 տուն. նոքա աղաղակ բարձին առ սոսա՝ թէ մեք հնազանդիմք ձեզ. եւ խնայեցին ի նոսա:

Յետ այսորիկ իբրեւ երկու ամիս ի վերայ անցին, եւ Սափի Ղուպին 500 արամբ ի յՈւրդուվարէն, եւ գիշերայն եկն ի Սայիպուն եւ եհար դերկոս գիւղս: Հայոց, զարսն կոտորեաց եւ զկին եւ զօրդիս նոցա վարեաց ի դերութիւն, եւ զինչս նոցա: Զայս իբրեւ լուա Դաւութ Պէկն, կոչեաց զմի ոմն ի հարկւրապետացն՝ որոյ անունն էր Մխիթար, եւ առաքեաց զնա եւ զզօրս նորա ի վերայ նոյն մնացեալ 60 տանն թուրքաց. եւ նոքա եկեալ զամենեսեան զնոսա ի տունս իւրեանս իբրեւ զոչխար մորթեցին, եւ առին զինչս նոցա. եւ անտի զնացին ի յանապատն Հարի ձորոյ, եւ տեսին զի այն պարսպեալ էր եւ ամուրս կանգնեալ. հրամայեաց եւ Պապայ հազարապետին զնալ ի ձորն Լեւազու, զի տրքան թուրք իոցին մնացեալ անդր՝ կոտորեցեն, եւ Պապ հազարապետն, 1500 այր ընդ նմա, եւ եկին ի Լեւազու ձորն եւ ոչ զօք գտին անդր ի Թուրքաց, զի սակաւ ոմանք մնացեալ էին, եւ նոքա եւս փախուցելս անկան ի յՈւրդուվարն: Իսկ Պապ զննեաց եւ եզիտ անդ զբազում ինչս եւ զստացուածս, եւ առաքեաց զայնս ի Զուլուրու եկեղեցին, եւ կացոյց անդ պահապանս, եւ ինքն խաղաց զնաց ի Վալրիվարու գիւղորայսն Հայոց եւ թէ՛ ի սոցանէ թէ՛ ի Լեւազու զբազում ինչս եհան. եւ ի նոսա եզիտ գերիս տունս թուրքացեալս, եւ կոտորեաց զնոսա, եւ էառ զինչս նոցա եւ առաքեաց զնոսա ի Զուլվար, եւ այլ ոչ եւս մնաց Թուրք

ի խափան: Բայց միայն ի կողմանս Փոլսուրութա սարին ժողովեցան Թուրքն ի Զետու բերդն, որոց գլուխն էր Ասլամազ Պէկն: Զայս իբրեւ լուա Տաւութ Պէկն, գրեաց ի Հալուձորոյ առ Թորոս հազարապետն եւ առ Պապ հազարապետն, զի եւ նոքա կլցեն անտի զօրօք իւրեանց ի վերայ հէնիցն Թուրքաց, եւ ինքն եւս եհաս ի վերայ նոցա յայնմ կողմանէ. մարտ եղին ընդ նոսա, հարին սատակեցին զնոսա մինչև ցՅՅ ժամ աւուրն, եւ ոչ մի ոք զերծաւ ի նոցանէ: Եւ անտի իբրեւ եկին ի Դարաշիմէն, Թորոս Պէկն եւ ընդդէմ Տաւութ Պէկին, եւ ասէ. Զքեզ ոչ խնդրեմ, այլ զերկիրն իմ եւ պահպանեմ: Եւ անտի դարձաւ ի Չափանդուրն, Դաւութն զնաց ի բերդ իւր, եւ Պապ ի Կենայտեղն:

Արդ յետ այսց բանիցս, Թորոս ժողովեաց յիւր երկրէն վեց հազար զօրս՝ առ ի զնալ ի վերայ Ուրդուվարայ: Յայնժամ Մեղիք Յոանկուլն ի Եոցիվանակու գրեաց առ Թորոս նենգութեամբ այսպէս, թէ Փաթալու Սուլտանն լուեալ է թէ դու ելանելոց ես ի վերայ Ուրդուվարին, ինքն եւս զօրս կազմեալ է եւ պատրաստեալ, զի յորժամ դու ելանիցես այդի, նա մտեալ յերկիրն քոյ՝ աւերեցէ: Ուստի յոյժ բարուք առնես, եթէ յառաջ եկեսցես ի վերայ Պարկուշաթայ, զի եւ ի մեր Պարկուշաթայ Հայոցն քեզ բազում օգնութիւնս առնեմք: Իսկ նա հաւատաց, եւ ել միամտութեամբ եւ քնաց մինչև Եղայ հորթ, որ է ի սահմանս Պարկուշաթայ, ինքն եւ վեց հազար զօրք ընդ նմա: Եւ եկն Յոանկուլն եւ երկու հազար զօրք ընդ մնա, եւ եկաց ի մի կողմն զօրացն Թորոսին: Ել եւ Փաթալու Սուլթանն, ինքն եւ եղբայրն իւր Աղասի Սուլթանն եւ տասնեութն հազար զօրք ընդ նմա, եւ եկաց զէմ յանդիման զօրացն Թորոսին, սոքա մարտ եղին ընդ նոսա եւ հարին խորտակեցին զճակատն Թուրքաց. եւ իբրեւ տանէին զնոսա փախստակեանս առաջի իւրեանց, Փոանկուլն զարս արձակեաց զկնի Սուլտանին եւ ասէ, Զի՞նչ գործէք, զիա՞րդ փախչիք, դարձարուք ի կրունկս, զի ես ընդ ձեզ եմ. դուք ի յառաջոյ եւ մեք զկնի սոցա խորտակեսցուք զսոսա: Եւ արարին այնպէս. եւ կոտորեցին զզօրսն Թորոսի, եւ զԹորոս սպանին, եւ ի վեց հազարացն՝ միայն հազար շորս հարիւր մարդ զերծաւ, եւ այլքն մեռան, եւ փախստականքն եկին ի Չափանդուրն:

Իսկ Փաթալու Սուլտանն կամեցաւ գալ մտանել ի Զա-

¹ Ձեռ. ԳՅ:

վունդուր երկիրն, եւ աւերել զայն: Բայց Նուպար զօրապետն նստաւ յերկիրն Թորոսի, եւ առաքեաց առ Պապ զօրապետն զարս եւ ասէ. Դու ինքնին գիտես զի ահա կորեաւ զօրքն մեր, եւ արդ յարուցեալ զայ ի վերայ մեր Փաթալու Սուլտանն, մեզ յօգնութիւն հասիր: Եւ նա առաքեաց առ նոսա երկու հազար զօրս ի Չավունդուրն՝ յօգնութիւն Նուպարին: Իսկ Փաթալու Սուլտանն իբրեւ լուա թէ յօգնականս հոռուն Նուպարին ի Կանաուզայ, դարձաւ յետս: Արդ ի զօրացն Պապայ որք եկին ի Չավունդուրն՝ երկու զօրապետք՝ ասպտամբեցան ի Պապայ եւ եկեալ ի Լիշքին զօրաժողով եղեն եւ կամեցան ունիլ զՊապ եւ նա փախեաւ անտի, եւ ասեն՝ մեք կառավարեմք զերկիրն զայս իբրեւ լուա Տաութ Պէկն՝ առաքեաց առ նոսա զԿօրկի զօրապետն 200ով եւ հաշտեցոյց զնոսա, եւ վերստին կոցոյց զՊապ ի վերայ նոցա, եւ զվերոյ յիշեալ Լեւազու ունեալ աւարսն բաժանեցին ի մէջ իւրեանց:

Արդ՝ յետ այսորիկ իբրեւ մի կամ երկու ամիս ի վերայ անցին, եկն լուր առ Պապ ի յՈւրդուվարայ, թէ Թորքն վերստին զօրաժողով եղեւ առ ի զալ աւերել զՆափան: Յալն ժամ խորհուրդ արարին ծերքն Կենաուզայ՝ զի մարդիքն գիւղօրէից բոլոր հաւաքեցեն ի երկու գիւղս՝ ի Կեսն վանք կոչեցեալ շինչեւ մինչեւ ի Կալեր, եւ ի կողմանցն Կալերու մինչեւ ի Մանլեւ եւ մինչեւ ցԱփքիս: Եւ իբրեւ ժողովեցին զամենեւեան զնոսա անդ, ի հետեւեալ աւուրն տեսին զի Սափի Ղուլին եւ որդին Ղազու Ուրդուվարեցույ եւ որդին Շահխալս մին եւ ութ հազար զօրք՝ ընդ նոսա անցեալս առ նոսա յԱլանկեղայ սարոյն եւ եկեալս ի վէմն Պուղայ: Արդ՝ իբրեւ լուա Պապ զանցանելն նոցա, ել ընդ առաջ նոցա երկու հազարաւ, եւ ետես ընդ այն՝ զի զօրքն թշնամեաց բազումք են յոյժ, դարձաւ յետս. իսկ ժողովուրդք գիւղօրէիցն որք հաւաքեալք էին ի վերոյ ասացեալ տեղոջ, ամենեքեան անցնել ի սարոյն Խաչպուրու ի հողն Չավունդուրին, եւ այլազգիքն լուա յաղացեալ եկին մինչեւ ի Դաշալտուն եւ զբոլոր գիւղօրայսն քանդեցին:

Իսկ Տաութ Պէկն իբրեւ լուա այնպիսաբարն գալն արագեաց, ել երկու հազար եւ ութ հարիւր արամբ, եւ էջ

դաշտ անդր. եւ զայս լուեալ այլազգեացն փախեան ի յՈւրդուվար: Այլ Տաութ Պէկն իբրեւ լուա՝ թէ Պապ սակաւ ուժամբ է կացեալ, բարկացաւ յոյժ ի վերայ նորա եւ ասէ. Միթէ չիցէ՞ բաւական զի փախեաւ ի պատերազմէ, եւ արդ ոչ եւս կամի դալ առ իս: Եւ ել անտի Տաութ Պէկն եւ եկն ի Կալերս, եւ կալեալ անդ զՊապ՝ տարաւ ընդ ինքեան, եւ անցեալ ընդ Խաչպուրու սարոյն՝ եկն յիշկետ, եւ անդ զլիսատեաց զնա, եւ զտուն նորա աւար էառ եւ երեք օր նստաւ յիշկետ, եւ յետ երից աւուրց զնաց ի Գեմանցու դաշտն:

Եւ այլազգիքն իբրեւ լուան թէ Տաութ Պէկն անցաւ ի Չավունդուրն, ել Սափի Ղուլին եւ որդին Ղազու եւ որդին Շահխալսամին երկոտասան հազարաւ, եւ անցին յԱլանկեղայ սարոյն ի Կենէուզն եւ զբոլոր գիւղօրայսն այրեցին. եւ լուր էհաս Տաութ Պէկին վասն այսր ամենայնի ի Չաւունդուրն, զի յաւուրսն յայնոսիկ բնակէր նա ի Մավն, եւ ել չորս հազարաւ ի վերայ այլազգեացն, եւ եգիտ զնոսա ի Լիշքին որ է յայնկոյս Ղօզղօզ գետոյն: Իսկ Թորքն բնակեալ էր ի Լիկին. իբրեւ եւ տեսին զսոսա՝ ելին արտաքս եւ եկին ի Դողթ, ոչ է գետափն...¹ եւ ոչ ետուն անցանել զգետն. եւ սոքա աստի եւ նոքա անտի մարտ եղեալ կուռէին յառաջօտէ մինչեւ ի 24 ժամ աւուրն, մինչեւ ի գալն նոցա ի Ջիպանդ ի գլուխն դաշտուն: Եւ ի գիշերի Տաութ Պէկն էանց ի Հալի ձորն: Եւ ի յառաջօտուն պահու, նոքա իբրեւ տեսին թէ Տաութ Պէկն ոչ է անդ, եւ ոչ ուստեք էր նոցա այնուհետեւ երկիրդ, անցին ի Գուրամ, եւ եկին աւար հարկանելով զկողմանս Գուրամու՝ մինչեւ ի Մեղրայ: Արդ՝ մինչեւ եկեալ էր նոցա ի Մեղրայ, մեղրացիքն վասն զի լուեալ էին զգալ նորա ութուտասն² հազարաւ, ժողովեցան արք քաղաքին յերիս թաղս: Իսկ զօր այլազգեացն դիմեաց զառաջինն մտանել ի փոքրիկ թաղն, եւ սոքա ի վեր առին զկամուրձն, կալան զանցս գետոյն զինուրք եւ թուփանկովք, եւ նոքա լքան անցանել զգետն: Եւ յայնմ վայրի որք մնացին ի փոքրիկ թաղն՝ լուրս առաքեցին արանցն Գուրհամոյ...³: Այլազգիքն դիմեցին ի մեր փոքր

¹ Ձեռ. ի 2 գիւղս:
² Ձեռ. ը հազար զօրք:

¹ Ձեռագրին մէջ՝ մէկ բառի տեղ պարապ թողուած է:
² Ձեռ. ԺԸ:
³ Ձեռագրին մէջ՝ երկու բառի տեղ պարապ թողուած է:

թաղն. ուստի մինչև ցերկու օր եթէ յօգնութիւն մեզ ոչ հա-
սանիցիք՝ գերիմք ի նոցանէ: Ես Ստեփաննոս Վարթանէս Շա-
հումբանէս ի գիշերայն եկեալ գնացի ի Չավրնդուր առ դօրա-
պետն Պայինտուր, եւ յայտ արարի նմա զամենայն նեղու-
թիւնս եւ զանձկութիւնս Մեղրացոց, եւ նա առժամայն հրու-
ման տայր վաղվաղակի գալ ժողովիլ առ նա ամենայն զօ-
րականացն. եւ եկին խմբեցան 2000 քաջ սպառազէն ի Չա-
վրնդուր եւ ի Գուրհամայ, եւ ել նորօք եւ գնաց բանակեցու-
այն գիշեր ի Մազրան աւանն, եւ Ստեփանն ընդ նմա. եւ
մերձ յառաւօտուն այժո՞՞ն՝ ելին կազմեցան եւ անցին գնացին
ի կողմանցն Ափկու, եւ հասին ի Մեղրի: Իսկ զօրքն Քուրբաց
ի բանակէ անտի իբրեւ զբազմութիւն զօրացն. Հայոց տե-
սանէին՝ ոչ հաւատային թէ յօգնութիւն իցեն նոցա հասեալ
յայլ ուստեքէ: Այլ ասէին թէ Մեղրացիքն | Կանանց իրեանց
զգեցուցեալք են զգեստ առնացի եւ զարդ պատերազմի. եւ
տուեալ զբազում սուտ զրօշակս ի ձեռս նոցա, առ ի երկե-
ցուցանել զմեզ:

Արդ մինչ չեւ էին հասեալ օգնականքն Հայոց ի Մեղրի
քաջ եւ արի սպառազէնքն Մեղրացոց գործ քաջութեան ի
նմին գիշերի գործեցին, զի անցեալ յայնկոյս գետոյն յեղա-
կարծումն ժամու՝ ի մէջ բանակի թշնամեացն, յարձակեցան
եւ զբազումս ի նոցանէ ի սուր սուտերի սատակեցին, մինչև
եւ զորդին Շահ Իսլամին երկու հազարաւ ի փախուստ արկին
ի յևրդուար քաղաք. այլ զի սակաւք էին՝ ոչ կարացին ի
սպառ ջնջել եւ անհետս առնել զնոսա անտի. դարձան ան-
զըրէն ի Մեղրի:

Իսկ օգնականքն Հայոց իբրեւ գային ի մեծ թաղն Մեղրու
հասանէին, Մեղրացիքն վաղվաղակի նոցա զփերակուր պա-
տրաստէին: Յայնժամ արգելու զնոսա Պայինտուրն, որ էր
իշխան եւ զօրագրութիւն ամենայն զօրուն եկելոյ ընդ նմա, եւ
ասէ. քաւ լիցի մեզ ուտել, մինչ չեւ իցեմք վանեալք ողոր-
մութեամբն Աստուծոյ զթշնամիսն մեր: Զի խորհուրդ եւ ջա-
կէր նորա գործ պատերազմի փութով վճարել. վասն զի միով
աւուրք յառաջ քան գայն, այլազգիքն գրեալք էին յայնկոյս
գետոյն Երասխայ զօրականացն Քուրբաց՝ գալ օգնութիւն
հասանել նոցա. եւ նոքա ի պատրաստի էին բազում քնդու-
գալ հասանիլ ի թիկունս նոցա: Ուստի վաղվաղակի հանդի-
առնէր ամենայն զօրուն եկելոյ ընդ նմա եւ որք ի յամրի ան-

էին, եւ կարգէր կազմէր, եւ զնոսա յերիս գունդս բաժանէր,
| առ յիրաքանչիւր զունդ 860 սպառազէն վառեալ: Ապա ի
վեշտասաներորդ ժամու աւուրն՝ մի գունդն խրախոյս բար-
ձեալ մղիլ սկսաւ ի մէջ զօրացն Քուրբաց, յաջ եւ ահակ կո-
տորելով. եւ այլ երկու գուրքն յաջմէ եւ ահակէ զօրաց իշնա-
մեաց՝ ձայն տուեալ զաղաղակ բարձին, ի վերայ յարձակե-
ցան, եւ ի 16 ժամէ աւուրն մինչև ց23 ժամն ի մէջ առին
զբազմութիւն զօրացն անօրինաց, եւ հարին կոտորեցին ի
նոցանէ աւելի քան զմեծասան հազար այր. ի սոցանէն ան-
կան յերեւելի անձանց լէվազեցի Մուրում Քալանթարն եւ
այլք բազումք, եւ մնացեալքն մազապուրծ անկան ի յևրդո-
վար քաղաք: Եւ ձերբակալ արարին զևրդուարեցի Հաճի Շա-
փին, որ էր այր երեւելի ի մէջ ամենեցուն նոցա, եւ առին
զամենայն զկաճ զկարասի բանակի նոցա, զզէն զսուր եւ
զամենայն զործիս պատերազմին, եւ զամենայն զառ եւ զա-
ւար նոցա: Եւ եղև ուրախութիւն մեծ ամենայն բնակչացն
նափանու:

Իսկ զՀաճի Շափին՝ զօր ըմբռնեցին, կամէր Պայինտուրն
զօրագրութիւն ածել զնա առ Դաւիթ, բայց իշխանք Մեղրացեայ
աղաչեցին զնա թողուլ զՀաճին անդ առ նոսա. եւ նա շնոր-
հեաց նոցա: Եւ եղին զնա ի պահեստի ի տան տեառն Ներսի-
սի: Եւ զօրականքն ամենեքեան գնացին իւրաքանչիւրքն ի
տունս իրեանց, եւ շինականքն Գուրհամայ դարձան գնացին
եւ բնակեցան իւրաքանչիւր ի տունս իւրանց, որք վասն ահի
հէնիցն անցեալք էին յերկիրն Չավրնդուր, որպէս ի վերոյ ա-
պացաք:

Յետ այսորիկ իբրեւ մի ամ ի վերայ անցանէր, եղբայրն
Երվանու նանին բազում զօրօք կուտէր առ ի գնալ յօգնու-
թիւն եղբօրն իւրոյ, որ պաշարեցեալ էր ի յերեւան քաղաքի
ի զօրացն | Օսմանցոց. արդ՝ սա իբրեւ բազում զօրօք ի յևր-
դովար քաղաք դայր հասանէր, ամենայն մահմետականքն
քաղաքին յառաջ մատուցեալ բողոք բարձին զհայոցն Մեղ-
րեայ, եւ ասեն. Դատ արա ընդ մեզ եւ ընդ նոսա, զի նոքա
կոտորեցին կորուսին զամենայն այր քաղաքիս: Եւ նա առա-
քեաց զժառայնս իւր ի Մեղրի՝ կոչել առ ինքն զոմանս ի գըլ-
խաւոր իշխանացն, առ ի գիտել զպատճառն այնպիսոյ աղ-
մրկիւն. իսկ իշխանքն Մեղրեայ իբրեւ գայն լսին, տագնապ-
էին վարանէին ի միաս իրեանց: Ի միասին գային ժողով-

էին խորհուրդ խորհէին եւ ասէին. զի՞նչ արասցուք, զի թէ
երթացեմք՝ մեծ վտանգ է մեզ, եւ թէ ոչ երթայցեմք՝ վիշտ
վտանգի է մեզ եւ ժողովրդեանս. վերջապէս վասն հասարակ
կի օգտի հաճեցան ոմանք. ի ծերոցն զվտանգ մահու յանձն
առնուլ, եւ երթալ առ Խանն: Եւ իբր մտին սոքա ընդ ծառա-
յլան Խանին ի յՈւրդովար, քաղաքացիք առ հասարակ դիմե-
ցին ի վերայ նոցա՝ սպանանել զնոսա. բայց ծառայքն Խա-
նին ոչ հտոմն թոյլ, մինչև ածին կացուցին զնոսա առաջի
Խանին, եւ քաղաքացիքն զհետ նոցա երթային մինչեւ ի դուռն
Խանին. եւ իբրեւ յանդիման եղեն նմա, սկսան քաղաքացի-
քըն աղաղակել վերստին եւ ասեն. Դատ արա ընդ մեզ եւ
ընդ Մեղրացիսն, զի կորուսին սպառեցին զմեզ: Եւ ի հարցու-
նելն Խանին զՄեղրացիսն, պատասխանի առնէին նմա՝ թէ
մեք զոչ ոք ի գոցանէ ի դուր տարապարտուց սպանաք, եւ ոչ
ոմեք մեղաք, այլ դոքա բազում զօրս կուտեցին եւ զբազում
գիւղորէս մեր կոտորեցին կործանեցին եւ ի գերի վարեցին.
Ապա ի դուր տարապարտուց եկի [ն] պաշարեցին զմեզ ի
կամեցան բնաջինջ առնել զմեզ, եւ մեք առ ի պաշտպանել
զմեզ՝ ընդդէմ դարձաք դոցա եւ ի բաց վանեցաք. եւ արդ
հարց ցրոսա թէ զի՞նչ մեղաք, զո՞ սպանաք, ո՞ւմ ընդդէմ
դարձաք արբունեաց, զի դոքա եկին պաշարեցին զմեզ եւ
կամեցան ջնջել զմեզ: Յայնժամ ասէ Խանն զՈւրդովարեցիսն.
Ո՞վ հրամայեաց ձեզ ելանել ի վերայ նոցա առ ի կողոպտել
եւ կորուսանել զնոսա. Եւ նոքա ափիբերան եղեն եւ ոչ կարա-
ցին տալ առ այն պատասխանի: Ապա ասէ ցնոսա Խանն. Ո՞վ
եղեւ ձեզ առիթ եւ առաջնորդ ելանելոյ ի վերայ նոցա: Եւ նո-
քա ասեն Սափի Ղուլին կապեցի՝ որդին Մանիչարի, եւ որ-
դին Ղազու Ուրդովարեցի, եւ որդին Շահ Իսլամին: Եւ կարեալ
Խանին զՍափի Ղուլին, խրատեաց զնա խստագոյն գանիրք
եւ էառ ի նոցանէ զտուգան, եւ զՄեղրացիսն արձակեաց խա-
ղաղութեամբ ի տեղիս իրեանց, եւ ինքն շուեաց զնաց ան-
տի:

Ապա այնուհետև սկսան Ուրդովարեցիքն առնել զհաշտու-
թիւն ընդ Մեղրեցիսն եւ խնդրեցին արձակել նոցա զՀամե
Շափին, եւ նոքա եւս խնդրեցին ի նոցանէ արձակել զգերիսն
զորս ի գիւղորէին ըմբռնեցին, եւ յանձն առին արձակել զնո-
սա: Յայնժամ գրեցին Մեղրացիքն առ զօրագլուխսն Ագուլեց-
ուց, որպէս զի ընկալցին ի յՈւրդովարեցոցն զեօթանասուն

անձինս Հայոց գերեցեալս ի նոցանէ, եւ ազդ արատցեն ին-
քեանց թէ ընկալան զնոսա, որպէս զի եւ ինքեանք արձակե-
ցեն զՀամի Շափին, եւ արարին այնպէս. եւ սոքա արձակեցին
զՇափին, եւ եղև այնուհետև խաղաղութիւն ի մէջ նոցա:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԿ
(Պատում Տէր Աւետիք Բաճանայի)

Ա.— Արդ՝ եկեալ Դաւիթ Պէկն ի Խափան 412 արամբ բա-
նակեցաւ ի տեղին որ կոչի Իջդէփէ, եւ անդ մարտեաւ զառա-
ջինն ընդ Ղարաչօռու, կոչեցեալ Թուրքաց, եւ յաղթեաց նոցա:
Եւ ապա եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր, եւ կո-
չեաց առ ինքն զառաջնորդն Տաթևու՝ զԿիրակոս վարդապե-
տըն, եւ զԴաբրիէլ վարդապետն եւ ժողովեաց ի վերայ իւր
զարսն տեղույն, եւ ասէ թէ եկեալ եմ աստ առ ի բառնալ
զԹուրքն ի միջոյ. եւ գնացեալ եհար զգիւղորէսն Թուրքաց, եւ
բերեալ զինչս եւ զստացուած նոցա՝ եկեր:

Բ.— Եւ զայն տեսեալ երեսուներկու ձիանշիրն կոչեցեալ
ցեղն Թուրքաց, եկին միաբան ի միասին ի Շնհեր՝ ի վերայ
Դաւիթ Պէկին: Իսկ նորա եւս ժողովեալ առ ինքն զարսն Շըն-
հերու, ել ընդ առաջ նոցա ի յԻջդէփէ, եւ անտի ետես զզօրս
թշնամեացն իբրեւ զվեշտաման հազարս, եւ ընդ ինքեան ա-
ռեալ զարս սպանաղէնս 400, յուսացեալ յԱստուած՝ գոչեցին
առ նա, եւ հարեալ ի դիմի նոցա՝ յաւուրս երիս՝ խորտակեցին
զնոսա, եւ առին զամենայն ինչ նոցա, զզէն եւ զերիվարս նո-
ցա: Յետ այսորիկ առաքեաց նա զՄխիթար զօրապետն իւր ի
շէնսն որ կոչիր Քուրդլար. եւ եկեալ նորա եհար կոտորեաց
զամենայն բնակիչս նորա զայլազգիս, եւ էառ զամենայն ինչս
նոցա եւ դարձաւ:

Գ.— Ընդ այնու ժամանակաւ էր ոմն Մելիք Տաթևու ու-
րացող, որ յառաջն կոչիր Դաւիթ, յետոյ ուրացեալ զՔրիս-
տոս հանդերձ տամբն իւրով կոչեցաւ Պաղեր, եւ որդիք նորա
ամենեքեան եղեն Շահ Ղուլի: Սա ժողովեալ զարսն Տաթե-

Ը.— Եւ եղև յետ այնորիկ առաքել զբազմութիւն զօրաց իւրոց ի վերայ Պարկուշատու, եւ ինքն մնաց սակաւոր ի Սիւսան գաւառի: Եւ ել ի վերայ նորա Խանն Նախիջեւանու շորեքտասան հազարաւ ի պատերազմ, եւ անկան ի նմին պատերազմի ի Հայոցն իննհարիւր այր: Եւ անտի եկն Դաւիթ Պէկըն ի Հալիճոր, եւ ժողովեալ զարտն տեղւոյն՝ գնաց ի Շիրակետ, եւ անդ ի շարխօսեղն զՊապայ զօրապետին՝ եհասա զգլուխ նորա: Եւ անտի գնաց ի Չանդուր, անդ եւս զօրածողով լեալ, եւ առեալ ընդ իւր զզօրսն՝ գնաց ի վերայ Թուրքին, եւ հարին կոտորեցին Շահապատկուր գիւղորէան, եւ զինչն նոցա առեալ եկին ի դաշտն Կոսմանու:

Թ.— Եւ այր եկն առ նա, եւ ասէ: Ահա Թուրքն Խափանու Ուրդուարու, Թավրիզու եւ Ղարատաղու քսան եւ ութն հազարաւ դիմեալ գան կամ ի Մեղրի եւ կամ ի Կենաուզն: Իսկ նորա լուեալ գայն՝ վաղվաղակի ժողովեաց զամենայն զօրս իւր եւ եկեալ քանակեցաւ ի Կալեր: Եւ ընդ այգն ընդ առաստաղն եհաս ի Լճկին, եւ սկսաւ պատերազմն: Եւ իբր էանց օրն թողեալ անդ զԹուրքն՝ եկն ի Փոխուրութայ սարն, եւ անտի ի Հալիճոր: Յայնժամ սկսաւ Թուրքն հարկանել զգիւղորայն կոտորել եւ ի գերի վարել, մինչև ի գալ նորա, եւ պաշարել զՄեղրի: Եւ յետ հինգ ամուր պաշարմանն՝ առին զգիւղորիկ թաղն: Յայնժամ հրեշտակս արձակեցին ի Կալեր, զօրապետացն, զալ օգնութիւն հասանել ինքեանց: Եւ ել գնաց գիշերվեալ անտի զամենայն զօրս տեղեացն՝ յառաւօտուն պահու հասին արանցն Մեղրու, եւ հարին կոտորեցին զամենայն զքանակն Թուրքաց, եւ թափեցին ի նոցանէ զամենայն գերեալն, եւ կալան զզխաւորն նոցա. եւ առին զբոլոր բանակ եւ անար բազում յոյժ: Չայս մեծ բարութիւնս արար Ստեփաննոս Վարդանէս Շահումբանէս, որոյ զգիտարէնն հատուցէ նմա Աստուած: Ուտի եւ Դաւիթ Պէկըն ըստ արժանեացն փառատրեաց զնա, տալով նմա գերիիր | եւ գիշխանութիւն երից Մեղրեաց, որպէս զի նա միայն իշխեսցէ եւ դատեսցէ զնոսա:

Արդ իբրեւ դայս ամենայն յաջողեաց նոցա Աստուած, կուշեալ Դաւիթի զզօրապետիսն իւր՝ առաքեաց զնոսա ի Ղազան-

կուտ սարն, ի վերայ Թուրքմանաց. եւ գնացեալ անդ գիշերայն՝ անկան ի վերայ ամենայն բնակչաց երկրին, եւ կոտորեալք զնոսա՝ առին զամենայն ինչ նոցա, վեց հազար երեք հարիւր ոչխար, եւ շորս հազար հարիւր երեսուն գալլ անասուն նոցա: Եւ մինչդեռ զհետ մտանէին փախստէիցն՝ պատահեցաւ միայնակ Մխիթար հազարապետն առաջի թշնամեացն, առ որ քարածիգ լեալ՝ կալան. իսկ նա աղաղակել սկսաւ թէ Թուրքն տանին զիս: Եւ իսկոյն աճապարեալ տէր Աւետին թափեաց ի ձեռաց նոցա: Եւ առեալ զամենայն գառ եւ զանար՝ դարձան ի Հալիճոր առ Դաւիթ, որոյ տեսեալ գայն ամենայն՝ ուրախ եղև յոյժ: Եւ յետ տասն ամուր՝ դարձեալ առաքեաց զզօրսն ի լերինս Կասպիլու, ի վերայ Թուրքմանին, որք գնացեալ հարին եւ զնոսա անդ, եւ առին զինչս նոցա եւ զանասուն 900, եւ դարձան ի Հալիճոր: Եւ յետ վեց ամուր՝ առաքեաց զնոսա ի վերայ բնակչաց գաւառին Պարկուշատու: Բայց զի Մխիթար հազարապետն խոռովեալ էր ընդ տեառն իւրոյ, իբրև գնացեալ զօրքն հարին զբնակիչս երկրին, եւ ել Բաթալի Խանն ընդդէմ նոցա, Մխիթարն փախեաւ: Իսկ Խանն կրճատեալ կոտորեաց ի սոցանէ 200 այր, եւ կալեալ զպարոն | Ստեփանն ածին կապեալս ի Պարկուշատ քաղաք: Եւ գայն լուեալ Դաւիթ՝ սրտմտեցաւ յոյժ ի վերայ Մխիթարայ, եւ հրամայեաց հատանել զգլուխն, այլ միջնորդեալ ոմանց՝ դարձուցին զվճիռ մահուանն: Իսկ պարոն Ստեփանն իբրև ածեալ եղև ի Պարկուշատ՝ գտաւ անդ ոմն բարեսէր Թուրք, որ զթացեալ ի նա՝ փախոյց. եւ լուեալ գայն Դաւիթ՝ ուրախ եղև եւ հրամայեաց երկու օր հանդիսութիւնս առնել: Նաև որդւոյ Մելիք Փարսաղանին Պալի զօրապետին գլուխն հատեալ էին, բայց ոչ զբոլորն, այլ մինչև ցկէս ուլանն, եւ նա այնպէս զգլուխն ի վերայ իւր կալնով՝ եկեալ եհաս ի տուն իւր զկնի շորից ասուրց: Եւ ոչ մեռաւ, այլ կենդանի է մինչև ցայսօր:

Յամի Տեառն 1724 եւ ի թոսոյն Հայոց ՌՃԶԳ, Ահմէտ Սուլտանն Օսմանցոց, որ բռնակալեալ ունէր ի պարսկական ժոցոյ Օվկիանու մինչև ցեղիպոտս եւ ցկուրիկէ եւ մինչ ցբոլոր ծովն Պոնտոսի, եւ զմեծ մասն Հայոց եւ զայլ բազում աշխարհս եւ զթագաւորութիւնս, իբրև լսէր զվտարումն Պարսից

արքային ի յաթոռոյն, խորհեցաւ յինքն գրաւել զտէրութիւնս
զայն: Ուստի հրամանս ետ իշխանի զօրուն՝ զօրաժողով լինել
յամենայն աշխարհաց, եւ զալ հասանիլ ի վերայ Պարսից, եւ
ունիլ զքաղաքս նոցա: Եւ նա ըստ հրամանի արքային ել ի
վերայ Պարսից անթիւ անհամար զօրօք, ի կողմանս մեծին
Հայոց, որ ի վիճակին Պարսից: Եւ ուր ուրեք հասանէին՝ առ-
տակէին զամենայն դիմակացս իւրեանց, եւ դառնային
բազում աւարաւ ամենայն զօրքն ամ ըստ ամէ, մինչեւ ի ընդ
զամենայն քաղաքս եւ զգիւղս իւրեանց ի րազմութենէ արա-
րաց եւ գերեաց՝ ի Հայոց եւ ի Պարսից: Բայց ո՞ կարէ պատ-
մել զաղէտս մարց եւ տղայոց ի ձեռաց անօրէն գերաց եւ
ցա, եւ զնոցին հարց եւ եղբարց անողորմ կոտորած: Արդ
սոքա իբրեւ այսպէս զօրացան ի կողմանս յայնոսիկ, եւ ա-
ռեալ զմայրաքաղաքն Երեւան՝ ի սուր սուսերի մաշեցին զա-
մենայն բնակիչսն:

Ժ.— Ապա յամի Տեառն 172(6) եւ ի թուոյն Հայոց
ՌՃՀ(Ե)¹ դիմեցին զալ հասանիլ յաշխարհն Սիւնեաց՝ որ այ-
ժրմ կոչի Խափան. յայնժամ ամենայն բնակիչք աշխարհի
զատան անջատան ի Դաւիթ Պէկէն, եւ եղեն անձնատուրք
Օսմանցւոց, եւ մնաց միայն Դաւիթ տասնեւեօթն սպառազի-
նօք ի Հալիձորոյ անապատն, եւ ընդ նմա երեք վարդապետք,
երեքտասան քահանայք², զհետ զնացին նորա նաեւ տէր Ա-
ւետն եւ Մելիք Փարսաղան:

ԺԱ.— Եւ ժամանակ ինչ կացեալ անդ, եւ յերեքտասանե-
րորդ աւուր քառասնորդաց պահոց եկին հասին ի վերայ նո-
րա Պէքիր փաշայն եւ արապ Ալի Փաշայն, ընդ ինքեանց ա-
ռեալ նաեւ զԲաթալի Խանն եւ զամենայն զԹուրքս եւ զՀայս
Խափանու եւ Պարկուշատու, զՀայսն Չանդուրու եւ Մեղրու,
զԹուրքսն Ղարաշօուրու, Փիսեանու, եւ այլն, իբր վացուն հա-
զարս սպառազինաց, եւ բանակեցան հանդէպ Հալիձորոյ:

¹ Չեռագրին մէջ, այս երկու թուականները կիսատ մնացած են, այսպէս
172 եւ ՌՃՀ. բայց յետոյ մէկը մատիտով լրացուցած է դարձնելով 1726
եւ ՌՃՀԵ. անշուշտ հետեւելով Գուլամիբեկանցի հրատարակութեան (տե՛ս
Անդ, էջ 43):

² Չեռ. գ վաթադասիւս, ժգ քահանայք:

Իսկ որք ընդ Դաւիթ էին հարիւր վաթսուն սպառազէն՝ եկին ի
գետափն Հալուձորոյ, եւ յիսուն մի ի նոցանէ ձակատեցան ընդ-
դէմ բանակի նոցա. բայց յետ երկուց աւուրց՝ թուփանքաւոր-
քն Հայոց անցին որք ընդ Օսմանցոցն էին, խրամատեալ
զսոսա դիմեալ մտին ի շէնն: Յայնժամ Դաւիթ եւ որք ընդ
իւրքն էին՝ դիմեալք ամրացան ի յամուրն անապատին, եւ
անտի մարտ եղեալ կոռէին աւուրս հինգ, եւ անկանէին ի
կողմանցն հակառակաց յաւուրն երեք հարիւր կամ շորս հա-
րիւր մարդ: Ի սոցանէ հազիւ մի ոք: Եւ ի յաւուրն վեցերորդի,
որք ի ներքս էին՝ կարգեցան կազմեցան պատրաստեցան եւ ա-
ռեալ ընդ ինքեանս զԱջ սրբոյն Միսասայ՝ եկին արտաքս. իսկ
որք ի ներքս մնացին եպիսկոպոսք, քահանայք եւ կուսանք
ամենեքեան մտեալ յեկեղեցին՝ առ Աստուած գոչէին, եւ հըն-
չեցուցանէին զզանդակսն. եւ ի յութիւրոք ժամու աւուրն՝ սո-
քա յանկարծակի զազանաքար յարձակեցան ի վերայ ամե-
նայն բանակի նոցա, յաջ եւ ահեակ կոտորելով զզրդեցին
զբոլոր բանակն Թուրքաց, եւ սկսան փախուստ առնուլ ի սո-
ցանէ, եւ զայն տեսեալ՝ եկին արտաքս նաեւ տէր Աւետիսն եւ
Միսիթար զօրապետն, եւ զհետ մտեալ նոցա՝ հասանէին հար-
կանէին եւ ցրուէին զնոսա, մինչեւ ոչ մնալ երկու ի միասին.
Եւ յաւուր յայնմիկ տապաւտ արկին ի նոցանէ երեք տասան
հազար սպառազէն, եւ առին զբանակ նոցա, եւ հարիւր քա-
ռասուն եւ ութն դրոշակ, եւ մեռան ի սոցանէ յոյժ սակաւ ո-
մանք:

Ահա այսպիսի մեծամեծք են գործքն Աստուծոյ, սպրե-
ցուցանել ի ձեռն սակաւուց՝ ի բազմութենէ բիրաւոր հեծելոց՝,
զի յաղթութիւն պատերազմի ի ձեռս Աստուծոյ է, եւ ում կա-
մի՝ նմա շնորհէ. արդ՝ եթէ անհաւատից եւ բարբարոսաց
շնորհէ սակաւուք յաղթել բազմաց, ապա ո՞րչափ եւս բարե-
պաշտ քրիստոնէից, որք հաւատով դիմեն առ նա:

Արդ՝ իբրեւ ետես Դաւիթ թէ Աստուած օգնական է իւր,
խնդրէր այնուհետեւ տալ պատերազմ ընդ Օսմանցոց, եւ ա-
ռաքեաց առ Խանն Տուզալի Քեղում զՄիսիթար հազարապետն
եւ զտէր Աւետիսն՝ վաթսուն եւ վեց արամբ, եւ ասէ. Ե՛կ
միաբանեալ տացուք պատերազմ ընդ Օսմանցոց: Եւ եկեալ
գտին զԽանն ի շէնն Քուրդաշեան, եւ պատմեցին նմա զբանն,
բայց նա երկեաւ առնել զայն. իսկ եղբայր նորա Խե-
քաղում ջանայր հաւանեցուցանել, եւ մինչդեռ ընդ այս վի-

ճէին, զօրքն Օսմանցոց եկեալ լցին զքաշտն Կրչեվանու: Եւ
ասեն Մխիթարն եւ տէր Աւետն ցնանն. Դիմեցուք ի վերայ
նոցա: Բայց նա երկեալ, եւ ոչ կամեցաւ զալ. յայնժամ սորա
վաթսուն եւ վեց արամբն սակաւ ինչ պատահեալ նոցա՝ ան-
ցին գնացին, եւ զօրքն Օսմանցոց մտին ի Մեղրի, քսան եւ
երկու հազար վառեալք: Եւ իբրեւ ընդ երեկս եղեւ՝ Մխիթարն
եւ տէր Աւետն շորս արամբ եկին ի յայդեստանս Մեղրու եւ
ժողովեցին զամենայն փախստեալսն Մեղրացոց անդէն. Խա-
նըն եւս առաքեաց յիսուն վառեալ, եւ զիրեանց զօրսն եւս
եղին ի դարանի ի գոխն Մեղրայ, եւ ինքեանք սակաւոր
ի գիշերի մտին ի Մեղրի. եւ զօրացն պատուէր տուեալ էր
նոցա, զի ընդ լուսանալն՝ դիմեցեն ի քաղաք անդր, եւ իբրեւ
առաւօտ եղեւ, իւրանց զօրքն ոչ հնարին, բայց Օսմանցոցն իմա-
ցեալ զայն ամենայն, հեծան պատրաստեցան, եւ սկսան մեկնիլ
ի քաղաքէն. եւ Մխիթարն, տէր Աւետն, եւ որք ընդ նոսա-րու-
կրսան ի ներքս հարկանել զվիրաւորս ի յՕսմանցոց, եւ հարին
սատակեցին գհարկահանն: Եւ յայսմ վայրի որ ի ներքո, որ ար-
տաքս ի դարանին, հասանէին հարկանէին զՏաճիկան եւ վան-
էին: Բայց զի զօրքն Հայոց, որոց սպասէին, ոչ ժամանեցին,
ասեն ցնանն. Ե՛կ ընդ մեզ, գնացեալ առցուք ի յԱզունպատ
զանցս նոցա: Ի յայն բան հասին զօրքն Օսմանցոց, եւ Խանն
փախեալ, եւ սորա կալան զանցս Օսմանցոց, եւ նորա նեղեալ
ի յԵրասխն դիմեցին՝ անցանել, եւ սոցա ի վերայ հասեալ՝
զբազումս ի գետն հեղձին՝¹ եւ զբազումս առ ետեղ սատակե-
ցին: Եւ անտի դարձեալ գան ի Մեղրի, եւ գտանեն անդ զան-
համար կառափս Թուրքաց, եւ զամթիւ ինչս նոցա՝ ձիս, ջո-
րիս, իբր շորս հարիւր տաղանորոյ ինչս: Զբեռն հարկահանին
բացին եւ գտին անդ երեսուն եւ երկու հազար թուղթս հար-
կաց, եւ զԴաշդաց նորվէլն սպանին վասն ուրանալոյն ըզ-
Քրիստոս:

Ապա յետ այսորիկ իբրեւ ժամանակ ինչ էանց, եկն եւ
եհաս սապատակիչ Փաշայն, եւ բանակեցաւ ի Բեղ գեղն, մի
շաբաթ, եւ դոչ ինչ կարաց աննել: Եւ սորա ի գիշերի միում
հասին ի վերայ նոցա, հարին կոտորեցին եւ զՓաշայն փա-
խըստական արարին:

Յետ այսորիկ ութն հարիւր օսմանցի եկին ի Պարկուշատ.

առ ի գնալ ի Տաթեւ: Զայն լուեալ սոցա՝ գիշերայն գնացեալ
բանակեցան ի լեռն, որ կոչի Օբուգեարաթ, եւ կալան զճա-
նապարհս նոցա, եւ ի յառաւօտուն պահու, իբրեւ հասին անդ,
պատահեալ նոցա՝ առին զամենայն ինչս նոցա եւ սպանին ի
նոցանէ իբր երեսուն եւ վեց սպառազէն, եւ զեօթն այր եւս
գերեալ բերին ի Հալիձոր: Ապա միւս այլ եւս զօր եկն Օս-
մանցոց, եւ բանակեցաւ ի գեօղ մի Թուրքաց, մերձ է Ման-
լեւ, զնոսա եւս ի գիշերի ի վերայ հասեալ կոտորեցին, եւ
միայն զերկուս ի նոցանէ կենդանի բերին ի Հալիձոր:

ԺԲ.— Արդ իբրեւ ետես Դաւիթ Պէկն յամենայն ուրեք ըզ-
թշնամիսն իւր առաջի իւր վանեալս, առաքեաց Շահ Թամա-
զին երկուս բեռնս զխովք սպանեցիւոց: Իսկ նա եւս առա-
քեաց սմա մի նժոյգ ձի, մի փաշալամ եւ իւրաքանչիւր զօրա-
պետացն մի մի վերարկու, եւ զիշխանութիւն հատանելոյ
զորամ: Գրեաց նաեւ զհրովարտակ եւ ասէ. Որքան Խանք գոն
ի կողմանսդ յայդոսիկ, գլխատրն լիցի Դաւիթ Պէկն, եւ գնա-
ցեալ ի բաց հանցէ զՕսմանցին յերկրէն իւրմէ: Յայնժամ ե-
կեալ կալաւ զՄեղրի, եւ առեալ զզօրսն Մեղրու եւ Զանդու՝
գնացեալ բանակեցաւ ի շէնն Կէշիվանու, եւ առաքեաց զզօ-
րապետսն ի վերայ Ուրդովարու: Եւ սորա գնացեալ հասին ի
վերայ քաղաքին, ի ժամ գիշերոյ, եւ հարին ի նոցանէ իբր
երեք հարիւր այր. եւ մնացեալքն փախեան եւ գնացին, բա-
ռեալ զաւարն եւ արկին սեղանս՝ զի կերիցեն եւ արբցեն:
Յայնժամ վերահասեալ Դաւիթ բարկացաւ ի վերայ նոցա եւ
ասէ. Օսմանցին բանակ առեալ բանակի անդէն, եւ դուք նըս-
տեալ ոտէք եւ ըմպէք: Եւ նոցա թողեալ զուտեղն՝ դիմեցին ի
վերայ Օսմանցոցն: Իսկ նորա զառաջիւն իբրեւ տեսին, գի-
տացին թէ զօրն Պարսից է եւ յարձակեցան ի վերայ սոցա.
Եւ իբրեւ զփորձ առին եւ գիտացին թէ այն է զօրն | Դաւիթ
Պէկին, փախեան եւ եկին սորա ի Դաշտուն, եւ արք տեղոյն
այնորիկ փախուցեալ անկան Ազուլէս քաղաք Հայոց: Իսկ տէր
Աւետիսն եւ Մխիթար սպարապետն հարեալ եւ փախուցեալ
զՕսմանցին, առին ի նոցանէ զբազում ջոկս ձիոց եւ ջորեաց:
Եւ անտի եկին Մխիթարն եւ տէր Աւետիսն ի յԱզուլէս, իսկ
արքն որք պահէին զմեծ դուռն քաղաքին, իբրեւ տեսին զնո-
սա՝ փախեան. եւ սոցա գնացեալ ի վաճառատեղն քաղա-

¹ Ձեռ. գրագում ի գետն հեղձցին:

քին՝ գտին զհարկահանն Օսմանցոց փախուցեալ, եւ գնացեալ անտի բանակեցան ի վանս սրբոյն Քովմայի առաքելոյ, եւ անտի տեսին արտաքս ամբոխ շփոթի. եւ ձի կալեալ երկու ոմանք ի նոցանէ եկին արտաքս, եւ գիտացին զի ոմն ի Քուրբաց յափշտակեալ զոմն զերի վարէր, եւ պնդեցան զհետ նորա, եւ նորա թողեալ զգերեալն՝ փախեալ: Արդ՝ սակաւ ինչ կացեալ անդ, տեսին զի Դաւիթ Պէկն եւս հմուտ յԱգուլէս, եւ եկին առ նա. եւ նա իւրաքանչիւրոցն զգեցոյց զմի մի պատմուճան. եւ վերստին դարձան բանակեցան ի սուրբն Քովմաս. իսկ արք քաղաքին եկեալ համբուրեցին ամենեքեան զձեռն Դաւիթ Պէկին՝ ըստ սովորութեան նոցա: Եւ իբրեւ եկն մեկիք Մոսին՝ որ տիրէր ի վերայ քաղաքին, եւ յանդիման եղև նմա, ասէ Դաւիթ ցարս իւր. Հատէք զզուս դորա ի զիշերիս յայսմիկ, զի այր նենգատր է դա: Բայց մեկիք Փարսադան արգել զպէս, եւ ասէ՝ Ոչ է այնպիսի ոք սա: Եւ մնացեալ սոցա ի քաղաքի անդ զաւուրս տասն, եւ յայսմիկ միջոցի Օսմանցին երիցս դիմեաց ի վերայ Դաւիթի, եւ երիցս խորտակեցաւ և յանյաղթելի քաջ զօրաց սորա: Ազա յետ այսորիկ արքայն Պարսից Շահ Քամաս առաքեաց յօգնութիւն Դաւիթի զերիս խանս, եւ վերստին դիմեաց Օսմանցին եւ խորտակեցաւ ի սոցանէ: Սակայն իշխանքն Ագուլէսի ծածկապէս դաշնադիր էին ընդ Օսմանցոց, եւ սորա ոչ գիտէին. եւ յետ երկուց աւուրց՝ եկին հասին բազմութիւն զօրացն Օսմանցոց ի դաշտն Մարագու, եւ բաժանեցան յերիս առաջս: Իսկ որք ընդ Դաւիթի էին՝ նորա եւս բաժանեցան յերիս առաջս, խանքն Պարսից ի մի կողմն, տէր Աւետիսն եւ որք ընդ նմա էին՝ ի միւս կողմն, այսինքն՝ ի կողմն Երասխու, եւ մնացեալ զօրքն Հայոց ի մէջ երկուցն: Արդ իբրեւ խմբեցան ի պատերազմ, խանքն Պարսից փախեան յերեսաց Օսմանցոց, բայց զօրքն Հայոց պինդ կացին հարին եւ վանեցին զՕսմանցին, եւ իբրեւ փախստականս արարին զնոսա, եւ ապա պնդեցան զկնի խանիցն (մինչդեռ փախստեալ երթալին նորա ի Քամուլէզ), հասին նոցա եւ դարձուցին զամենայն զօրս նոցա, եւ բերին ի յԱգուլէս. բայց երկու խանքն փախեան: Իսկ սոցա հասեալ կալան զերկուս տիկնայս նոցա, հանդերձ քսան եւ երկու աղախանեօք եւ ծառայիւք նոցա, եւ առաքեցին զնոսա ի Հալիճոք: Արդ՝ յետ այսորիկ իբրեւ երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլէսի եւ Մեկիք Մոսին զգաւաճանութիւնս իւրեանց

յայտ արարեալ՝ գրոհ տուին ի մէջ քաղաքին եւ արձակել սկսան ի վերայ զօրացն Դաւիթի թօփս: Իսկ նոցա խնայեալ ի նոսա (վասն զի ամենայն քաղաքացիքն էին հայ, եւ ոչ ոք այլազգի գոյր անդ), խուսափեցին ելին արտաքս քան զքաղաքն, եւ մինչդեռ ի ներքս սորա պաշարեցեալ էին, ասէ Մեկիք Փարսադան ցօրսն. Մի՛ ինչ արձակէք հրացանս, զի ասհա քաղաքապետն ելանէ արտաքս: Եւ իբրեւ ել քաղաքապետն, այսինքն՝ Մեկիք Մոսին արտաքս, սորա հարեալ սպառնին զնա թոփով: Եւ անտի շուեցին զնացին ի գիւղ մի Քուրբաց, ուր էին հազար երեք հարիւր ոչխար սպանգանոցի Ագուլեցոց. զամենեւին զնոսին ածին ի Մեղրի: Եւ յետ երկուց աւուրց՝ զօրականքն Դաւիթի վերստին եկին յԱգուլէս, եւ հասին որ ինչ էր արտաքուլ քաղաքին, եւ գնացին ի Մեղրի, եւ անտի անցին զնացին ի Հալիճոք եւ բանակեցան անդ:

Արդ՝ իբրեւ եկին ի Հալիճոք, առաքեաց Դաւիթ Պէկն զտէր Աւետիսն առ զօրականսն, որք էին ի Չանդուր. իսկ նորա մերժելին զԴաւիթ եւ ոչ լուան նմա: Եւ նորա եկեալ ծանուցց Դաւիթն հապտամբիւն նոցա ի նմանէ, եւ թէ որպէս կացեալք են ի վերայ ինքեանց զկառավարս Օսմանցոք. Յայնժամ հրամայեաց Դաւիթ շորեքտասան զսրազխացն իւրոց երթալ կալնուլ եւ կապեալս ածել զնոսա առ ինքն: Եւ ելին կազմեցան պատրաստեցան, ձի հեծան եւ գնացեալ հարին եւ կալան զզօրականս եւ զՕսմանցի ոստիկան կառավարն նոցա, եւ ածին ի Հալիճոք առ Դաւիթ. եւ նորա մատուցեալ առաջի նորա՝ երդմնի եղեն նմա թե այսմհետէ քեզ հնազանդիմք յաւիտեան: Եւ նորա հաւատացեալ նոցա՝ զերկու զօրականս առ ինքն եթող, եւ զայլսն ետ ի ձեռս տէր Աւետին, զի ի ներքոյ իշխանութեան նոքա լինիցին: Եւ նորա առեալ տարաւ զնոսա ի Չանդուրն եւ արձակեաց զնոսա ի տունս իւրեանց:

Եւ յետ այսորիկ իբրեւ շորք աւուրք ի վերայ անցին, ելին Բաթալի խանն, եւ զօրքն Օսմանցոց, եւ հարին զերիս գիւղս Հայոց ի գիշերի, եւ կալեալ զերիս զօրապետս՝ ածին ի Պարկուշատ. եւ յետ երկուց աւուրց, իբրեւ լուաւ տէր Աւետիսն՝ ժողովեաց զզօրսն իւր, եւ գնացեալ ի գիշերի եհար զնոսա, եւ կալաւ զերկու թուրք զօրականսն, եւ զամենայն ինչս նոցա էած ի Չանդուր:

ԺԳ.— Եւ ի ժամանակի յայսմիկ մեռաւ Դաւիթ Պէկն խա-

դադութեամբ ի տան իւրում, յամի Տեառն 17(28) եւ ի Թուին
Հայոց ՌՃ(Հէ)¹, ի յամսեանն:

ԺԳ.— Արդ՝ իբրև վախճանեցաւ Դաւիթ Պէկն, զօրականքն
ամենեքեան միաբանեալք կացուցին ի վերայ ինքեանց իշխան
զՄխիթար զօրագլուխն: Բայց զկնի միոյ տարւոյ, վասն զի
զօրականք միմիանցն ոչ հպատակեցան, ուստի Օսմանցին ե-
կեալ էառ զբերդն Դաւիթ, եւ գերի վարեցին զամենայն բնա-
կիչսն նորա. իսկ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ՝ դնաց
վերստին զօրս գումարեալ ի Հայոց եւ Թուրքաց, վերստին
խորտակեաց զՕսմանցին, եւ դարձոյց յետս զբաղարան եւ
զամուրս ի նոցանէ: էառ եւ զՈւրդուար քաղաքն եւ կոտորեաց
զամենայն որ ինչ էր ի նմա, եւ էառ զաւար բազում յոյժ, եւ
զհարիւր վաթսուն բեռննս ուղտուց: Եւ ինքն դարձ արարեալ
անյտի, եկեալ ժամանակ ինչ բնակեցաւ ի յամուրն Խնձոր-
էկս. եւ անդ իւրոց զօրացն հարեալ թափով սպանին². եւ
վաղվաղակի Հայոցն հատեալ զգլուխ նորա՝ տարին առ Փա-
շայն Թավրիզու. եւ նա ըստ արժանեացն հատոյց նոցա, հա-
տանելով զգլուխ անզգամացն, եւ ասէ. Զիա՞րդ իշխեցիր ք-
այդպիսի քաջ այր սպանանել ի զուր տարապարտուց: Եւ տէր
Աւետիսն յայնմիկ ժամանակի փախուցեալ զայ ի Գաղա-
տիա(յ), եւ անտի դիմէ առ Սրբազան Հայրապետն Հռոմայ
եւ առնու զնկերումն³:

Այսոքիկ էին զօրավարք եւ զօրապետքն Դաւիթ Պէկին,
մինչ էրն ի Շնհեր. Մխիթարն, մեծ Կորկին, վրացի Յօհան-

¹ Ձեռագրին մէջ այս երկու թուականները կիսատ մնացած են, այսպէս
17... ՌՃ... բայց յետոյ մէկը մատիտով լրացուցած է, դարձնելով 1728
եւ ՌՃՀէ, անշուշտ հետեւելով Գուլամիրեանցի հրատարակութեան (ամս
Անդ, էջ 68):

² Ձեռագրին մէջ այստեղ դրուած է ԺԳ. բաժանումը, զոր մենք զետեղե-
ցինք 12 տող աւելի վեր, ըստ իմաստին, աւելի տրամաբանական բաժա-
նում մը ստեղծելու նպատակով:

³ Ձեռագրին մէջ կան սրբազորութիւններ այս վերջին նախադասութեան
մէջ, զոր կրկին կը գնենք հոս, ընդգծելով եւ փակագծի մէջ առնելով այն
բառերը՝ որոնք մեկանով եղծուած են, վրան գծծ քաշելով. «Եւ տէր Աւե-
տիսն յայնմիկ ժամանակի փախուցեալ (ժամանակ ինչ բնակեցաւ) գոյ ի
Գաղատիա, եւ անտի (եկեալ ի Վենետիկ) դիմէ առ Սրբազան Հայրապետն
Հռոմայ եւ առնու զնկերումն»:

նէսն, Բանդուր Զաքարիա իշխանն, փոքր Կորկին, Աւրանտել
իշխանն Պայինտուր իշխանն Վրացի (այդ սոքա Վրացի ա-
սին, ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ եթէ էին ի Վրաց
ազգէն, վասն զի Դաւիթ եւ ամենայն զօրավարք եւ զօրքն իւր
էին ի յազգէ Հայոց). դարձեալ Մատուրն, Ղարակեօզն, Թա-
թէտան, Եղիազարն, Յարութիւնն եւ այլն. այսքան զօրօք...:

Որք ի Շնհեր բնակէին քաջ զօրավարքն Դաւիթի, էին այ-
սոքիկ. Պուան զօրապետն, Պակի զօրապետն, Մինասն, Ստե-
փաննոսն, եւ ընդ նոսա 550 զօր:

Որք ի Տաթեւ էին այսոքիկ. Ղիշին, Այտին, Եսային, Տի-
րացուն, Սիմէոնն, Ապկարն, եւ ընդ նոսա 400 զօր:

Որք ի Զանդուր գաւառին՝ էին այսոքիկ, Թորոսն, Վար-
զանն, Մարսաթան, Նուպարն, Թովմասն, Թուրինջն, Յօհան-
նէսն, եւ ընդ նոսա 2000 զօր:

Եւ ի Կարիւր էր Պապ զօրագլուխն, եւ ընդ նմա 700 զօր:
Իսկ Ստեփաննոս Վարզանէսեանն, որ ի տանէն Շահումեանն,
էր սպարապետ եւ տեղակալն Պապայ, եւ էր սիրելի յաչա Դաւ-
թի, վասն իւրոյ քաջութեան եւ ազնուականութեանն. ուստի
եւ նմա յետոյ նաեւ զիշխանութիւն եւ զկալուածս երկից Մե-
լիքաց:

Եւ ի Մեղրի էին այսոքիկ զօրավարք. այսինքն՝ Կոստան-
դին, Յօհաննէսն, Սարին, Առաքելն, եւ ընդ նոսա 400 զօր:
Սոքա զգէմ կալան ութուտասան հազար զօրացն ի յամուր
աւանն Մեղրեայ, եւ ի գիշերի միում սակաւութի վերայ յար-
ձակեցան ութուտասան հազարացն, եւ ետուն նոցա զմեծա-
մեծ հարուածս:

Յետ այսորիկ որդիքն Մաղաջուղին եւ Տիլէնչի մականուա-
նելոյն էին, շորեք հարիւր արամբք:

Զօրավարն Սիսանայ՝ հինգ հարիւրով:

Մէլիք Ղուշում՝ երկու հարիւրով:

Աւշար երէցն, որ եւ կոչի տէր Գանպար, երկերիւր յիսնաւ:

Ատոմ զօրավարն Պողաբերդու՝ հարիւր յիսնաւ:

Ղազար զօրավարն Կուլաբերդին՝ հարիւր տասամբք:

Սարգիս զօրավարն Շիվանու ձորոյն՝ երկերիւր յիսնաւ:

Մելիք Փարսազան ի Հալի ձոր երկրին՝ երկերիւր յիսնաւ:

Եւ տէր Աւետիսն ի նոյն Հալի ձոր՝ շորեք հարիւր վաթ-
սուն եւ ութն արամբք:

Տէր Աւետիս արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որ
պէս եւ ի պատմութեանս իսկ տեսանի. զի էր կարի քաջ եւ
արիասիրտ եւ զօրաւոր յոյժ՝ բանիւք եւ գործովք. եւ վասն
այսորիկ նա յորմէ հեռէ հեռացեալ ի հայրենի երկրէն պան-
դրխտեցաւ ի Գաղատիայ, բազումք յորդորէին զնա ի հայրե-
նի նորին գաւառէ՝ անդրէն դառնալ առ նոսա եւ պաշտպա-
նել զերկիրն զայն. բայց նա հրաժարէր յաղազս պատուոյ
իրոյ քահանայական կարգին, որպէս եւ ոմն յարգելի երե-
ցանց անտի գրեաց առ նա զայս ոտանաւոր առ նոյն յոր-
դոր:

Ի նուագիլ Հայոց ազգի,
Ի դառն եւ նեղ ժամանակի,
Յաղթող զօրեղ երեւեցար,
Քաջ զինաւոր տէր Աւետիս:
Սարսին ի քէն ազգն Տաճկաց,
Զի յաղթեցեր նոցին զօրաց,
Զարքայական զէնն Քրիստոս,
Տէր Աւետիս, քեզ պարգեւեաց,
Արիական զօրօք քոյին,
Յաղթեցեր շար Գրիգորին,
Զի ուրացաւ ըզՔրիստոս,
Դու կտրեցեր զլուխ նորին:
Հասեր արագ բերդն Մեղրին,
Սատակեցեր ըզՆարաճին.
Երեսն հազար թուղթ Նարաճին
Այրեցեր ի մէջ կրակին:
Ազնիւ զօրօք քաջ եւ ընտիր,
Ազուլեաց դաշտն ճէպէիր.
Անարգողաց սրբոյ Նաչին,
Տէր Աւետիս վրէժխնդիր,
Կրկին խնդրեմք արիանալ,
Պալի Պէկին զինուորանալ.

Հայոց ազգին թեւ եւ թիկունք,
Տէր Աւետիս, բարեաւ երթաս:
Էրէցս ապիկար անարժան,
Խնդրեմք սրբոցն համանգամայն.
Նաչեալ Աստուած, Տէր իմ Յիսուս,
Տէր Աւետիս քեզ պահապան:

¹ Սոյն քերթուածը հրատարակած է Հ. Եղիա Վրդ. Փէլիկեան (տե՛ս
Բազմավէպ (19) 1938, թ. 6—9, էջ 187):

Առաջաբան	5
Գլուխ առաջին	16, 17
Գլուխ երկրորդ	28, 29
Գլուխ երրորդ	52, 53
Ցանկում	86

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայագիտական հետազոտությունների լաբորատորիան

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Աղայան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխնիկական խմբագիր՝ Ա. Մ. Գյուլգյուլյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Մ. Գ. Յավրյան, Ս. Վ. Գազարյան

Հանձնված է շարվածքի 12.04.1991 թ.: Ստորագրված է տպագրության 27.04.1992 թ.: Չափեր՝ 84 × 108¹/₃₂: Թուղթ՝ № 2 տպագր.: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական մամուլ: Տպագրական 3,5 մամուլ = 5,88 պայմանական մամուլի: Տպաքանակ՝ 10000: Պատվեր՝ 426: Գինը՝ պայմանագրային:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մոսկվայի պ. № 1:
Издательство Ереванского университета. Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյանի պ. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, № 52.

Գինը՝ պայմանագրային

9(47.925)

Ն-33

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ